


Հ.Ժ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



**ԱՆՎԱՆԻ ԶԻՆՎՈՐԱԿԱՆԸ
ԵՎ ՏԵՍԱԲԱՆԸ.**

**ՍԱՐԳԻՍ ՎԱՐԱԳԻ ՍԱՐԳՍՅԱՆԻ
ԿՅԱՆՔԸ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ
ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ
(1899-1981ԹԹ.)**



355(49.925)

7-42

72

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

Հ.Ժ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՆՎԱՆԻ ԶԻՆՎՈՐԱԿԱՆԸ ԵՎ ՏԵՍԱԲԱՆԸ
ՍԱՐԳԻՍ ՎԱՐԱԳԻ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԿՅԱՆՔԸ
ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

(1899-1981թթ.)

6326

 **ԼԻՍՈՒՇ**
ՀԱՍՏԱՐԱՊԻՏՈՒՄ
ԵՐԵՎԱՆ - 2021



ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ
УНИВЕРСИТЕТ

ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

КАФЕДРА ИСТОРИИ АРМЕНИИ

А.Ж. АРУТЮНЯН

ЗНАМЕНИТЫЙ ВОЕННЫЙ И ТЕОРЕТИК. ЖИЗНЬ И
НАУЧНОЕ НАСЛЕДИЕ САРКИСА ВАРАКОВИЧА
САРКИСЯНА (1899-1981ГГ.)

ЕРЕВАН - 2021

YEREVAN STATE UNIVERSITY

FACULTY OF HISTORY

CHAIR OF THE HISTORY OF ARMENIA

H.ZH. HARUTYUNYAN

FAMOUS MILITARY AND THEORETIST. LIFE AND
SCIENTIFIC HERITAGE OF SARKIS VARAKOVICH
SARKISYAN (1899-1981)

YEREVAN - 2021



Ս.Վ. Սարգսյան (1975թ.)

Տպագրվում է ԵՊՀ Պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագիր՝ պ.գ.դ., պրոֆ. Է.Գ. Մինայան
Գրախոսներ՝ պ.գ.թ., պրոֆ. Ա. Հ. Հարությունյան
պ.գ.թ., դոց. Մ.Ա. Մախչադյան
պ.գ.թ.՝ Տ.Կ. Գեորգյան

Հարությունյան Հ.

Հ 422 Անվանի զինվորականը և տեսաբանը. Մարգիս Վարագի Մարգսյանի կյանքը և գիտական ժառանգությունը (1899-1981թթ.) / Հ. Հարությունյան.- Եր.: Լիմուշ հրատ., 2021.- 144 էջ:

Պաշտոնաթող զինապետ՝ Մարգիս Վարագի Մարգսյանն անցել է ոչ միայն փայլուն ռազմական ուղի, այլ նաև մեծ գործ է կատարել հայագիտության մեջ: Նա հեղինակել է միայն մեկ մենագրություն, որը մեծ երևույթ է իրադարձություն էր հայ ռազմարվեստի պատմության ուսումնասիրության մեջ: Նրա կողմից առաջին անգամ փորձ է կատարվել և գրվել հեագույն և վաղ միջնադարյան հայ ռազմական արվեստին վերաբերող ուսումնասիրություն, որտեղ հարցերը քննարկված և վերլուծված են միայն բուն ռազմա-ստրատեգիական տեսանկյունից: Այդ պատճառով էլ այս աշխատանքը եզակի է ոչ միայն հայագիտության, այլև համաշխարհային ռազմարվեստի պատմագրության մեջ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Մուրազ Մարուխանի Մարգսյան – Կարևոր և վաղուց սպասված աշխատություն.....	7
Հեղինակի կողմից.....	9
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	11
ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ - ՊԱՆԾԱԼԻ ՈՒՂԻ, ՈՐՈՎ ԿԱՐՈՂ ԷՐ ՀՊԱՐՏԱՆԱԼ ՅՈՒՐԱՔԱՆԱՉՅՈՒՐԸ.....	23
ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ - ԲԱՆԱԿԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱԳԱՐԸՆ ՀԱՄԱՉԱՑՆ Մ.Վ. ՍԱՐԳՍՅԱՆԻ.....	39
Ա. / Նախագիտելիք.....	39
Բ. / Երվանդական Հայաստանի բանակը.....	52
ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ – ԱՐՏԱՇԻՍՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԱԿԸ.....	58
Ա. / Հայոց զորքը Արտաշես I-ի օրոք.....	58
Բ. / Տիգրան II Մեծի բանակը.....	63
Գ. / Հայոց զորքը Տիգրան II Մեծի հաջորդների օրոք (մ.թ.ա. 55-մ.թ. I թթ.).....	70
ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ – ԱՐՇԱԿՈՒՆՅԱՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԱԿԸ.....	74
Ա. / Հայոց զորքը Արշակունիների գահակալման առաջին էտապում (52/66-226 թթ.).....	74
Բ. / Հայոց զորքը Արշակունիների գահակալման երկրորդ էտապում (226-428 թթ.).....	85
Գ. / Հայոց զորքը հետարշակույցյա ժամանակաշրջանում կամ բանակը պետականության բացակայության պայմաններում (428 թ. մինչև VII դ. սկիզբ).....	95
ՎԵՐՋԱՒԱՆ.....	106
ЗАКЛЮЧЕНИЕ.....	108
SUMMARY.....	111

Օգտագործված աղբյուրների և գրականության ցանկ.....	114
Հավելված. Հին աշխարհի և վաղ միջնադարի ռազմարվեստին նվիրված աղբյուրների և ուսումնասիրությունների ցանկ.....	126

Հապավումներ.....	140
СОДЕРЖАНИЕ.....	141
CONTENTS	143

ԳԱՐԵՎՈՐ ԵՎ ՎԱՂՈՒՑ ՍՊԱՍՎԱԾ
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ

Հին հայկական ռազմարվեստին նվիրված ուսումնասիրությունները այսօր ևս կարելի է հաշվել մատների վրա: Դժվար էր պատասխանել այն հարցին, թե որտեղ պետք է փնտրել վերջինիս գաղտնիքը: Գարեղի է պնդել, որ այս ասպարեզում շրջադարձային նշանակություն ունեցավ 1969թ., երբ ԽՍՀՄ ԶՈւ պաշտոնաթող գեղապետ Մարգինս Կարգյի Սարգսյանի կողմից հրատարակվեց «Հայ ռազմական արվեստի պատմությունից» (Երևան, 1969 «Հայաստան» հրատ., 219 էջ) գիրքը, որը ուղղակի կարելի է անվանել սպասված ուսումնասիրության: Քանի որ հեղինակն անցել էր մի քանի պատերազմների քառուղիներով (1914-1945թթ., ընդամեններով), ապա նա մի կողմից հմտորեն տիրապետում և հասկանում էր ռազմական գործը, իսկ հակառակ եզրից բավականին լավ ծանոթ էր մեր պատմիչ-մատենագիրների աշխատություններում պահպանված վկայություններին:

Անխառն հասկանալի է, որ ոչ մի համեմատության եզրեր չի կարելի տեսնել հին հայկական և, Առաջին ու Երկրորդ աշխարհամարտերի ռազմա-տեխնիկական խնդիրների միջև: Այս ասումով օրինակ երբեք իրար հետ անկարելի է համեմատել ասենք մ.թ.ա. 69թ. Տիգրանակերտի և 1943թ. Գուրսկի ճակատամարտերը: Սակայն, երբ խնդրին մոտենում ես ռազմաստրատեգիական տեսանկյունից, ապա հարցերի մեկնաբանությունները ամենալավագույն և ամենապարզ մոտեցումներով կարող են մեկնաբանվել առաջին հերթին գինվորական կրթություն ստացած և պատերազմների դառնության «համը» տեսած հետազոտողները: Ահա հենց այստեղ էր թաքնված Ս.Վ. Սարգսյանի գրքի հաջողության գաղտնիքի

գրավականը և, իզուր չէ, որ այդ հրատարակումից 50 տարուց ավելի անց ևս՝ պ.գ.դ. Հ.Ժ. Հարությունյանը որոշեց ձեռնամուխ լինել այս նոր ուսումնասիրության շարադրմանը: Հեղինակը հանգամանակից ներկայացրել է ոչ միայն գնդապետ Ս.Վ. Սարգսյանի գերդաստանի պատմությունը (որը համարյա մոռացության էր մատնվել), այլև մանրամասն վերլուծության է ենթարկել նրա վերոհիշյալ մենագրությունը: Սա մեր համար, որպես զինվորականի չափազանց ուրախալի է, որ այսքան ժամանակ անց ևս, այդ մենագրությունը հատկացվում է այսպիսի հատուկ ուշադրություն և վերաբերմունք:

Ս.Վ. Սարգսյանի մենագրությունը մեծ ազդեցություն ունեցավ հետագա սերունդների վրա: Հատկապես վերջին 20 տարիներին գրվեցին «Հայոց պատերազմները և ռազմարվեստը» մատենաշարի առանձին հատորները, որը պետք է համարել մի նոր երևույթ հայկական ռազմարվեստի ուսումնասիրության պատմության մեջ: Այս մատենաշարին «գալիս» է միանալու նաև Հ.Ժ. Հարությունյանի «Անվանի զինվորականը և տեսաբանը. Սարգիս Վարագի Սարգսյանի կյանքը և գիտական ժառանգությունը (1899-1981թթ.)» հետազոտությունը: Ինչպես Ս.Վ. Սարգսյանի, այնպես էլ Հ.Ժ. Հարությունյանի աշխատությունները կարող է ծառայել նաև որպես դասագիրք, ինչպես հայ հին և միջնադարյան ռազմարվեստի պատմությունն ուսումնասիրողների, այնպես էլ բոլոր հետքորքրվողների համար:

ՄՈՐԱԶ ՍԱՐՈՒՆԱՆԻ ՍԱՐԳՍՅԱՆ, ՀՀ ԶՈՒ պաշտոնաթող գեներալ-լեյտենանտ

Խոսք հեղինակի կողմից

Այս աշխատանքը չէր ստեղծվի, եթե չլիներ մեր բազմաթիվ ընկերների և աշխատանքային ընկերներ-կոլեգաների աջակցությունը: Խոսքը նախ և առաջ վերաբերում է Ս.Վ. Սարգսյանի ընտանիքի անդամներին, նրա ժառանգներին, որոնք մեծապես օգնեցին մեզ իրենց տված խորհուրդներով և ցուցումներով՝ ողջ այս շարադրանքի ընթացքում: Ավաղ, արդեն մեր հետ չեն նաև նրա որդիներն ու դուստրերը, սակայն կան թոռները, որոնց աջակցությունն ուղղակի անսահման էր մեր այս ողջ շարադրանքի ժամանակ: Խոսքը վերաբերում է Ս.Վ. Սարգսյանի թոռնուհիներ՝ Նադեժդա Սարգսյանին (բնակվում է Երևանում), Իրինա Սարգսյանին (բնակվում է ՌԴ Վոլգոգրադ քաղաքում) և Աննա Միսակյանին (բնակվում է Գերմանիայի Դաշնային հանրապետությունում): Մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում նաև նրա թոռնուհի՝ Գոհար Բարսեղյանի ամուսին Նովիանենտ Թորոսի Մանուկյանին և հարազատներից Նովիանենտ Թելմանի Սարգսյանին, որոնք մշտապես մեր կողքին էին:

Մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում ՀՀ ԶՈՒ պաշտոնաթող գեներալ-լեյտենանտ Մուրադ Ս. Սարգսյանին, որը սիրառեմար ոչ միայն համաձայնվեց գրել այս առաջաբանը, այլև անցած լինելով ծառայության երկարատև ուղի կատարեց կարևոր դիտողություններ և ուղղումներ: Բավական է արձանագրել, որ նա ծառայության մեջ է մտա 60 երկարատև տարիներ՝ մի ամբողջ կյանք:

Մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում ԵՊՀ Հայոց պատմության ամբիոնի աշխատակիցներին՝ կատարված

քննարկման, դիտողությունների և տպագրության երաշխավորման համար: Վերջապես մեր շնորհակալությունն ենք հայտնում գիքի խմբագիր պ.գ.դ., պրոֆ. Է.Գ. Մինասյանին, գրախոսներ՝ պ.գ.թ., պրոֆ. Ա.Հ. Հարությունյանին, պ.գ.թ., դոց. Մ.Ա. Մալխասյանին և պ.գ.թ.՝ Տ.Կ. Գևորգյանին:

Այս տարի լրանում է Մ.Վ. Սարգսյանի մահվան 40-ամյակը և այս մենագրությունը, մեր կողմից, նաև յուրահատուկ հարգանքի տուրք է նրա հիշատակին:

ՆԵՐԱՏՈՒԹՅՈՒՆ

Vox audita latet, littera scripta manet

Ասված խոսքը անհետանում է, գրված տառը մնում է

Հնագույն հայոց պատմության ելևէջները մշտապես գտնվել են ուսումնասիրողների ուշադրության կենտրոնում: Եթե չստեղծագործենք մեր մատենագիրներին Մովսես Խորենացուց սկսած, ապա նոր և նորագույն շրջանների հայ պատմագրության կիմնադիր Մ. Չամչանից սկսած շատերին է հետաքրքրել մեր ժողովրդի հնագույն անցյալը: Մոտեցումներն ուսումնասիրվող հարցերին եղել են տարբեր տեսանկյուններից, որը համարյա լիովին կապված է եղել տվյալ հեղինակի նախասիրությունների ու ցանկությունների հետ: Ուսումնասիրվել են ինչպես մեր անցյալ պատմության քաղաքական դրվագները, այնպես էլ մշակույթը, հիթանոսական պաշտամունքը և կրոնը, սոցիալ-տնտեսական կյանքը, հասարակական-քաղաքական փոխհարաբերություններն ու աստվածությունները և կյանքի մյուս բազմաթիվ բնագավառները:

Ուսումնասիրող պատմաբանները մեծ ուշադրություն և տեղ են հատկացրել հատկապես մեր պատմության դրամատիկ պահերին, ինչպես օրինակ՝ IV դ. երկրորդ կեսին տեղի ունեցած օրհասական դեպքերին, որն ի վերջո բերեց Մեծ Հայքի թագավորության նրկատմանը՝ Հռոմեական կայսրության ու Սասանյան Պարսկաստանի միջև 387թ., ապա և կործանմանն ու անկմանը (389 թ. Արշակունիների կառավարումն ավարտվեց Արևմտյան Հայաստանում, իսկ 428թ. Արևելյան, պարսկական մասում), Վարդանանց (450-451թթ.) կամ էլ Վահանանց պատերազմներին (481-484թթ.): Նույն կերպ կարելի է մատնանշել Երվանդունիների, Արտաշիսյանների, իսկ ապա Արշակունիների ժամանակ կատարված բազմաթիվ այլ իրադարձությունների վերաբերյալ ևս: Չնայած բոլոր գիտական բանավեճերին, տարրեթերցումներին ու ուսումնասիրողների հակասություններին՝ մեկնաբանություններին

ասպարեզում, այսուհանդերձ հրապարակի վրա՝ բոլոր վերոհիշյալ բնագավառներում կան մի շարք ակնառու աշխատություններ: Կար միայն մեկ ԲԱՅ (ընդգծումը մերն է – <<Հ>), որը նույնիսկ աննկատելի էր, բայց չէր կարող փրկել երեք պատերազմների մասնակից, ԽՍՀՄ ՁՈւ աղյուսն պաշտոնաթղ զնդապետ՝ Ս.Վ. Սարգսյանի տեսադաշտից: Խոսքը վերաբերվում էր, ինչպես արդեն հուշում են վերևում շարադրված տողերս՝ հայոց հին պատմության արժարժմանն ու շարադրանքին ռազմարվեստի տեսադաշտից: Սա շարարարների առավել բարդ կողմերից էր, քանզի դրա համար, ինչպես և ընդդէ էր մյուս բնագավառներին, անհրաժեշտ էր ունենալ յուրջ մասնագիտական կրթություն, գիտելիքներ և **փորձ** (ընդգծումը մերն է – <<Հ>):

Ս.Վ. Սարգսյանի պարագայում գալիս էր ավելանալու մեկ հանգամանք ևս, քանզի նա ուներ նաև մեծ գործնական (պրակտիկ) փորձ: Փաստորեն այս դեպքում տեսակախնի գալիս էր միանալու նաև նրա պրակտիկ հարուստ գիտելիքների առկայությունը: Մեր մատենագիրներին ընթերցելիս նա տեսնում էր այն ամենը, ինչ տեսնում էին նաև մյուսները, բայց, ինչպես ասում են փոխարինարար, «տողերի արանքում» նա տեսնում էր նաև մյուսների կողմից չտեսածը: Իհարկե, խորհրդային բրեժնևյան լճացման տարիներին, այնքան էլ ցանկալի չէր հայ մարդու տանը կամ գրասեղանին տեսնել մի այսպիսի մենագրություն՝ մեր ժողովրդի պանծալի անցյալի վերաբերյալ: Այս մենագրությունը, ըստ էության, մի նոր խոսք էր ուղղված պետական գաղափարախոսության դեմ, քանզի գոնե ատերես ԽՍՀՄ-ը քարոզում էր խաղաղ գոյակցությունն ու չպատերազմելու քաղաքականություն: Այժմ հայերն ապացուցում էին բոլորին, որ իրենք եղել են աշխարհի յախազույն կոլդոկներից մեկը և մեծ դեր են խաղացել համաշխարհային ռազմարվեստի զարգացման պատմության մեջ:

Փաստորեն Ս.Վ. Սարգսյանը կատարում էր մի հանդուգն քայլ, որի հետևանքները կարող էին լինել անկանխատեսելի: Տողերիս հեղինակը երբեք հակված չի այն մտքին, որ Ս.Վ. Սարգսյանի մենագրությունը տպագրվել է նույն կերպ, ինչպես ձեռագիր վիճակում ներկայացվել է հեղինակի կողմից հրատարակության: Այս առումով կարող ենք կատարել մի դասակարգ համեմատություն: Երբ ԽՍՀՄ մարշալ Գ.Կ. Ժուկովի կողմից շարադրվեց «Եղելություններ և խոսեր» հակրահայտ աշխատությունը, ապա կուսակցական

ասպարատի գործիչների թելադրանքով՝ խմբագիրներն հեղինակից պահանջեցին կատարել մի շարք փոփոխություններ և քայքայվեցին: Խոսքն առաջին հերթին վերաբերում էր գլխավոր գաղափարախոս Ս.Ա. Մուխոմլին, ապա և մյուսներին: Այսպես, Գ.Կ. Ժուկովին ստիպում էին, որ անպայման աշխատությունում նշվի ԽՍՀՄԿ ԿԿ գլխավոր շարադրար՝ Լ.Ի. Բրեժնևի անունը և այն էլ խալտատակ տարբերակով, որ իբր Գ.Կ. Ժուկովը գնացել է վերջինիս մոտ՝ նախապատրաստվող պատերազմական գործողությունների կապակցությամբ խորհրդակցելու¹: Հարկավ, հակառակը կարող էր լինել, բայց դա ևս թացատվում էր, քանզի Լ.Ի. Բրեժնևն այդ ժամանակ ընդամենը խորհրդային քանակի մի սովորական և շարքային սպա էր: Իսկ նման սպաների թիվն հազարների էր հասնում: Սա մենք ընդգծում ենք՝ ցանկանալով նշել, որ Ս.Վ. Սարգսյանի գրքից ևս անպայման հանվել են որոշ հատվածներ, որոնք այն ժամանակների կուսակցական գործիչների և գրաքննիչների համար կարող էին լինել հակազաղափարական: Մենք դա արձանագրում ենք մեր ձեռքի տակ չունենալով և ոչ մի վկայություն, բայց նման գիրքը չէր կարող անցնել տպագրման հարթ ճանապարհ՝ ՀԽՍՀ Գ.Ա.Վ.Ս.Ի-ի կաբինետներում հայտնվելուց հետո:

Բոլոր այս գոհաբերություններով հանդերձ մենք ունենք այս եզակի հետազոտությունը, որը բացառիկ աշխատություններից է գոնև հայ պատմագրության մեջ: Ավելին, համաշխարհային պատմության մեջ այս ասպարեզում հանդես եկած հետազոտողներին կարելի է հաշվել միայն «մատների վրա»: Մենք հատուկ կցանկանալիքը դրանցից նշել Ն.Ս. Գոլիցինի, Հ. Դեբբյուկի, Ա.Ա. Ռազինի ուսումնասիրությունները: Այս ցանկից կարելի է առանձնացնել հատկապես վերջին հեղինակին, որը ևս, իր աշխատությունը շարադրել է ռազմա-ստորադասական իրադարձությունների վերլուծության տեսադաշտից: Նույնը պետք է նշել նաև մեր հայ հետազոտողի մասին: Մյուս բոլոր հեղինակների մոտ վերլուծությունների պատմական կողմը գերազանցում է ռազմականին, այսինքն՝ դրանք իրականում պատմական ռազմավարությունը անհեղձ գործեր են: Բոլոր թերություններով

¹ Сту` Жуков Г.К. Воспоминания и размышления. М., 1984. Т. 3. С.

հանդերձ կարևոր են նաև Ֆ. Մերինգի, Ա.Ա. Սվեչնի, Ն.Պ. Միխնևիչի և այլոց ուսումնասիրությունները:

⁴Արքիվ 20-25 տարիների պատմագրության մեջ վերոհիշյալ հարցերի ուսումնասիրության բնագավառում կատարվել են մեծ աշխատանքներ: Ռուս պատմաբաններից պետք է հիշատակել Ա.Կ. Նեժդոլկինի, Ա.Վ. Մախայուկի, Ջ.Կ. Անդերսոնի, Ե.Ս. Դանիովի, Ե.Ն. Նեկսևայի և այլոց առումները: Եվրոպական հետազոտողներից կարևոր են Կ.Ռ. Դիքսոնի, Պ. Սոուտհեռնի, Բ. Բասակի, Պ.Պ. Պոլոտսի ուսումնասիրությունները (վերջինս զբաղվում է հատկապես հայ-հռոմեական սահմանային խնդիրների և ռազմական առևտրային, ինչպես և պարթևների հետ կապված սահմանային փոխհարաբերությունների հարցերի վերլուծություններով) ²:

Ռուսաստանյան և եվրոպական պատմագրությունից 2000-ական թթ. սկսած ոչնչով այս խնդիր հետազոտման բնագավառում, հետ չի մնացել նաև հայկականը: Դա տեղի է ունեցել առաջին հերթին շնորհիվ Հ.Ա. Դեմոյանի, Ա.Մ. Այվազյանի, Հ.Պ. Հակոբյանի, Բ.Հ. Հարությունյանի, Ա.Մ. Գևորգյանի ջանքերի: Վերոհիշյալ հեղինակներից Հ.Ա. Դեմոյանը հանգամանայից անդրադարձել է վաղ հայկական ռազմարվեստի վերլուծությանը (սկսած բրոնզեդարյան ժամանակներից մինչև Վանի թագավորությունը) ³: Բովանդակային առումով նրա ուսումնասիրությունների օրգանական շարունակությունն են հանդիսանում Հ.Պ. Հակոբյանի երկու հետազոտությունները, որոնք վերաբերում են Երվանդական Հայաստանին, սպա նաև Տիգրան Մեծի դարաշրջանին ⁴:

² Steu' Poirot P.P. Perceptions of Classical Armenia: Romano-Parthian Relations, 70 BC-AD 220. Lafayette, 2003.

³ Steu' Դեմոյան Հ., Հայկական լեռնաշխարհի բրոնզեդարյան սպառազինությունն ու ռազմարվեստը, Հ. Ա, Երևան, 2009 («Հայոց պատերազմները և ռազմարվեստը» մատենաշար), Լույսի՝ Վանի թագավորության պատերազմներն ու ռազմարվեստը, Հ. Բ, Երևան, 2009 («Հայոց պատերազմները և ռազմարվեստը» մատենաշար):

⁴ Steu' Հակոբյան Հ., Հայկական բանակն ու ռազմարվեստը Երվանդունիների օրոք, Հ. Գ, Երևան, 2013 («Հայոց պատերազմները և ռազմարվեստը» մատենաշար), Լույսի՝ Հայոց պատերազմները և

«Նստազայում այս մատենաշարը լրացվեց Բ.Հ. Հարությունյանի կողմից, որը հեղինակեց ուսումնասիրություն՝ Արշակունյաց թագավորության սպառազինության և ռազմարվեստի վերաբերյալ: Տիգրան Մեծի բանակի ուսումնասիրությանն է վերաբերում նաև Ա.Մ. Գևորգյանի եռաստոր աշխատությունը ⁵:

Հրատարակված աշխատությունների շարքում առանձնակի տեղ են զբաղեցնում Ա.Մ. Այվազյանի ուսումնասիրությունները: Դրանք չափազանց բազմաբովանդակ են և վերաբերում են, սկսած բանակի հետ առեցվող բարոյա-հոգեբանական խնդիրներից՝ մինչև ռազմա-արքայազնական հարցերի վերլուծություններին: Հեղինակը մեծ ուշադրություն է հատկացրել նաև բանակի, որպես ազգային ինքնագիտակցության մաս կազմող «օրրանին» ունեցած կապին՝ սազգային լեզվի հետ, որը ամենակարևոր չափանիշն էր ցանկացած ժողովրդի համար՝ սկսած վաղեջական ժամանակներից: Կարևոր է նաև զինվորականության դասի ներսում գոյություն ունեցած վարքականոնի սկզբունքների հետազոտությունը, առանց որոնց ասկայության բանակը չէր կարող գոյություն ունենալ և զարգանալ: Այսուհանդերձ Ա.Մ. Այվազյանի հետազոտությունները հիմնականում վերաբերում են ոչ թե հին հայկական բանակին, այլ որ ոչ պակաս արդիական է՝ վաղ միջնադարյանին: Սա առավել ևս կարևոր է, քանզի ցանկացած հետազոտողի համար րավակառնին ծանր և դժվարին խնդիր է ուսումնասիրել անցումային շրջանին վերաբերող ցանկացած խնդիր: Հայկական հասարակությանը զուգահեռ III-V դդ. բանակը ևս աստիճանաբար, անցում էր կատարում ուշ ստրկատիրությունից՝ դեպի վաղ ավատատիրականին (Ֆեոդալականին) ⁶: Իսկ համաշխարհային պատմության մեջ IV-VII դդ. մի կարևորագույն էտապ էր, որի «շարժիչները» էլ հանդիսացավ ժողովուրդների մեծ գաղթը (magna

ռազմարվեստը Տիգրան Մեծի օրոք, Հ. Դ, Երևան, 2013 («Հայոց պատերազմները և ռազմարվեստը» մատենաշար):

⁵ Steu' Հարությունյան Բ., Մեծ Հայքի Արշակունյաց թագավորության սպառազինությունը և ռազմարվեստը, Հ. Ե, Երևան, 2013 («Հայոց պատերազմները և ռազմարվեստը» մատենաշար): Գևորգյան Ա.Մ. Տիգրան Մեծի բանակը (մ.թ.ա. 95-55թթ.), Պր. I, Երևան, 2009, Պր. II, Երևան, 2010, Պր. III, Երևան, 2011.

⁶ Հարությունյան Բ., Լշվ, աշխ., էջ 56 և հաջ:

migrantium, η μεγάλη μετανάστευση των λαών)⁷: Դրանից անմասն չէր կարող մնալ նաև Հայաստանը և այն պաշտպանող ու սատարող հայկական բանակը: Այս հարցերին են վերաբերում Ա.Մ. Այվազյանի՝ Բյուզանդիայի Հուստինիանոս կայսեր դարաշրջանին նվիրված ուսումնասիրությունները:

Հարց է ծագում, թե ինչու, ի՞նչ դրդապատճառներ է հետևանքով Ա.Վ. Մարգարյանը որոշեց գրադրվել այս թեմայով: 1950-ական թթ. սկսած Հայրենական Մեծ պատերազմի մասնակից-ակախատեսներից շատերը սկսել էին շարադրել շխատություններ՝ իրենց տեսածի և կատարվածի վերաբերյալ, որոնք փաստորեն հուշագրություններ էին: Հատկապես մեծ ակտիվություն էին ցուցաբերում խորհրդային բազմաթիվ զորավարները, որոնք պատերազմի ժամանակ եղել էին ռազմաճակատների հրամանատարներ կամ էլ զբաղեցրել էին ավելի բարձր և պատասխանատու պաշտոններ: Փաստորեն արդեն կար մի բավականին սովոր գրադարան տեղի ունեցած Հայրենական Մեծ պատերազմի պատմության տարբեր դրվագների վերաբերյալ: Արա հետ կապված մասնագիտական գրականության ստեղծման հայ հեղինակներից շնչեղ միայն որոշ գործիչների անունները՝ Խ. Բարսեղյան, Փ. Ենգոյան, Ի. Իսակով, Ք. Գրիգորյան, Տ. Գրամբյան, Ղ. Դալլաբյան, Ե. Խալեյան, Վ. Չաքաբյան, Ա. Հակոբյան, Ա. Մախաչյան, Լ. Մարտիրոսյան (վերջինս հետագոտում էր հայ

⁷ Այվազյան Ա.Մ. Հայ զինվորականության պատվո Վաղարշակյաներ 4-5-րդ դարերում, Երևան, 2000, Նույնի Հայկական ինքնության հիմնադրարերը. Բանակ, լեզու, պետություն, Երևան, 2007, Նույնի՝ The Armenian Military in the Byzantine Empire: Conflict and Alliance under Justinian and Maurice, Alfortville, 2014, Նույնի՝ Les Forces Militaires Arméniennes dans l'Empire Byzantin: Luttes et alliances sous Justinien et Maurice. Traduction de l'anglais par Pascal Bataillard / Avant-propos d'Iikka Syvanne. Alfortville, 2013, Նույնի՝ Армяно-персидская война 449–451 гг. Кампания и сражения. Ереван, 2016, Նույնի՝ Армянское войско в эпоху Юстиниана и Маврикия: Ответ на псевдокритику, Ученые записки Казанского университета. Серия Гуманитарные науки, 2020, Т. 162, кн. 1. С. 191–215.

կանանց մասնակցությունը պատերազմին)⁸, Գ. Միրզոյան, Ա. Դավաբյան, Կ. Հարությունյան, Է.Գ. Մինասյան, Տ.Է. Մինասյան և շատերը:

Իհարկե, վերոհիշյալ հեղինակներից ոչ բոլորն էին մասնակցել պատերազմին, բայց այս ցանկով մենք ցանկանում ենք ընդգծել, որ Մեծ Հայրենականի ուսումնասիրության ասպարեզում շարունակում է գործել սերունդների հաջորդականության կամ ժառանգականության պրոցեսը: Այստեղ նաև շատ կարևոր է մատուանշել, որ նույն պրոցեսը միաժամանակ տեղի է ունեցել նաև հայկական գեղարվեստական գրականության մեջ: Նշեք այդ հեղինակներից միայն մի բանիսի անունները՝ Վ. Անանյան, Գ. Բես, Ս. Խանգաղյան, Հ. Սիրաս, Մ. Շաթիրյան, Մ. Մարգարյան, Չ. Բալայան, Վ. Դավթյան, Գ. Էմին, Շ. Թաթիրյան, Բ. Վերյոյան և շատերը: Ա.Վ. Մարգարյանը նկատեց այն կարևոր բացթողումը, որն առկա էր մեր արդեն այդ ժամանակ 1500 տարիների պատմություն ունեցող պատմագրության մեջ՝ սկսած Մովսես Խորենացուց և Փավստոս Բուզանդից ու Ագաթանգեղոսից մինչև Սերբոս ու հայերդները: Ա.Վ. Մարգարյանը տեսավ, որ մեր անցյալի հերոսական պատմության դրվագներն ուղղակի չեն քննարկվել և պարզաբանվել գուտ ռազմա-պատմական վերլուծությունների տեսակետից:

Մա բավականին բարդ և դժվարին խնդիր էր: Այստեղ անհրաժեշտ էր, որքան ներում են հնարավորությունները, իմանալ ոչ միայն մեր մատենագիրներին, այլև անտիկ (հունա-հռոմեական) պատմագիրներին՝ չխոսելով արդեն հին արևելյան տեքստերի վերաբերյալ (գոնե ուրարտական և ասորեստանյան): Իսկ վերջիններինս մոտ ամեն ինչ չէ, որ սահուն և հարթ էր ընթանում (խոսքը վերաբերում է նախ և առաջ հունա-հռոմեական պատմագիրների գործերում պահպանված վկայություններին): Այս կապակցությամբ բավական է հիշել միայն Պյուտարքոսի անունը,

⁸ Շարունակելով այդ ավանդույթը՝ Է.Գ. Մինասյանը և Տ.Է. Մինասյանը մեր օրերում անդրադարձան հայ հերոսուհի կանանց մասնակցության ուսումնասիրությանը թուրքական տիրապետության դեմ XIX-XX դարերի սահմանագլխին: Տես Մինասյան Է.Գ., Հայ հերոսուհի կանայք, Երևան, 2016, Մինասյան Է.Գ., Մինասյան Տ.Է., Հայ կանայք 19-րդ դարավերջի և 20-րդ դարակզբի հերոսամարտի տարիներին, Երևան, 2016:

որին կարելի համարել ու անվանել մեր փառավոր անցյալի առաջին յուրջ կեղծարարներից մեկը՝ այս բառիս պարզապես բուն իմաստով: Փաստորեն խնդիրը պահանջում էր միմյանց համադրել բոլոր մատենագիրներին (հունա-հռոմեական և հայկական, ինչպես և իին արևելյան) գործերում պահպանված տեղեկությունները, որպեսզի ստացվեր այն իրական պատմությունը, որը մենք ունեցել ենք և, ակնկալում էինք Ս.Վ. Սարգսյանի շարադրանքից:

Այս ամենը մի կողմից: Ս.Վ. Սարգսյանը աշխատել է որքան հնարավոր է իրար մոտեցնել և միաձուլել պատմիչների աշխատություններում պահպանված վկայությունները և օբյեկտիվ իրականությունը: Հարց է ծագում, թե որ իրականության մասին է մեր խոսքը: Տարածա-ժամանակային իրականություններից երկրորդն արդեն անցել-գնացել էր, այն անհնարին էր հետ վերադարձնելը: Մնում էր առաջինը: Այսպես, եթե մենք թուուցիկ հայացք ենք գցում Ս.Վ. Սարգսյանի կողմից կազմված առավել նշանավոր ճակատամարտերի սխեմա-քարտեզներին, ապա աչքի է զարնում մեկ օրինակալիություն ևս: Նա հատկապես կազմել է այն ճակատամարտերի սխեմա-քարտեզները, որոնք տեղի են ունեցել ներկայիս ՀՀ-ի (կամ նախկին ՀԽՍՀ) տարածքում: Խոսքը վերաբերում է Երվանդաշատի մ.թ.ա. 190թ., Արտաշատի մ.թ. 59թ., 336-337թթ. Օշականի և Վաղարշապատի, Արարատյան դաշտավայրի 364թ. կռիվներին և մյուսներին: Այս տեղանքները միանշանակ ուսումնասիրվել են նրա կողմից՝ մինչև այդ ճակատամարտերի սխեմաները կազմելը, որը երևում է ինչպես նրա շարադրանքի ոճից, այնպես էլ այդ սխեմաներն ուսումնասիրելիս: Այս մասին խոսք կզեն բազմիցս մեր հետագա շարադրանքի ընթացքում ևս: Ավելին, դա կարմիր թելի պես անցնում է այս աշխատանքի միջով, հանդիսանալով նրա ղոնաշարը:

Ինչ վերաբերում է մյուս ճակատամարտերի սխեմա-քարտեզներին (Հայկի և Քեյի կռիվից մինչև Ավարայր), ապա պարզ երևում է, որ նրա տրամադրության ներքո եղել են բավականին մեծամասշտաբ քարտեզներ, որոնք հիմնականում օգտագործել են զինվորականները, հատկապես պատերազմների դեպքում:

Ուշագրավ է նաև աշխատության կառուցվածքը: Այն բաղկացած է ներառությունից և տաս գլուխներից: Այստեղ առկա են բազմաթիվ հետաքրքիր մտտեցումներ: Այսպես, առաջին անգամ համաշխարհային ռազմարվեստի պատմագրության մեջ մենք

հանդիպում ենք շարադրանքի, թե ինչպես է պատերազմների դեպքում կազմակերպվել վիրավորների բուժման գործընթացը: Այս մասին սակավ և կցկուտր վկայություններ կան անտիկ հեղինակների մոտ (խոսքը վերաբերում է բժշկության հայր Հիպոկրատից (Ἱπποκράτης, Hippocrates, մ.թ.ա. 460-370թթ.) մինչև հռոմեացի բժիշկ Կլավդիոս Գալենն քնկած մեծամասշտաբ ժամանակաշրջանին (Claudius Galenus, 131-201թթ.): Սակավ տեղեկություններ կան նաև հայ մատենագիրների երկասիրություններում (Մտղենացի, Փավստոս, Փարպեցի, Եղիշե և մյուսները), բայց դրանք մնում էին ցուսումնասիրված և չվերլուծված մինչև՝ Ս.Վ. Սարգսյանի կողմից այդ հարցին անդրադառնալը⁹:

Նույն կերպ կարելի է անդրադառնալ գործերի տեղծման ու կազմակերպման պատմությանը, թե ինչպես առաջացավ գորքը, ինչպես հետագայում ձևավորվեցին տարբեր ստորաբաժանումները, ինչպես էին նրանց առջև դրվում մարտավարման տարբեր խնդիրներ ու առաջադրանքներ, ինչպես տարանջատվեց հրամանատարական կազմը, ինչպես էր տեղի ունենում բանակի մատակարարման պրոցեսը... Այս ինչպեսները բազմաթիվ են, որոնց կարող էր պատասխանել միայն բանակում իր կյանքի որոշակի տարիներն անցկացրած մարդը:

Չորքերի կազմավորման պրոցեսները տարիների ու դարերի ընթացքում անընդհատ փոխվում և կատարելագործվում էին, որին զուգահեռ և համընթաց փոխվում էր նաև գեների տեսակները (վերջինս բնականաբար, անընդհատ կատարելագործվում էր): Նախնադարյան-համայնական դարաշրջանի, ստրկատիրականի, իսկ ստավել և ս վաղ ավատատիրական ժամանակների բանակների միջև կան անհամեմատելի տարբերություններ: Ավելի ճիշտ կլիներ նշել, որ նրանց միջև չկան համեմատության և ոչ մի եզրեր, քանզի վերջինս որակական առումով լիովին այլ բանակ էր: Այս որակապես նոր բանակների կազմավորումը միջազգային ասպարեզում ուղեկցվում

⁹ Տես՝ Гиппократ. Сочинения / Пер. Руднева В.И. Кн. 1-3. М., 1936-1941; Афоризмы Гиппократа / Пер. Шуца П.СПб., 1848. Աստվածատրյան Վ.Ս., Հարությունյան Ա.Ս., Բժշկական էթիկա, Երևան, 1984; Клавдий Гален. О назначении частей человеческого тела. М., 1971.

էր ցեղային տեղաշարժերին համընթաց, որին զուգահեռ սկսվել էր նաև մի այլ երևույթ, որը համաշխարհային պատմությունից հայտնի է ժողովուրդների մեծ գաղթ անվամբ (դա ընդգրկում է IV-VII դդ.)¹⁰: Մեր տարածաշրջանը ևս անմասն չմնաց այս ամենից: Դրանց կիզակետն էին արարական ներթափանցումների ժամանակաշրջանը, որոնց առաջին արշավանքների նկարագրմամբ էլ Ս.Վ. Սարգսյանը ավարտում է իր այս կարևոր մենագրության շարադրանքը:

Ավածին գալիս է ավելանալու նաև մարտավարության եղանակներին նվիրված պարագրաֆը, որտեղ իրար են միացված ինչպես բնական պայմաններին կամ տեղանքին վերաբերող հարցերի արժարժույթը, որը կարող էր ունենալ շատ դեպքերում վճռորոշ նշանակություն, այնպես էլ զինուժի հարցը: Ի՛նչ է նշանակում վերջինս: Մարդկային գործոնն ուներ մեծագույն կարևորություն, թե որտե՛ր, և ինչպե՛ս էր անհրաժեշտ այն օգտագործել: Խոսքը վերաբերում էր և՛ գորքին ուղղություն ցույց տվող հրամանատարներին, և՛ ավելի ցածր աստիճան ունեցողներին, ինչպես նաև սովորական շարքային-զինվորներին: Պետք էր ճշտորեն որոշել, թե զորատեսակներից որը, և երբ, պետք է մտներ մարտական գործողությունների ասպարեզ, ինչպիսի քանակով և պատերազմի թատերաբեմի որ հատվածում: Սրան գալիս էր լրացնելու նաև

տեղանքի դժվարամատչելի հատվածների ճիշտ օգտագործումը: Կարևոր էր նաև պաշտպանական ամրությունների կառուցման տեղանքի ճիշտ ընտրությունը: Հեղինակն իր շարադրանքում բերում է օրինակներ, որը կարող էր տեսնել միայն զինվորականը (մեր խոսքը օրինակ Գատնի բերդի մանրամասն վերլուծության մասին է նրա կողմից): Այս բոլորը և մնացյալը հարցեր են, որ կարող էր տեսնել միայն Ս.Վ. Սարգսյանը:

¹⁰ Այս խնդրին անդրադարձել են շատերը: Նշենք, մեր կարծիքով, առավել կարևոր ուսումնասիրությունները: Корсунский А.Р., Гюнтер Р. Упадок и гибель Западной Римской империи и возникновение германских королевств (до середины VI в.). М., 1984; Засецкая И.П. Культура кочевников южнорусских степей в гуинскую эпоху (кон. IV–V вв.). СПб., 1994; Шувалов П.В. Проникновение славян на Балканы // Основы балканского языкознания, языки балканского региона. СПб., 1998. Ч. 2; Буданова В.П., Горский А.А., Ермолова И.Е. Великое переселение народов. Этнополитические и социальные аспекты. М., 1999; Буданова В.П. Варварский мир эпохи Великого переселения народов. М., 2000; Щукин М.Б. Готский путь. СПб., 2005; Diesner H.J. Die Völkerwanderung. Lpz., 1976; Die Germanen. B., 1976. Bd 2; Goffart W. Barbarians and Romans. Princeton, 1980.



Մ.Վ. Սարգսյանը և Հ.Բ. Բարձրավանը (1945թ., ֆաշիստական Ֆերմանիայի դեմ հայրենակից հետո)

ԳԼՈՒՅ ԱՌԱՋԻՆ ՊԱՆԾԱԼԻ ՈւՂԻ, ՈՐՈՎ ԿԱՐՈՂ ԷՐ ՀՊԱՐՏԱՆԱԼ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐԸ

Սարգիս Վարազի Սարգսյանը ծնվել է 1899թ. սեպտեմբերի 5-ին ներկայիս Արմավիր (նախկինում Ղարդուղուլի) գյուղում, որն այժմ գտնվում է ՀՀ Արմավիրի մարզի տարածաշրջանում: Նախնական կրթությունը նա ստացել է տեղի դպրոցում, որն ավարտելուց հետո աշխատել է որպես իր ծննդավայրի փոստատար: Տակավին 15-ամյա պատանին 1914թ. գնում է մասնակցելու Առաջին աշխարհամարտի ռազմական գործողություններին՝ կովեղով հայկական կամավորական ջոկատներում: Այս ընթացքում էլ նա հարում է բոլշևիկյան կուսակցությանը, կիսում նրանց գաղափարները և սկսում է զբաղվել կոմունիստական գաղափարների պրոպագանդամամբ ու տարածմամբ: Միաժամանակ, չնայած տեղի ունեցող պատերազմական բուռն գործողություններին, նա հասցնում է կապեր հաստատել նաև Արևմտյան Հայաստանում գտնված բոլշևիկյան կազմակերպությունների հետ (մասնավորապես Կազգվան քաղաքի բոլշևիկների), որպեսզի հետագայում այնտեղ նույնպես հաստատվեն խորհրդային կարգեր, և գոնե Հայաստանի այդ փոքրիկ հատվածն ազատագրվի իր համար ատելի թուրքական տիրապետությունից: Հայերի ոգևորությունն այս պատերազմի ժամանակ, անսահման էր: Ռուսական բանակի Կովկասյան ճակատում կային շուրջ 300հազ. հայեր, այդ թվում մոտ 30 հազ գեներալներ: Մոտ 50հազ. հայորդիներ կռվում էին նաև դաշնակիցների զորքերում ¹¹: 1915թ. ցեղասպանությունը

¹¹ Ավելի մանրամասն տես՝ Арутюнян А. О. Кавказский фронт 1914-1917. Ереван, 1971.

հայորդիների մոտ ձևավորեց մի մտայնություն, որ ցանկացած գնով պետք է հասնել սեփական պետության ստեղծմանը: Ահա այսպիսի գաղափարներով էր տոգորված նաև Ս.Վ. Մարգարյանը, որոնց էլ նա մնաց հավատարիմ՝ մինչև կյանքի ավարտը:

Այնուհետև նա մասնակցում է թուրքերի դեմ 1918թ. մայիսին տեղի ունեցած Մարդարապատի և Բաշ Ապարանի հերոսական ճակատամարտերին, որի ընթացքում էլ ցուցաբերում է մեծ քաջություն: Դա անկկատ չի մնում մեր մեծ երախտավոր, ապագայում ԽՍՀՄ մարշալ Հովհաննես Քրիստափորի Բաղրամյանի աչքից և, այն ունենում է վճռական նշանակություն, մեր այս երկու նշանավոր գործիչների համար: Իրենց հետագա ողջ կյանքի ընթացքում նրանք մնացին որպես անբաժան ընկերներ և տարածական հեռավորությունը չունեցավ և ոչ մի նշանակություն այդ բարեկամության գոյության երկարատև «ճանապարհին»: Նրանց միջև մշտապես եղել է նաև սերտ նամակագրություն և, այդ նամակների մի մասը պահպանվել և այժմ գտնվում են մեր գեղապետի ժառանգների մոտ:

Հետագայում Ս.Վ. Մարգարյանը ակտիվ մասնակցություն է ունեցել նաև 1920թ. Մայիսյան ապստամբությանը, որի նպատակն էր, ինչպես քաջ հայտնի է բոլորին, Հայաստանում նա, Ռուսաստանի օրինակով, հաստատել խորհրդային կարգեր: Դա հաջողվեց միայն 1920թ. նոյեմբեր-դեկտեմբերի ամենակրեներին և այնուհետև, Ս.Վ. Մարգարյանը զբաղեցրել է մի շարք պատասխանատու պաշտոններ նորաստեղծ ՀԽՍՀ-ում: Նա եղել է շրջանային գործադիր կոմիտեի նախագահի տեղակալ, Հայաստանի մի շարք շրջանների զինկոմը և այլն: 1923թ. փետրվարից նա ԽՍԿԿ անդամ էր, չնայած, որ իրականում կուսակցությանն էր անդամագրվել ավելի վաղ՝ դեռ 1919թ.:

1941թ. սկսված Հայրենական Մեծ պատերազմը ուրիշ հանեց նաև ողջ խորհրդային Հայաստանին: Մեր հանրապետությունն այդ պահին ունենալով ընդամենը 24կմ. բնակչություն, ռազմաճակատ ճանապարհեց 330հազ. հոգու:

Մրան պետք է հավելել, որ խորհրդային մյուս 14 հանրապետություններից գործող բանակ զորակոչվեցին ավելի քան նա 200հազ. հայորդիներ: Բանակ մեկնած և ռազմաճակատում կոմոդների շարքերում էր ոչ միայն Մարգիս Վարազի Մարգարյանը, այլև նրա ավագ որդին՝ Կառլը: Մակայն, Ս.Վ. Մարգարյանը միանգամից չէ, որ մեկնեց գործող բանակ: Քանի որ 1930-ական թթ. տեղի ունեցած խոնաճշումների և հարածանքների (եպիդեմիա) պատճառով խորհրդային բանակը ուղղակի գլխատվել էր, ուստի կառավարությունը որոշեց օգտագործել մնացած բոլոր նախկին զինվորականների ունեցած փորձն ու գիտելիքները: Ուստի 1941թ. վերջերին նա ուղարկվում է ուսանելու Թբիլիսում գտնված հրետանային բարձրագույն-հրամանատարական ուսումնարանում, որտեղ, ինչպես նշվեց, պատերաստում էին հրետանավորներ (այս ուսումնարանը գործել է 1920-1992թթ.: 1937թ. մարտից այն վերանվանվել էր Բաքվի 26 կոմիսարների անվան հետնակային դպրոց-ուսումնարան և, ընդունվածներն անցնում էին 3-ամյա ուսուցում): Մակայն այժմ, արդեն ընթացող պատերազմը, թելադրել էր իր կոր պահանջները: Ուստի և ուսումնարանի ունկնդիրներն սովորում էին արագագլուխ ծրագրերով և ստանում էին հրետանու սպայի զինվորական աստիճան: 1942թ. հենց այստեղից էլ Ս.Վ. Մարգարյանը մեկնում է ռազմաճակատ: Պետք է նաև նշել, որ նույն ժամանակ այդ ուսումնարանում է սովորել նաև ապագայում ԽՍՀՄ զբառնատանկային գորքերի գլխավոր մարշալ Համագաստ Խաչատուրի Բարաջանյանը (1906-1977թթ.):

1941թ. վերջերից սկսվեց հայկական 89-րդ հրաձգային դիվիզիայի կազմավորման պրոցեսը (հետագայում այն ստացավ Թամակյան պատվավոր անվանումը), որը ռազմական գործողություններին սկսեց մասնակցել 1942թ. օգոստոսի 10-ից և դա շարունակվեց մինչև Մեծ Հայրենական ավարտը: Դա ժամանակագրորեն համընկնում էր պատերազմական ամենաբռնուն գործողությունների էտապի հետ: Գերմանա-

Ֆաշիստական զորքերը մի կողմից ձգտում էին հասնել Վոլգայի ավերին՝ Ստալինգրադ քաղաքին, իսկ մյուս խումբը՝ պայքարում էր Հյուսիսային Կովկասն ու ապա Անդրկովկասը նվաճելու համար։ Ի բարեբախտություն մեր ժողովրդի՝ Հայաստանի տարածքը, որը տեսել էր անթիվ պատերազմներ, այս անգամ զերծ մնաց դրա թատերաբեմը լինելուց¹²։ «Ժողովրդի հիշողություն» («Память народа») ռուսալեզու կայքը վկայում է, որ այդ ժամանակ արդեն Ս.Վ. Մարգյայանը ունեցել է մայրի զինվորական աստիճան և ակտիվորեն մասնակցել է Կովկասի համար մղված մարտերին։ Հենց այստեղ էլ նա ստացել է իր առաջին մարտական պարգևները, իսկ մարտերում նա հասցրել էր «կերպել» դեռ հետավոր 1914թ., որի մասին նշվեց մեր այս շարադրանքի ամենաակզում¹³։ 89-րդ դիվիզիայի 400-րդ հրաձգային գնդի կազմում Կովկասի համար մղած մարտերից հետո նա մասնակցել է Թամանյան թերակղզու թշնամուց ազատագրմանը (1942-1943թթ.), ապա Ղրիմի թերակղզու (Սևաստոպոլ քաղաքի – 1944թ.) ազատագրմանը։ Այնուհետև Ս.Վ. Մարգյայանը մասնակցել է Լվով-Սանդոմիրյան օպերացիային, իսկ 1945թ. Բեռլինի գրավմանը։ Այսպիսով, Ս.Վ. Մարգյայանը համարյա երեք տարի կռվեց դիտերիմ թշնամու դեմ և զորացրվեց հանդիսանալով 400-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատարը և ունենալով արդեն գնդապետի զինվորական աստիճան։

Քայց գործող բանակից զորացրվելը նրա համար ոչինչ չէր նշանակում, քանզի նրա ապագա ողջ կյանքը նա, անբաժանելիորեն կապված էր լինելու բանակի ու զինվորական ծառայության հետ։

¹² Մինսայան Է.Գ., Հայ ժողովրդի ներդրումը Հայրենական Մեծ պատերազմի հաղթանակի գործում (1941-1945 թթ.), Ղատմություն և մշակույթ հայագիտական հանդես, Երևան, 2020, 1, էջ 8-33; Լույսի՝ Հայ ժողովրդի մասնակցությունը Հայրենական Մեծ պատերազմին (1941-1945 թթ.), Հայկական բանակ, 2020, 1(103), էջ 9-32.

¹³ Տես՝ Память народа կայքը։

Ջորաքրվելուց անմիջապես հետո նա անցնում է աշխատանքի և մինչև իր կյանքի ավարտը դասավանդում է զինվորական զործ մասնագիտությունը Երևանի բժշկական ինստիտուտում։ Սկզբում նա զբաղեցրել է համապատասխան ամփոփի դասախոսի, ապա նաև ավագ-դասախոսի պաշտոնը, չնայած, որ նա այս հարցում չէր զգում, և՛ չուներ փորձի ու զինելիքի, և՛ ոչ մի պակաս։ Այս ընթացքում նա բազմիցս ընտրվել է պատգամավոր։ Հայրենիքին մատուցած ծառայությունների համար նա պարգևատրվել է նաև Լենինի, Կարմիր Դրոշի և Հոկտեմբերյան Հեղափոխության շքանշաններով (օրդեն), ինչպես նաև բազմաթիվ այլ մեդալներով, որոնցից Ս.Վ. Մարգյայանի համար առանձնապես թանկ էր «Կովկասի պաշտպանության համար» մեդալը։ Սա միանգամայն պարզ է պաշտպանելով Կովկասը, նա պաշտպանում էր նաև իր հայրենի Հայաստանը ֆաշիստա-թուրքական ներխուժման անկանխատեսելի սպառնալիքներից։ Երևի այս պատճառով էլ իր բոլոր պարգևատրումներից՝ նա ամենաարժեքավորն համարում էր ինչևց այս մեդալը։ Քացի այս ամենից մեր հերոս-գնդապետը պարգևատրվել է նաև «Անձնուրաց աշխատանքային գործունեության համար», Լենինի ծննդյան 100-ամյակին նվիրված (1970թ.) մեդալներով։ Իսկ թե՛ որքան պատվոգրերով է պարգևատրվել, ապա դրանց թիվն անսահման է։

Ս.Վ. Մարգյայանը իր պրակտիկ գիտելիքները, որ ձեռք էր բերել օվցած 3 պատերազմների թատերաբեմներում որոշեց օգտագործել նաև տեսության մեջ։ Այս ամենի արգասիքն հանդիսացավ նրա կողմից գրված «Հայ ռազմական արվեստի պատմությունից» միանշանակ արժեքավոր աշխատությունը¹⁴։ Իր հիմնական աշխատանքին և բազմազբաղվածությանը զուգահեռ նա երկարատև տարիներ Երևանի Մ. Մաշտոցի անվ. Մատենադարանում (հին ձեռագրերի գիտա-հետազոտական

¹⁴ Մարգյայան Ս.Վ., Հայ ռազմական արվեստի պատմությունից, Երևան, 1969 («Հայաստան» հրատ., 219 էջ)։

ինստիտուտում) հավաքում էր սովյալներ և կյութեր այս աշխատության վերաբերյալ: Նույնիսկ ընտանիքի անդամներն սկզբում տեղյակ չէին, թե ինչ նպատակով է նա հավաքում այդ կյութերը: Բնչպես նշում են գեղապետի ընտանիքի անդամները, նա մշտապես սիրում էր ընթերցել մեր պատմաբաններից Լեոյի (Սոսերի Բաբայանյան – 1860-1932թթ.) «Նայոց պատմություն»-ը, ինչպես և վերջինիս մյուս գործերը¹⁵: Մա նա, կարծես թե խթան ու ազդակ հանդիսացավ, որպեսզի Ս.Վ. Սարգսյանը ձեռնամուխ լինի այս յուրահատուկ աշխատության շարադրմանն ու ստեղծմանը: Մեր կարծիքով կար նաև մեկ այլ գործոն ևս: Հայրենական Մեծ պատերազմի մասնակից զորահրամանատարների մեծ մասը այս տարիներին շարադրում էին տեղի ունեցածի ու կատարվածի վերաբերյալ իրենց հիշողությունները (Գ.Վ. Ժուկով, Հ.Ք. Բաղրամյան, Ա.Ի. Երյուսենկո, Ս.Ա. Շտեմենկո և մյուսները)¹⁶:

Հենվելով անտիկ՝ հունա-հռոմեական և հայ մատենագիրների աշխատություններում պահպանված սակավաթիվ վկայությունների վրա (Հերոդոտոս, Քսենոփոն, Ապսիլանոս, Պլուտարքոս, Մովսես Խորենացի, Ղազար Փարպեցի, Ղևոնդ և այլն) հեղինակը կարողացել է տալ էին

¹⁵ Լեո, Երկերի ժողովածու, տաս հատորով (11 գրքերից), Երևան, 1966-1991: Այս նշանավոր ուսումնասիրողի գործերից հասկապես ցանկանում ենք նշել նրա «Նայոց պատմությունը», «Հայկական հարցը», «Հայկական հարցի վավերագրերը», «Անցյալից», «Նայոց պատմություն (Նորագույն շրջան)», «Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը» երկհատորյակը և այլ գործերը:

¹⁶ Жуков Г.К. Воспоминания и размышления. М., 2015; Василевский А.М. Дело всей жизни. М., 2014; Конева И.С. Записки командующего фронтом. М., 2014; Рокоссовский К.К. Солдатский долг. М., 1997; Мерецков К.А. На службе народу. М., 2003; Баграмян И.Х. Так начинался война. М., 2000; Еременко А.И. Сталинград. М. 2013; Чуйков В.И. Сражение века. М., 1975; Штеменко С.А. Генеральный штаб в годы войны. М., 1975; Катухов М.А. На острие главного удара. М., 1974.

հայկական բանակի ստեղծման և անցած դժվարին ուղու՝ կուռ, ամրոցական, օրյեկտիվ և արդարացի ռազմա-պատմական նկարագիրը: Նրա նպատակն է եղել ներկայացնել, թե ռազմա-աստիճակական միտքը՝ ռազմավարությունը, ինչպիսի ուղի ու զարգացում է ապրել մեր հայրենիքում՝ իր ծագման ժամանակներից մինչև մ.թ. VII դարի սկիզբն ընկած բավականին ծավալուն ժամանակահատվածում: Այլ կերպ ասած, սա մի աշխատություն է, որը վերաբերում է պատերազմ վարելու արվեստին: Հեղինակը սպացուցում էր, որ միշտ չէ, որ քանակական առավելությունը կարող է լինել հաղթանակի հիմնական գրավականը: Այս աշխատության բովանդակության և կատարված վերլուծությունների վերաբերյալ ավելի հանգամանալից կխոսվի մեր շարադրանքի հաջորդ բոլոր գլուխներում:

Այստեղ անհրաժեշտ է նաև զոնե համատեղակի անդրադարձ կատարել Ս.Վ. Սարգսյանի ընտանիքին: Նրա կինը՝ Սիրանուշ Եփրեմի Խաչատրյանը (22.07.1902 - 14.04.1982թթ.) ծնվել էր Հայաստանի Բզղիք քաղաքում և հրաշքով փրկվել էր 1915թ. հայկական ցեղասպանության ժամանակ: Նրա ընտանիքի 9-րդ անդամներից յարթաղանից կենդանի էին մնացել Սիրանուշի հետ միասին միայն 3-ը (քույրը՝ Քնարիկը և եղբայրը՝ Մարկոսը), որոնք ապաստան էին գտել հայաստանյան որբանոցներից մեկում: Հենց այստեղ էլ Ս.Վ. Սարգսյանը առաջին անգամ տեսնում է նրան, ծանոթանում, ապա ամուսնանում (որբանոցից նա իր խնամակալության տակ է վերցնում նաև Քնարիկին ու Մարկոսին): Ս.Վ. Սարգսյանը և Սիրանուշը դաստիարակել են 4 երեխաներ, որոնք տարբեր սապարեզներում ունեցել են մեծ ավանդ և ներդրում մեր հայրենիքի ներքին կյանքում:

Երեխաներից ավագը Ռոզա Սարգսի Սարգսյանը (20.01.1923-30.05.1998թթ.) իր ամուսնու՝ Վարոս Վաղարշակի Բարսեղյանի հետ (1907-1962թթ.) միասին ընդգրկված է եղել հայ առաջին ռազմական օդաչուների ջոկատում, սովորելով

աերոակումբում և, իրականացրել է բազմաթիվ թռիչքներ Y-2 (կամ Սո-2) ռազմական ինքնաթիռով: Ռոզան 1945 թ պարզևատրվել է Հայրենական Մեծ պատերազմի տարիներին «Անձնուրաց աշխատանքային գործունեության համար», իսկ 1995թ. «Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի 50-ամյակին» նվիրված հոբելյանական մեդալներով Պատերազմից հետո նա աշխատել է Երևանի № 1 կապի բաժանմունքում, որպես տնօրենի տեղակալ, որտեղ պարզևատրվել է նաև բազմաթիվ պատվոգրերով:

Ռոզայի ամուսինը՝ Վարոս Բարսեղյանը հանդիսացել է երևանյան աերոակումբի պետը, իսկ պատերազմի տարիներին բազմիցս եղել է Մևսստոպոլ քաղաքում, որտեղ ռազմա-օդային ուժերում ծառայող նորակոչիկներին սովորեցրել և նախապատրասել է այս գորքերում ծառայելու գաղտնիքներին ու հմտությանը: Նա միաժամանակ 1942-1944թթ. կովել է ՌՕ ուժերում, ստացել լեյտենանտի զինվորական աստիճան, եղել է ավիազորամասի հրամանատար: 1946թ. նա պարզևատրվել է «Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար» մեդալով: Այնուհետև, որպես հրահանգիչ աշխատել է Երևանի օդանավակայանում: Ի գորմանս բոլորի նա ավարտել է նաև Մեդվաբուժության ԳՀԲ-ը և ստացել մեդվաբույժի վկայական: Փաստորեն նրա ուշադրությունը հատկապես գրավել են բոլոր այն օբյեկտները, որոնք ընդունակ էին թռչելու:

Ռոզայի որդին՝ Մարատ Վարոսի Բարսեղյանը (1940-2005թթ.) երկար տարիներ եղել է ՀԽՍՀ կառավարական կապի բաժնի պետի տեղակալը: Դուստրը՝ Գոհար Վարոսի Բարսեղյանը (Մասնուկյան - 1944-2006թթ.), նույնպես աշխատել է փոստային բաժանմունքում, ապա ավարտել է Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտի՝ էլեկտրոնիկայի ֆակուլտետը (1964-1969թթ.), որից հետո աշխատանքի է անցել Հայցուղնախագիծ պետական նախագծային ինստիտուտում, որն ընդգրկված է եղել ՀԽՍՀ Գյուղատնտեսության նախարարության կազմում: Գոհարի

ամուսինը՝ Հովհաննես Թորոսի Մանուկյանը (ծնվ. 1936թ.) երկար տարիներ աշխատել է մեր հանրապետության ցրային տնտեսության սիստեմում, մասնագիտությամբ հանդիսանալով ինժեներ-հիդրոտեխնիկ և շինարար: Որպես լավագույն մասնագետ Հովհաննեսը գործուղվել է աշխատելու նաև արտասահմանում՝ Սումայի և Եմեն:

Ս.Վ. Սարգսյանի որդիներից ավագը՝ Կառլ Սարգսի Սարգսյանը (1925-1985թթ.) 8-ամյա դպրոցն ավարտելուց հետո՝ բրոջ նման ընդունվել է Երևանում գտնված ռազմա-օդային ուսումնարանը: 1942թ. այն ավարտելուց անմիջապես հետո 17-ամյա Կառլը, ինչպես և հայրը՝ կամավոր մեկնել է ռազմաճակատ: Կռվել է 52-րդ զրահատանկային բրիգադի կազմում: Զորացրվելուց հետո սովորել է ԵՊՆ-ի նորաստեղծ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետում, ապա աշխատել ՀԽՍՀ Նախարարների (Մինիստրների) խորհրդում: 1955-1985թթ. եղել է ՀԽՍՀ Կապի նախարարության բաժանմունքներից մեկի պետը: Բարեխիղճ աշխատանքի համար պարգևատրվել է «Պատվո նշան» շքանշանով: Կառլի կինը՝ Մերի Արշավիրի Ալեքսանդրյանը (ծնվ. 1929թ.) Մոսկվայում Բուհ-ն ավարտելուց հետո վերադարձել է Հայաստան, և իրեն, մինչև իր աշխատանքային գործունեության ավարտը նվիրել է մանկավարժությանը: Նա երկար տարիներ աշխատել է Երևանի Ա.Պ. Զեխալի անվան դպրոցում, իսկ 25 տարուց ավելի եղել է այդ նույն հաստատության տնօրենը:

Կառլի որդին՝ Լևոն Սարգսյանը (1953-2011թթ.) սովորել է Օդեսայի Կապի ինստիտուտում, ապա ծառայել Խորհրդային բանակում, իսկ այնուհետև՝ աշխատել ՀԽՍՀ Կապի նախարարությունում: Դուստրը՝ Նադեժդա Սարգսյանը (ծնվ. 1955թ.), 1972թ. ընդունվել է Մոսկվայի Կապի ինստիտուտը, սակայն հետագայում՝ ընտանեկան հանգամանքների բերումով ուսումը շարունակել է Երևանի Ժողովրդական Տնտեսության ինստիտուտում (ավարտել է 1982թ.): Նա այնուհետև երկար

տարիներ աշխատել է մեր հանրապետության կապի համակարգում:

Ս.Վ. Սարգսյանի որդիներից կրտսերը՝ Ֆելիքը (1926-2013թթ.) աշխատանքային գործունեությունն սկսել էր տակավին մանուկ հասակում: Պատերազմի տարիներին (1943-1946թթ.) նա աշխատել է Երևանի ավիացիոն գործարաններից մեկում և երազել է կռվի ավարտից հետո դառնալ օդաչու: Սակայն, ինչպես ասում են «մարդը ենթադրում է, իսկ Աստվածը՝ կարգավորում»: Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտն ավարտելուց հետո նա ուսումը շարունակել է Մոսկվայի Հիդրոմետրիատիկ ինստիտուտում: Այստեղ էլ նա հանդիպում է իր ապագա կնոջը, ազգությամբ ռուս՝ Մարտա Սարգսյանին: Ինստիտուտն ավարտելուց հետո նա մեկնում է Թուրքմենիստան, որտեղ մասնակցում է ջրանցքների շինարարությանը: 1953թ. նրան նշանակում են Կարա-Կալպակյան կուսակցական կազմակերպության շրջանային կոմիտեյի տրանսպորտ-արդյունաբերական բաժնի պետ (այստեղ էլ նա դառնում է ԽՍՀՄ անդամ - 1952թ.): Այնուհետև Ֆ. Սարգսյանը ընտանիքով տեղափոխվում է Ստալինգրադ (Վոլգոգրադ), որտեղ ղեկավարում և իրականացում է ծավալուն շինարարական աշխատանքներ, քանզի պատերազմից հետո այս քաղաքն համարյա ամբողջությամբ հողին էր «հավասարեցվել»՝ ֆաշիստների կողմից: Նրա ղեկավարությամբ կառուցվել և վերականգնվել են նախկինում կիսավեր վիճակում գտնված բազմապիսի շինություններ: Նա այս ընթացքում զբաղեցրել է նախ աշդեկի, ապա Ստալինգրադյան շինարարական տրեստի ղեկավարի պաշտոնները, ապա նաև ստանձնել է ողջ Վոլգոգրադի մարզի շինարարական տրեստների կառավարչի պաշտոնը (այդ պաշտոնում նա աշխատել է մինչև իր աշխատանքային գործունեության ավարտը՝ 1985թ.): Այս տարիներին է, որ վերականգնվում են ստալինգրադյան հանրահայտ Պավլովի տունը, կառուցվում են «Ստալինգրադյան

«ակադամարտ» համապատկերը (պանորամա), Մաման կուրգան հուշահամալիրը, Ա.Մ. Գորկու անվան թատրոնը, կենտրոնական լողավազ և բազմապիսի այլ կարևոր շինություններ:

Ֆ. Սարգսյանի աշխատանքային գործունեության մեջ անսովորական հատուկ տեղ է զբաղեցնում 1988թ. և հետագա տարիները: Այդ թվականից նա շինարարական աշխատանքներ է իրականացրել երկրաշարժից հետո ավերված Գյումրիում (Լեհիսկան): Հայրենիքի հանդեպ ունեցած ծառայությունների համար նա պարգևատրվել է «Փառքի նշան», «Աշխատանքային Կարմիր դրոշի» և «Հնգամյակի ընթացքում ձեռքբերումների համար» շքանշաններով ու պատվոգրերով:

Ֆ. Սարգսյանն ունեցել է երեք երեխաներ: Որդին՝ Վալերի Սարգսյանը (ծնվ. է 1953թ. Երևանում - 2018թ., թաղված է Վոլգոգրադում) 1976թ. ավարտել է Վոլգոգրադի Բժշկական համալսարանի Վիրաբուժության ֆակուլտետը և մշտապես աշխատել է այդ համակարգում: Եղել է Վոլգոգրադի մարզի և ողջ ՌԴ կոլտպրոկտոլոգիայի լավագույն մասնագետներից մեկը: 2005թ. նա պարգևատրվել է ՌԴ Առողջապահության և սոցիալական զարգացման հարցերի նախարարության պատվոգրով: 2013թ. նրան տրվել է նույն նախարարության «Գերազանցիկ» աշխատակցի շքանշանը:

Ֆ. Սարգսյանի դուստրը՝ Իրինան (ծնվ. 1957թ.) նախ սովորել է երեխաների համար նախատեսված հատուկ երաժշտական դպրոցում, ապա Լենինգրադի պետական համալսարանի Փիլիսոփայության ֆակուլտետում: Պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և աշխատում է Վոլգոգրադի Բուհ-րից մեկում, որպես դասախոս՝ զբաղեցնելով լրջ պաշտոն: Իրինան մանկավարժական գործունեությունից զատ հեղինակ է նաև մի շարք գիտական հոդվածների,

մենագրությունների ինչպես նաև լինելով Բուհ-ի դասախոս ուսումնա-մեթոդական աշխատությունների¹⁷:

Ֆ. Սարգսյանի կրտսեր որդին՝ Անդրեյը (ծնվ. 1967թ.) Վոլգոգրադի տրանսպորտի բնագավառի աշխատակից է: Այսօր արդեն մեծագույն հաջողությամբ Ֆ. Սարգսյանի գործը շարունակում են նաև նրա թոռները: Երանցից Իրինան աշխատում է պատալագանատում, Ալեքսանդրը վիրաբույժ, Եկատերինան՝ սովորում է դիզայն մասնագիտության գաղտնիքները, Եվգենիան՝ երաժշտության ուսուցչուհի է, իսկ Անդրեյը աշխատում է առևտրի ոլորտում:

Քնդապետ Ս.Վ. Սարգսյանի կրտսեր դուստրը Լիլիկն (Միսակյան, 1940-2005թթ.) ավարտել է Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտի Էներգետիկայի ֆակուլտետը և երկար տարիներ աշխատել է Հայաստանի տարբեր նախաձեռնյալ ինստիտուտներում, որպես գլխավոր մասնագետ: Անուսինը Ռազմիկ Խաչատուրի Միսակյանը (1930-2001թթ.) եղել է տեխնիկական գիտ. թեմաձու, դոցենտ, տարբեր տարիների դասավանդել է Պոլիտեխնիկական, Գյուղատնտեսական և Անասնաբուժական ինստիտուտներում: Ըստ հեղինակ է նաև բազմաթիվ գիտական հոդվածների:

Լիլիկի դուստրը Աննա Ռազմիկի Միսակյանը հանրակրթական դպրոցին զուգահեռ սովորել և ավարտել է Հ. Կոջոյանի անվ. Ակադաբության նշանավոր դպրոցը: Բայց այնուհետև կտրուկ փոխում է ապագայի հետ կապված իր որոշումն ու ավարտում է Երևանի Անասնաբուժական-անասնաբուժական ինստիտուտը (1981-1985թթ.): 1993թ. Աննան

¹⁷ Վերջին շրջանում տպագրված նրա աշխատություններից են՝ Саркисян И.Ф. Практикум по истории философии. Ч. 1. Античная и Средневековая философия. учебно-методическое пособие. Волгоград, 2013; Она же. Проблема выявления сущности мифа в рамках апофатической парадигмы. Философия. Серия Познание. № 12. Декабрь 2019. С. 107-110.

անդափովվել և այրում է Գերմանիայի Համելն (գերմ. Hameln) քաղաքում:

Շտառների պատմությունն սկսեցինք նրա հերոս-կանապետի անցած ուղին նկարագրելով և պետք է ավարտենք նույն գերդաստանի մեկ այլ հերոսի՝ Ս.Վ. Սարգսյանի թոռան, Արմեն Ռազմիկի Միսակյանի կյանքի նկարագրությամբ (ծնվ. է 27.11. 1962թ.): Նա 1980-1985թթ. սովորել և ավարտել էր Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտը տեխնիկական կիրենտեստիկա մասնագիտությամբ: Այնուհետև աշխատանքի է անցել Ս. Մերգելյանի գիտա-հետազոտական ինստիտուտում: Արարաբաղյան շարժումը և պատերազմը Արմենի համար փոխեցին ամեն ինչ, խառնեցին բոլոր «խաղաղթթերը»: Արմենը եւ, որպես կամավոր մեկնեց կովի և, այն ինչ տեղի ունեցավ նրա հետ պատկերավոր նկարագրված է նրա ավարտական ընկերոջ, կատարվածի ակնատես՝ Կ. Ղումաշյանի կողմից հրատարակված հոդվածում: Այս տեքստը մենք օգտագործում ենք ամբողջությամբ, որը վերնագրված է «Ես չգնամ, նա չգնա, ինչպե՛ս պիտի Հայրենիքս անկախանա» անվամբ:

«ԱՐՄԵՆ ՌԱԶՄԻԿԻ ՄԻՍԱԿՅԱՆ, նա եզակիներից էր, անկրկնելի: Մի զարմանալի սովորություն ուներ՝ ուրբալիզմության ժամանակ իր մարմնով ծածկում էր կողքիններին: Արմեն Միսակյանն իմ զինվորն էր, ամենասիրելի զինվորը: Հզոր էր, քայց փխբուն սիրտ ուներ, որ խոցվում էր ամեն չար ու վաճառ բանի հանդիպելիս: Էությունը լի էր պոեզիայով, երաժշտությամբ, բանաստեղծություններ էր գրում, երգեր հորինում, նվագում երաժշտական մի բանի գործիքներ: Անշուշտ, շատ բան գալիս էր ծնողներից: Հայրը՝ Ռազմիկ Միսակյանը, Պոլիտեխնիկական ինստիտուտի դասախոս, մայրը՝ Լիլիկ Սարգսյանը, «Հայպետնախագիծ» ինստիտուտի գլխավոր մասնագետ, իր առաջին ուսուցիչներն ու կյանքի նկատմամբ հայացք սերմանողները եղան: Ահեղ երկրաշարժի օրերին հավատարիմ շան՝ Քեջի հետ նա Լենինականի փլատակներից

բազմաթիվ կյանքեր փրկեց: Ավարտեց Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի կիբեռնետիկայի բաժինը: Լուսավոր երազանքներ ուներ, ու մեկը՝ յոթ գավակ ունենալն էր: Իրենց՝ մի եղբայր, մի քույր լինելը թերություն, սխալ էր համարում: Շարժման օրերին ինքն ու քույրը ընտանիքներով մեկնեցին Սիսիանի սահմանամերձ ցյուղերից մեկը, հող էին մշակում, անասուն պահում: Հաճախ ասում էր՝ մեր սահմանները թափուր չպետք է լինեն, կյանք պիտի լինի այնտեղ, այդպես միայն ուժեղ կլինենք: Տեսնել էր պետք, թե նկարչական հակումներ ունեցող, նրբին ժանյակներ հյուսող Աննան ինչպե՞ս էր կոլ կթում՝ ճարպիկ ու սովոր, ասես ամբողջ կյանքը քաղաքում չէր ապրել: Գարեգին Նժդեհի աննկուն դասերով էր ապրում Արմենը, հայրենիքն իր այրյունն էր, հարագատ, անբաժանելի: Երկու տարի անընդմեջ միասին էինք: Նա իմ կարգապահ ու անտրտունը զինվորն էր: Հավատարիմ շունը՝ Քեջը, անբաժան էր նրանից: Հետախույզ էր Արմենը, միշտ դժվարին իրավիճակներում ամեն անգամ թշնամու թիկունքից վերադառնում էր արժեքավոր տեղեկություններով: Հրաշալի տիրապետելով գնակացած գեղեթի՝ հետախուզության գնալիս գերադասում էր հետը միայն ստոր կենք վերցնել: Այս ամբողջ ընթացքում սահմանալիսն տաք վետերում էր՝ Տավուշում, Վայքում, Կոռնիձորում...: Լաչինում էր, որ ողբերգական լուրը նրան տուն բերեց. դժբախտ պատահարից մահացել էին քրոջ երկու երեխաները: Հարվածը ծանր էր, դաժան: Արմենը շատ էր կապված փորքիկների հետ, բայց մահվան քառասուն օրը չլրացած՝ նա կրկին կռվի դիրքերում էր, թեև ես նրան թույլ չէի տվել: Միշտ միասին էին՝ ինքն ու քրոջ ամուսինը՝ Տիգրանը: Ուզում էին այնքան տանը մնալ, որ Արմենի քույրը հնարավորություն ունենար հղիանալու, վշտակորույս ընտանիքին դա այնքան էր անհրաժեշտ: Նոր գավակն, անշուշտ, պիտի ամուրբեր մոր վիշտը: Դիրքերը հասնելու երկրորդ օրն էլ հենց կատարվեց ողբերգությունը:

Այդ օրը Արմենը մի քանի անգամ անցավ թշնամու դիրքերը, ինչպես միշտ բերելով կարևոր նշանակություն ունեցող տեղեկություններ: Վերադարձին, մեր դիրքերի հետևում, մեր գլխաված տարածքում հայտնաբերում է չորս ական: Իր խառնվածքին բնորոշ անհասցուությամբ սկսում է վնասագերծել դրանք: Երեքը բարեհաջող վնասագերծում է, չորրորդը հակատանկային ական է լինում, այսպես կոչված, «Մյուրպիղ», երբ վերևից վնասագերծելիս տակինը պայթում է... Ցոթ ժամ ջարտունակ տղաները հավաքում էին քաջարի ընկերոջ մատուցները: Արմեն Միսակյանի երեսունը նոր էր լրացել և, ավա դ, այս գարունը վերջինը եղավ: Կորուստներում կարծրացած, կորուստների սովոր ջոկատի տղաները այս մի կորստյան հետ այդպես էլ չեն հաշտվում: Նա եզակիներից էր, անկրկնելի: Մի գարմանալի սովորություն ուներ. ուրբակոծության ժամանակ իր մարմնով ծածկում էր կողքիներին: Հայրը պոռն է նվիրել որդուն, որ վշտի պոթոթկում է և, սակայն, ամեն տողից հորդում է գիտակցումն այն բանի, որ իր որդին հայրենիքի քաջ զինվորն էր, քաջ պաշտպանը: Ավիտ ս, Արմեն, որ երազանքդ՝ սուեղ բերդ Միսիանի սահմանազլխում, յոթ գավակներիդ՝ յոթ քաջ զինվոր, անկատար մնաց: Երկու տարեկան դուստրդ հասակ կանոն ու, իմանալով կյանքիդ գեղեցիկ պատմությունը, կայարտություն կզգա: Իսկ ես համեստ ու համառոտ իմ այս գրվածքով ուզում եմ դիմել մեր մայրերին ու նրանց որդիներին. հազար ու մի պատրվակով, ծանոթ ու բարեկամ մեջտեղ բերելով, մի՛ խուսափեք զինվորական պարտականությունից: Զինձառայությունը ամեն հայ պատանու սրբազան պարտքն է հայրենիքի ու մոր առաջ: Հայրենիքի համար դժվարին պահին չկա ապահով տեղ, և ամեն ինչ՝ սեր, հարստություն և վայելում ունայն է: Միայն հայրենիքի նվիրումն է գեղեցկություն և իմաստ տալիս այդ բոլորին»¹⁸:

¹⁸ Դումաշյան Կ., «Առագաստ», 1993թ., թիվ 11: Այդ տարիներիս նորաստեղծ 22 ներքին և արտաքին կացության վերաբերյալ

Այժմ՝ ՀՀ ՊՆ «Մայր Հայաստան» ռազմական թանգարանի ցուցարաններից մեկը նվիրված է Արմենի անմոռանալի և պայծառ հիշատակին: Ավաղ այստեղ առայժ ոչինչ չկա նրա հերոս պապի՝ Ս.Վ. Սարգսյանի կապակցությամբ: Մտում է միայն հուսալ, որ մի գեղեցիկ օր, այս բացթողումը նս կլրացվի այդ թանգարանի աշխատակիցների կողմից:

Ս.Վ. Սարգսյանը մահացել է 26.X. 1981թ. Երևանում և թաղված է Շահումյանի գերեզմանատանը ¹⁹:

մանրամասն տես՝ Մինասյան Է.Գ., Հայաստանի երբորդ հանրապետության պատմություն, Երևան, 2013:

¹⁹ Ս.Վ. Սարգսյանի վերաբերյալ տես՝ Մարտիրոսյան Գ.Ա., Կնյազյան Ա.Ա., Արմավիր, Երևան, 1971 («Սպիտակաձեռ գինվոր» գլուխը), էջ 137-140: Սարգիս Վարզի Սարգսյան, Մահախոսական, Երեկոյան Երևան, 27.X.1981, էջ 4-րդ:

ԳԼՈՒՆ ԵՐԿՐՈՐԴ

ԲԱՆԱԿԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱԳԱՐՉՆ ՀԱՄԱՉԱՅՆ Ս.Վ. ՍԱՐԳՍՅԱՆԻ

Ա./ՆԱՍՈՒԳԻՏԵԼԻՔ.

Հայ հին ռազմարվեստը իր ուրույն և կարևոր տեղն է ունեցել համաշխարհային ռազմարվեստների պատմության մեջ: Այս ամենով հանդերձ վերջինիս վերաբերյալ կան միայն ստանձին հողվածներ: Հին Հայաստանի պատմությունն ուսումնասիրվել է բազմաթիվ նշանավոր հետազոտողների կողմից՝ սկսած առնվազն նշանավոր Մ. Չամչյանից (1738-1823թթ.) մինչև մեր օրերը, սակայն մշտապես բաց է մնացել դրա մեկնաբանությունն ռազմարվեստի տեսադաշտից: Ռուսումնասիրողները խոսել են այն բոլոր նշանավոր և ոչ առավել կարևոր ճակատամարտերի մասին, որոնք վճռորոշ նշանակություն են ունեցել մեր ժողովրդի բազմադարյան անցյալում (առնվազն սկսած Ավարայրից մինչև Մարդաբաղապատ), բայց երբեք համարյա խոսք չի գնացել դրանց ռազմաստրատեգիական մեկնաբանությունների վերաբերյալ: Հայ պատմագրության մեջ առաջին անգամ նման փորձ իրականացվել է պաշտոնաթող գնդապետ՝ Սարգիս Վարզի Սարգսյանի կողմից, որը վերոհիշյալ հարցերը քննարկում և մեկնաբանում է հենց զինվորականի աչքերով: Նա իր բովանդակալից և վաստակաշատ կյանքի ընթացքում տեսել էր արդեն առնվազն երեք պատերազմներ, որը միանշանակ հնարավորություն էր ընձեռում հարցերը քննարկել և գնահատել զինվորականի մտածողի գոնից:

Ս.Վ. Սարգսյանն իր շարադրանքը սկսում է ակնարկային անդրադարձ կատարելով հայկական լեռաշխարհի բոլոր այն բնական պատկերների թվարկմանը, որոնք այսպես թե այնպես նպաստել են, որ մեր հայրենիքը պաշտպանվի հակառակորդներից և ունեցել են ոչ պակաս դեր ու նշանակություն այդ ասպարեզում: Այս անդրադարձն ակնարկային է, բանզի հեղինակը գիտեր, որ բազմաթիվ նշանավոր հետազոտողներ արդեն տարբեր հանգամանքների բերումով տվել էին մեր լեռնաշխարհի կամ, ինչպես առավել ընդունված է, Մեծ Հայքի թագավորության պատմա-աշխարհագրական նկարագիրը: Այս հետազոտողներից հատկապես պետք է ընդգծել այն մարդկանց անունները, որոնք տիտանական գործ են կատարել այդ ուղղությամբ: Այսպիսի ուսումնասիրությունների անկյունաքարը դրվեց մեծանուն հետազոտող Ղ. Ալիշանի կողմից (1820-1901թթ.), որը մեր օրերում մեծագույն եռանդով ու հաջողությամբ շարունակեցին նշանավոր պատմաբան-աշխարհագրագետներ Ս.Ս. Երեմյանը, Թ.Խ. Հակոբյանը և այլք ²⁰: Մենք ցանկանում ենք հատուկ նշել նաև

²⁰ Ալիշան Ղ., Շիրակ, Տեղագրություն պատկերացոց, Վենետիկ, 1881, Լույսի՝ Այրարատ, Բնաշխարհի Հայաստանեայց, Վենետիկ, 1890, Լույսի՝ Սիսական, Տեղագրություն Սիսեանց աշխարհի, Վենետիկ, 1893, Լույսի՝ Հայապատում, Պատմիչք և պատմությունք Հայոց, Հ. Ա., Վենետիկ, 1901, Լույսի՝ Հայապատում, Պատմիչք և պատմությունք Հայոց, Հ. Բ.-Գ., Վենետիկ, 1901: Երեմյան Ս.Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյցի»-ի (Փորձ VII դարի հայկական քարտեզի վերակազմության ժամանակակից քարտեզագրական հիմքի վրա), Երևան, 1963, Լույսի՝ Հայաստանը ըստ «Աշխարհացոյցի»-ի քարտեզը, Երևան, 1963 և հետագա տարիներին տպագրված քարտեզներում, Լույսի՝ Հայ ժողովրդի պատմություն, Հ. I, Հայաստանը նախնադարյան-համայնական և ստրկատիրական կարգերի ժամանակաշրջանում, իմբ. Երեմյան Ս.Ս., Երևան, 1971, էջ 7-56 (այն ամբողջովին վերաբերում է Հայկական լեռնաշխարհի նկարագրությանը, այսուհետև կրճ. 2ՃՊ), Լույսի՝ К вопросу об этногенезе армян, Вопросы истории, 1952, № 7, С.

անոյլացի մասնագետ Հ. Լինչի անունը (H. Lynch, նրան համարում են միաժամանակ հայագետ, աշխարհագետ, ճանապարհորդ, 1862-1913թթ.), որը աշխարհին հայտնի դարձավ Հայաստանի պատմական աշխարհագրությանը նվիրված իր երկխոսուր գրքով և վերջինիս ներդիր քարտեզով, որը առայժմ լավագույններից մեկն է համարվում ²¹:

Մենագրության առաջին գլուխը վերաբերում է հին հայկական գոթքի կազմակերպման վերաբերյալ մեր ձեռքի տակ գտնված կցկտոր նախնական վկայությունների վերլուծության խնդրին: Հայկական գոթքը, ըստ էության, չէր կարող տարբերակվել ժամանակի մյուս բոլոր քաղաքակիրթ երկրների ունեցած բանակներից: Խոսքը հավասարաչափ կարող է վերաբերել ինչպես հինգ թագավորություններ ապրած հնագույն Եգիպտոսին (մ.թ.ա. 3100/3000-332թթ.), այնպես էլ նրան ժամանակակից Միջագետքին և մյուս երկրներին: Փաստորեն բունակաշինության դեպում ևս գործում էր համաշխարհային պատմությունից հայտնի EX ORIENTE LUX! – ԼՈՒՅՄԼ ԱՐԵՎԵԼՔԻՑ հանրահայտ սկզբունքը:

Այստեղ խոսքը վերաբերում է մի անոյլի ժամանակաշրջանի սկսած շումերա-աքքադական առաջին քաղաք-պետությունների դարաշրջանից մինչև առաջին համաշխարհային կայսրությունների կազմավորումը (ժամանակագրորեն ընդգրկում է շումերա-աքքադական կայսրությունից մինչև հռոմեականը, մ.թ.ա. IIIազ-մինչև մ.թ.

101-108, Հակոբյան Թ.Խ., Հայաստանի պատմական աշխարհագրություն (ուրվագներ), Երևան, 1968:

²¹ Lynch X.Փ.Б. Армения. Путевые очерки и этюды. Т. I. (русские провинция). Тифлис, 1910; Он же. Армения. Путевые очерки и этюды. Т. II. (турецкие провинция). Тифлис, 1910. Sbu bask' Nersessian H. Highlands of Armenia. Los Angeles, 1998: Армянское нагорье. География. Современная иллюстрированная энциклопедия. Под ред. проф. Горкина А.П. М., 2006. էջ 42 և հայց:

476թ.): Հնագույն Հայաստանը, իր կամրից անկախ, ցանկանար, թե ոչ, պետք է ունենար իր սեփական բանակը, որը կազմավորվում և համալրվում էր այդ տեղանքի և, տվյալ ժամանակի առանձնահատկություններին ու պահանջներին համապատասխան: Որքան էլ մեր հեռավոր նախնիները չցանկանային կռվել, այսուհանդերձ ստիպված էին ենթարկվել տվյալ ժամանակի «խաղի կանոններին»: Հայաստանը պետք է ունենար մարտունակ զորք, քանզի նրա անմիջական հարևան էր իր պատմության բոլոր Երեք թագավորությունների ընթացքում (Հին, Միջին և Նոր) ռազմատենչ Ասորեստանյան կայսրությունը: Խոսքը հատկապես վերաբերում է Նոր Ասորեստանյան կայսրությանը (մ.թ.ա. X-VII դդ. (մ.թ.ա. 605թ.)), որը և ոչ մի առիթ չէր թողնում, որպեսզի ծնկաչոք անի և հպատակեցնի իր մտասկա և հեռավոր հարևաններին²²: Այստեղ բավական է հիշել, թե ինչպիսի դաժանություններ, որոնք հասնում էին վայրագության աստիճանի, նրանք իրականացրին հարևան Բաբելոնի նկատմամբ, հանդիսանալով, ընդ որում, նրանց ազգակից ժողովուրդ: Պարզ էր, որ Հայաստանը պետք է մշտապես պատրաստ լիներ տալու պատշաճ հակահարված իր այս հզոր հարևան ախոյանին²³:

Նոր Ասորեստանյանին հաջորդեց մարաստանյան ոչ երկարատև տիրապետության ժամանակաշրջանն Առաջավոր Ասիայում և համատարած Մերձավոր Արևելքում (մ.թ.ա. մոտ. 670-550թթ.): Այստեղ մենք ունենք ստույգ վկայություններ այն մասին, որ Հայկական լեռնաշխարհը, ամենաուշը այս ժամանակաշրջանից, արդեն հասցրել էր դառնալ ԶԻԱԲՈՒՄՈՒԹՅԱՆ (ընդգծումը մերն է – Ն.Ն.) համաշխարհային

²² Մանրամասն տես՝ Դեմոյան Հ., Հայկական լեռնաշխարհի բրոնզեդարյան սպառազինությունն ու ռազմավետությունը, Հ. Ա. Երևան, 2009 («Հայոց պատերազմները և ռազմարվեստը» մատենաշար):

²³ Բազին Է.Ա. История военного искусства в 3-х т. Т. I. История военного искусства XXXIв. до н.э. – VI в. н.э. СПб., 1999.

կենտրոններից մեկը: Սա խոսում է նաև այն փաստի օգտին, որ, ինչպես մյուս բոլոր քաղաքակիրթ երկրներում, որոնք ունեին առաջատար և մարտունակ բանակներ, այնպես էլ Հայաստանում, տեղի էր ունեցել կարևորագույն փոփոխություններից մեկը: Թանակներում մինչ այդ մեծապես օգտագործվող սպանակների փոխարեն սկսել էին օգտագործել ձիուն, որը, իսկապես մեծ ժամանակաշրջանից հասել է մի հիանալի պատմական աշխատություն, որի վերնագիրը, որքան էլ տարօրինակ թվա, այնուհանդերձ չափազանց խոսում է: Խոսքը «Բժշկարան ձիոյ և առհասարակ գրաստնոյ» XIII դարում կազմված ուշագրավ սկզբնաղբյուր-հետազոտության վերաբերյալ է²⁴, որտեղ տրված է ոչ միայն ձիարձույթի գարգացման մակարդակը նաև հին Հայաստանում, այլև ինչպես բուժել կռիվների ընթացքում «շարքից դուրս եկած» այդ կենդանիներին:

Այս առումով մեր երկիրը նմանվում էր Խեթական Հին (1650-1500թթ.), իսկ հատկապես Նոր թագավորություններին (1400-1200թթ.), որտեղ ևս անսանապահության այս ուղղությունը ուներ մեծ տարածում: Խեթական տարածքները իրենց բնակչության կազմակերպման շատ նման էին հայկականին: Խեթերն իրենց հերթին խեթերեն թարգմանեցին մ.թ.ա. XIV դ.

²⁴ Нечудькин А.К. Ослы в военном деле древности. Научные ведомости БелГУ. Серия: История. Политология. Белгород, 2019, № 46 (2). С. 212-216.

²⁵ Բժշկարան ձիոյ և առհասարակ գրաստնոյ (ԺԳ դար), Աշխատասիր. Չուգասցյան Բ.Լ., Երևան, 1980: Տես նաև Համբարձումյան Վ.Գ., «Բժշկարան ձիոյ և առհասարակ գրաստնոյ» (ԺԳ դար), աշխատասիր. Չուգասցյան Բ.Լ., ՊԲՀ, 1981, № 1, Երևան, 1980, էջ 276-278 (գրախոսականը):

ապրած խուռիացի Կիկելույի աշխատությունը, որը վերաբերում էր ձիաբուծությանը²⁶:

Սկսած ամենավաղ ժամանակներից հայկական զորքը իր ժամանակի ծնունդը և արտաջրումն էր հանդիսանում: Եթե հետևում ենք նրա կազմակերպման հետ կապված վերլուծություններին, որ կատարում է Ս.Վ. Սարգսյանը, ապա այստեղ ևս բանակի հարվածային ուժը և կորիզն էին հանդիսանում հասարակության վերնախավի ներկայացուցիչները: Դա առաջին հերթին առնչվում էր զինվորների զինվածության և պաշտպանվածության մակարդակներին, քանզի զինվորներից յուրաքանչյուրը պարտավոր էր իր սեփական զենքով ներկայանալ բանակ կամ պատերազմի դաշտ: Հեղինակը օգտագործում է Մովսես Խորենացու հանրահայտ վկայությունը հայոց զորքի ունեցած առաջընթացի վերաբերյալ. «Հետևակամարտն ի վերայ ուսոց ձիոց բերեալք, և պարսաւորքն առ հասարակ դիպաղեղունք, և շերտաւորքն ի սուսեր և ի տէգ նիզակի վառեալք, Մերկքն վահանօք և զգետտօք երկաթօք պարածածկեալք: Որոց ի մի վայր հասելոց բաւական էր տեսիլս միայն, և որ ի նոցայն պահպանակաց և զինուց փայլունք և շողիւնք՝ զբշխման արտահալածէ: Խաղաղութեան և շինութեան բերող, իւրով և մեղու զամենայն հասակ պարարեալ»²⁷: Խորենացին սա ասում է մեր թագավորներից Տիգրան Երվանդյանի (560-524թթ.) բանակի վերաբերյալ: Միանգամայն հասկանալի է, որ բանակի անցումը հետևակից հեծելազորի մեկ օրում չէր կարող լինել: Դրա համար նախապես պետք էր ունենալ զուե գարգացած ձիաբուծություն:

Հայկական զորքը նմանվում էր մյուս զարգացած երկրների բանակներին, քանզի մեծ էր թագավորի և ազնվականության դերը այս խնդրում: Վերջիններս, ինչպես նշվեց վերևում, առավել լավ

²⁶ Azzaroli A. An Early History of Horsemanship, Leiden, 1985, P. 39; Гегни О.Р. Хетты. М., 1987, էջ 95 և հսց .

²⁷ Խորենացի, Ա. իդ:

էին պաշտպանված, քան շարքային քաղաքացիները, որը բնորոշ էր սարկատիկոնի դարաշրջանի բոլոր պետությունների բանակներին, քանզի առայժմ խոսք է գնում ոչ-պրոֆեսիոնալ (արիեստավաթ) զորքերի մասին²⁸: Չորրի կատարելագործման սրբոցեսին զուգահեռ տեղի էր ունենում նաև գեներալ տեսակների կատարելագործումը և, ինչպես նկատում է Ս.Վ. Սարգսյանը, տեղի ունեցավ անցում նեո ու ադելից մինչև էջի, փիլիկլանի և բարանի հայտնագործմանն ու օգտագործմանը²⁹: Ինչպես հայ, այնպես էլ համաշխարհային ռազմարվեստների ուսումնասիրության խնդրում, այս հարցերի կապակցությամբ, մեր ձեռքի տակ բավարար տեղեկություններ, այդ ամենի կապակցությամբ, կան միայն սկսած հելլենիզմի դարաշրջանից: Մակեդոնացու նվաճումները, կարծես թե «հարկադրեցին» մատենագիրներին, ավելի մանրամասն ներկայացնել այդ

²⁸ Համեմատության համար տես՝ ինն աշխարհի մյուս երկրների բանակներին վերաբերող աշխատությունները:

²⁹ Այս հայտնագործությունների պատմության վերաբերյալ մանրամասն տես՝ Ксенофонт. О верховой езде. Сыктывкар, 2005; Андerson Дж.К. Древнегреческая конница. СПб., 2006; Нeдeдкoв A.К. Развитие тактики персидской конницы Ахеменидов. Древние и средневековые цивилизации и варварский мир: Сб. науч. статей. Ставрополь, 1998. С. 20-32; Նույնի՝ Боевые колесницы и колесничие древних греков (XVI-I вв. до н.э.). СПб., 2001; Дмитриев В.А. «Всадники в сверкающей броне»: Военное дело Сасанидского Ирана и история римско-персидских войн. СПб., 2008; Марков М.И. История конницы. Кн. 1. От Древней Греции до изобретения огнестрельного оружия. М., 2007; Кошуриков С.Г. Колесница в армиях городов-государств досаргонического Шумера. Роль ахалтекинского коня в формировании мирового коннозаводства: Матер. между. конф. Ашхабад, 2001. С. 118-119; Littauer M.A., Crouwel J.H. Wheeled Vehicles and Ridden Animals in the Ancient Near East (Handbuch der Orientalistik. Abt. 7. Bd. 1. Lief.1). Leiden, Köln, 1979.

դարաշրջանի երկրների բանակները: Երևի այդպես նրանք ցանկանում էին իմանալ, թե որտեղ է թաքնված վերջինիս հաջողությունների «բանալի»:

Մեր կողմից վերանգրված նախագիտելիք բաժնում (այն ընդգրկում է Ս.Վ. Սարգսյանի աշխատության I գլուխը, կոչվելով «Ընդհանուր ակնարկ») աներաժեշտ է կանգ առնել նաև ռազմաբժշկության հարցերին: Այս հարցին ևս հեղինակի կողմից աշխատությունում մեծ տեղ է հատկացված: Հենվելով անտիկ պատմագիրներից հասած կցկտուր, ինչ որ տեղ փորձանքների հավասար վկայությունների վրա, հեղինակը կարողացել է ընդհանուր գծերով ներկայացնել, թե ինչպիսի ընթացք և զարգացում է ապրել մշտապես ռազմարվեստից անբաժան գործունեության այս բնագավառը: Ռազմաբժշկությունն ձևավորվել է զարգացել է տեղի ունեցած պատերազմներից զուգահեռ ³⁰: Հենվելով Քսենոփոնի և Ղազար Փարպեցու վկայությունների, ինչպես նաև հայկական բժշկության պատմության լավագույն ուսումնասիրողներից մեկի՝ Լ.Ա. Հովհաննիսյանի եզրահանգումների վրա Ս.Վ. Սարգսյանը իրավացիորեն նշում է, որ Հայաստանում ևս, եղել են հոմոմեական վալետոդինարիաների և նաև հաստատությունների (լատ. valetudo, valetudinis՝ առողջություն բառից): Այս հաստատություններում հին Հռոմում բուժել են ոչ միայն

³⁰ Оганесян Л.А. История медицины в Армении с древнейших времен до наших дней [Текст]: Врачи, мед. лит-ра и лечебные учреждения у армян в Армении и за ее пределами / проф. Л.А. Оганесян, действ. чл. Акад. мед. наук СССР и Акад. наук Арм. ССР, заслуж. деятель науки; Акад. наук Арм. ССР. 2-е изд., доп., Ереван, 1946-1947. 5 т.; Ч. 1. Медицина в Армении от древнейших времен до конца X века [Текст]. (До начала арм. Ренессанса). Ереван, 1946; Печачева Е.Н. Участие врачей в позднеантичной дипломатии. Жебелевские чтения-3: Тезисы докладов научной конференции 29-31 октября 2001 г. СПб., 2001. С. 194-200.

գինկորականների, այլև հիվանդ ստրուկներին ³¹: «Աշխարհացոյց»-ում Մեծ Հայքին վերաբերող հատվածում նշվում են բազմաթիվ բույսերի, ինչպես նաև հանածոների մասին, որոնք ի սկզբանե ունեցել են բուժելու հատկություններ: Դրանցից նշենք առավել կարևորները՝ Բ. Հայքի ջերմուկը կամ հանքային քուրը, Աղձնիքի գոթորը, Կորճայքի գառիկը, Փայտակարանի քամբակը, առանց որի բժշկությունն անհնարին էր պատկերացնել և այլն: Բուժման բազմաթիվ պարագաներով աչքի է ընկել նաև Ֆուրուբերանը, որտեղ մենք ցանկանում ենք առանձնացնել պիստակի մասին վկայությունը: Հավանաբար, «Աշխարհացոյց»-ում կա վրիպում և խոսքը պիսակի մասին է, որն ունի պահլավական ծագում և նշանակում է բորոտ(ություն) և, եղել է բույս, որը բուժել է վերոնիշյալ հիվանդությունը ³²: Առավել վաղ շրջանի հայկական աղբյուրներում գոյություն ունեցած այս բացը լրացվում է նաև Մխիթար Հերացու (XII-XIII դդ.) «Ջերմանց մխիթարություն» աշխատության վկայություններով: Հայաստանում եղել է ինչպես բուսաբուժություն, այնպես էլ օգտագործվել են օգտակար տարատեսակ հանածոները: Այդպիսի մի հանածո է եղել նաև խոլոքի բարը, որի մասին հիշատակվում է «Աշխարհացոյց»-ում, որպես բուժման միջոցի (այս բարի մասին նշվում է Սկյութիայի նկարագրությանը

³¹ Катон М.П. Земледелие. М.-Л., 1950; История медицины. Под ред. Петрова Б.Д. Т. 1. М., 1954. С. 76; Оганесян Л.А. Նշվ. աշխ. էջ 47 և հաջ: Ранович А.Б. Восточные провинции Римской империи в I-III вв. М., 1949; Geschichte der Medizin, hrsg. v. A. Mette u. I. Winter, Berlin, 1968.

³² Պիստակ-պիսակի վերաբերյալ մանրամասն տե՛ս Ղազարյան Ռ.Ս., Ավետիսյան Հ.Մ., Միջին հայերենի բառարան, Երևան, 2009, էջ 655, 2-րդ բարեփոխ. հրատ., Անանիա Շիրակացի, Մատենագրություն, Թարգ. առաջարկներ և ծանոթագր. Արքայախանյան Ա.Գ. և Պետրոսյան Գ.Բ., Երևան, 1979, էջ 292-294, 296 և հաջ:

վերաբերող հատվածում)³³: Նշվում է նաև կալի օգտագործման վերաբերյալ, որպես դեղամիջոցի: Ս.Վ. Մարգարյանը ենթադրում է, որ բուժումն իրականացրել են հեքիմները, ինչպես նաև այն ժամանակների մտավորականները՝ հոգևորականները³⁴:

Չպետք է կասկածել, որ առաջիններից մեկը հենց Հայաստանում է գործել հռոմեական «*Medicus a Republica probatus* (Պետության կողմից հաստատագրված բժիշկ)» սկզբունքը, այսինքն՝ ամեն մարդ չէ, որ առանց թույլտվության առկայության կարող էր բուժել հիվանդ կամ վիրավոր զինվորներին: Մինչև դրան հասնելը նրանք անցել են երկարատև փորձնական (պրակտիկ) ճանապարհ: Հանրապետական և կայսերական Հռոմում ռազմաբժշկությանն մեծ ուշադրություն հատկացնելը կախված էր նաև այն հանգամանքի հետ, որ շատ դեպքերում իշխանությունն անցնում էր նախկին զինվորականներին: Այսպիսի դասական օրինակներ կարող են լինել Գայոս Մարիուսը, Հուլիոս Կեսարը, Տրայանոսը, Սեպտիմոս Սևերոսը և շատերը: Հայտնի է, որ 235-284թթ. իշխած հռոմեական կայսրերին պատմագրության մեջ տվել են «զինվորական» մականունը: Հայաստանում այս չափորոշիչներին իրենց գործունեությամբ համապատասխանել են առնվազն Սրտաշես I և Տիգրան II Սեծ թագավորները, որոնց մասին ավելի մանրամասն կլիտավի հետազայում: Հայկական բանակում ևս եղել են սանիտարական խմբեր, որոնց Հռոմում մշտապես անվանել են «*deputati*» և կռվի

³³ Stn՝ Անանիա Շիրակացի, Նշվ. աշխ., էջ 307; Мхитар Гераци. Утешение при лихорадках. § 76-77. Ереван, 1955. Пер. с арм., введ. и коммент. Арутюняна Г.Г. Կճոյան Ա.Ս., Մխիթար Շերացի (Օնոյան 850-ամյակի առթիվ), ՊԲՀ, 1968 № 2, էջ 81-88: Հին Հունաստանում և Հռոմում երկի բժշկության հարցերին հատկացվել է առավել մեծ ուշադրություն և սրա մասին է խոսում հրատարակված աշխատություններից մեկը: Стн՝ Шульц Ф.Ю. Медицина в поэзии греков и римлян. М., 1987.

³⁴ Մարգարյան Ս.Վ., Նշվ. աշխ., 21:

դաշտից դուրս են բերել վիրավորներին՝ ցույց տվել առաջին թշկական օգնությունը:

Գարեոր է նաև պաշտպանողական կառույցների վերաբերող բաժինը: Հեղինակն իրավացիորեն դրանք բաժանում է երկու խմբի՝ բնական, որոնց մասին նշվեց ամենասկզբում և արհեստական: Միանգամայն պարզ է, որ մենագրության սահմաններն հնարավորություն չեն տվել, որպեսզի Ս.Վ. Մարգարյանը անորադատնա բոլոր այդ կառույցների ուսումնասիրությանը, ուստի և նա ընտրել է հարցի մեկնաբանության լավագույն ճանապարհներից գլխավորը: Քանի որ, այն ժամանակներում, հնարավորություններն առավել քան սահմանափակ էին (խոսքը Ս.Վ. Մարգարյանի կողմից գրքի շարադրման տարիների մասին է), ուստի հեղինակը անդրադարձել է ամրոցա-բերդաշինության խնդրի վերլուծությանը՝ խորհրդային Հայաստանի տարածքում պահպանված ամրությունների ուսումնասիրությամբ: Այստեղ հեղինակը խնդրը առարկա հարցին մոտենում և մեկնաբանում է լիովին այլ տեսանկյունից: Նա մեկնաբանում է մայրաքաղաքներ Երվանդաշատի, Արտաշատի և հատկապես Գառնիի բերդի պաշտպանական ամրությունների ռազմա-ստրատեգիական նշանակությունները՝ այն ժամանակների պատերազմական պահանջներին համապատասխան:

Հեղինակը մեծ ուշադրություն է հատկացնում ինչպես կառուցված տեղանքների ռազմավարական նշանակությանը, այնպես էլ բուն շինարարությանը առնչվող խնդիրներին: Դրանք այդ տեսադաշտից կարող էր դիտարկել միայն զինվորական կրթություն ստացած և, առավել ևս, պատերազմների բովով անցած անհատը: Այն, որ հայերը կառուցել են հուսալի ամրություններ, կասկածանք չի հարուցում: Այս մասին վկայում են ինչպես մեր մատենագիրները Խորենացին, Փավստոսը, Փարպեցին, Շիլշեն և հաջորդ դարաշրջանի հեղինակները, այլև օտարալեզու պատմիչները: Հատկապես պետք է առանձնացնել

Պրոկոպիոս Կեսարացու «Կառուցումների մասին (Περὶ κτισμάτων, 1.10.1, De aedificiis, այս հեղինակը ապրել է մոտ. 500-565թթ.)» աշխատությունը³⁵:

Գաննիի վերաբերյալ Մ.Վ. Սարգսյանը նշում է. «...Գաննիի բերդը չի դասվել սովորական բերդերի շարքը, այլ եղել է «արքայական ամրոց...», ուստի նրա պաշտպանությունը պետք է սպահովված լիներ ավելի ուժեղ պատվարներով»³⁶: Վերլուծելով նա նշում է նաև. «...կառուցողները հյուսիս-արևելյան պարիսպը առաջ են քաշել, օգտվելով նրա առևուժ գտնվող խոր կիրճի բարձր ուղղաձիգ ժայռից... Դրանով իսկ միաժամանակ ստեղծվել է այդ պարսպի կենտրոնական աշտարակների համար նետաձգության տեսածիր...»³⁷: Սակայն ամենակարևորը

³⁵ Տես՝ Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին 5, Բյուզանդական աղբյուրներ Ա, Պրոկոպիոս Կեսարացի, թարգ. բնագր. Բարթիկյան Հ., Երևան, 1967, էջ 166-204; Տես նաև Ապոլլոփոր. Полиоркетика. Греческие полиоркетика. Вегедий. СПб., 1996. С. 29-63; Афиней Механик. О машинах. Греческие полиоркетика. Вегедий. СПб., 1996. С. 67-86.

³⁶ Սարգսյան Մ.Վ., Նշվ. աշխ., էջ 24; Տես նաև՝ Սահիկյան Ա., Գանու անտիկ կառույցների ճարտարապետությունը, Երևան, 1983; Аракелян В.Н. Гарни. Ереван, 1952; Токарский Н.М. Архитектура Армении IV-XIV вв., Ереван, 1961.

³⁷ Սարգսյան Մ.Վ., Նշվ. աշխ., էջ 24: Հայաստանի բերդերին անդրադարձել են նաև այլ ուսումնասիրողներ, բայց հարցը մեկնաբանել են կապված պատմության, հնագիտության, արվեստի, շինարարության և այլ հարցերի հետ: Տես՝ Յովհաննեսյան Մ., Հայաստանի բերդերը, Վենետիկ, 1970; Նույնի՝ Հայաստանի բերդերը. ՊԲՀ, 1963, № 4, էջ 39-50; Թորամանյան Թ., Հայկական ճարտարապետությունը, Երևան, 1942, էջ 10 և հաջ: Զարյան Ա., Այնթափներ հին և միջնադարյան Հայաստանի քաղաքաշինության պատմության, Երևան, 1986; Հակոբյան Թ.Խ., Հայաստանի պատմական աշխարհագրություն, Երևան, 1968, էջ 127 և հաջ: Հակոբյան Հ.Պ., Մեծ և Փոքր Հայքերի սահմանագլխի հռոմեական ամրությունների համակարգը, ՊԲՀ, Երևան, 1986, № 4, էջ 139 և հաջ:

հեղինակի այն եզրահանգումներն են, որ վերաբերում են թևային աշտարակներին. «...հիմնական պարսպից դուրս դնելը ստեղծել է «պարկ» կենտրոնական պատի վրա գրոհող թշնամուն մեջը զգելու համար»³⁸:

Այստեղ խոսվեց միայն այն բերդերի մասին, որոնք ժամանակին եղել են Մ. Հայքի թագավորության կենտրոնում, բայց եթե նայում եք մեր երկրի պատմական քարտեզներին, սպա տեսնում եք, որ նմանատիպ շինություններ եղել են նաև սահմաններին, հատկապես հարավային, որը մեր հայրենիքի ամենավտանգավոր հատվածն է հանդիսացել³⁹: Վերջապես հեղինակը նշում է, որ ամրությունները կառուցվել են այնպես, որպեսզի կարողանան, որքան հնարավոր է հետևել հակառակորդ զորքերի տեղաշարժերին: Այսպիսով, հայկական ամրությունները և գործը, ինչպես և մյուս երկրներում էր, բաժանված է եղել ներքին և արտաքին սահմաններն հսկող ու նրանց անվտանգությունն ապահովող զորախմբերից: Դրանց անտիկ դարաշրջանում համապատասխանաբար անվանել են Limes interior և Limes exterior:

Հետևելով Մ.Չ. Սարգսյանի դիտարկումներին, կարելի է եզրակացնել, որ պաշտպանական ամրությունների կառուցումը Հայաստանում սկսվել է Խախնադարից:

³⁸ Սարգսյան Մ.Վ., Նշվ. աշխ., էջ 24:

³⁹ Տես՝ Երեմյան Ս.Տ. Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի քարտեզը, Երևան, 1963; Նույնի՝ Մեծ Հայքի թագավորությունը IV դ. (298-385թթ.), Երևան, 1984; Мутафян, К., Лев, ван Э. Исторический атлас Армении. Ближний Восток и южный Кавказ с VIII века до Р.Х. до XXI века. М., 2012. С. 11.

Այս նախապատրաստական նկարագրից հեղինակը անցում է կատարում հին հայկական երեք թագավորական դինաստիաների ժամանակ գոյություն ունեցած բանակների նկարագրության և վերլուծության խնդիրներին: Խոսքը վերաբերում է Երվանդունիների⁴⁰, Արտաշիսյանների և Արշակունիների օրոք գոյություն ունեցած զորքերին, բայց Մ.Վ. Մարգարյան իր շարադրանքը հասցնում է համարյա մինչև արաբների առաջին նվաճումներն ընկած ժամանակաշրջանը (VII դ. 40-50-ական թթ.):⁴¹: Նա առաջիններից մեկն էր, որ վերլուծեց Երվանդական Հայաստանի բանակի հետ կապված հարցերը Երվանդ I Սակավակացի օրոք (հին հուն. Ὀρόντης, իշխել է 580-560թթ.):

Այստեղ առաջնահերթ նշանակություն ունեն հույն մատենագիր Բենեոփոնի (430-354թթ.) հայտնած վկայությունները: Հայկական ռազմարվեստը այս դարաշրջանում արագընթաց զարգացում ապրեց, քանզի այն համարյա մշտապես գտնվում հարևանների ագրեսիվ հարձակումների և իր ստրածք նրանց ներխուժումների վտանգի պայմաններում: Հավասարի է, որ Հայաստանն այդ ժամանակ արդեն ունեցել է 40հազ. հետևակ և

Ցիսազ. հեծելազոր բանակ, որը կարելի է համարել, այն ժամանակների համար, բավականին մեծաքանակ զորք⁴²:

Մ.Վ. Մարգարյանը միայն ռազմա-ստրատեգիական տեսանկյունից է վերլուծում, թե ինչու՝ Երվանդ I թագավորի և նրա որդի Տիգրան Երվանդյանի կողմից (իշխել է 560-524թթ.) մարերի Աստիազես արքայի դեմ (584-550թթ.) կազմակերպված ապստամբությունն անհաջողության մատնվեց: Նա գտնում է, 1) որ հայերի կողմից ապստամբության կազմակերպման ժամանակն ընտրված էր ճիշտ, քանզի Մարաստանը միաժամանակ պատերազմում էր և՛ Եգիպտոսի, և՛ Լիդիայի թագավորությունների դեմ, 2) ըստ հեղինակի հայոց արքան այս ընթացքում թույլ է տվել ստրատեգիական սխալ, որի պատճառով էլ մարերը անարգել չջիտես թե որտեղից, հայտնվել են հայոց պետության տարածքում և պաշարել են մայրաքաղաք Արմավիրը: 3) Բացարձակապես գոյություն չի ունեցել և ոչ մի կապ պետության բուն սահմանը վերահսկող բանակների և երկրի ներքին տարածքում գտնված զորքերի միջև: Մարերը, կարծես թե, «անհայտ» ճանապարհով, կարողացել են նրանց շրջանցել ու հայտնվել են մեր զինվորների թիվունքում⁴³:

Նշտաբայում սկսվում է հայ-արեմենյան ռազմական ընդհարումների ժամանակաշրջանը (550-331թթ.): Այդ ընդհարումներն, որ տեղի են ունեցել նորաթուխ թագավոր Նարեհ I-ի գահակալման ամենակզբին (522-486թթ.) պատմագրության մեջ առավել հայտնի են 522-521թթ. հակապարսկական ապստամբություններ անվամբ: Սակայն, եթե

⁴² Xen. Κύρον. II, I, 6: Ἄντις' Ὁ ἀρχοῦν ἐξ ἐδρῆ / Περ. Ποναριάδου Β. Β. Σμύτσκυκαρ, 2005; Strabo. XI, XIV, 15: Σὺν ἑὐαίᾳ Ἀρυτιόνῃ Ἀ. Ἰ. Παρτίου Ὀροντίδου ἄνωθεν «Ὅριον τῆς γῆς» Γεκατέξ Μιλετικῆς. Ἰραν-Ναμε, 2012, № 3. С. 150-174.

⁴³ Մարգարյան Մ.Վ., Եզվ. աշխ., էջ 33-34: Տես նաև Մանուկյան Հ., Երկ. Հ. Ա, էջ 41-52; ՀԺԴ, Հ. I, էջ 435 և հաջ.: Дьяконов М. М. Очерк истории древнего Ирана. М., 1961. С. 48-49.

⁴⁰ Երվանդյանական Հայաստանի բանակի վերաբերյալ մանրամասն տես՝ Հակոբյան Հ., Հայկական բանակն ու ռազմարվեստը Երվանդունիների օրոք, Հ. 9, Երևան, 2013 («Հայոց պատերազմները և ռազմարվեստը» մատենաշար):

⁴¹ Նեղինակը համարյա չի անդրադարձնում Ուրարտույի (Վանի թագավորության ռազմարվեստին՝ մ.թ.ա. մոտ. 860-590թթ.): Ավելի հանգամանակից տես՝ Դեմոյան Հ., Վանի թագավորության պատերազմներն ու ռազմարվեստը, Հ. Բ, Երևան, 2009 («Հայոց պատերազմները և ռազմարվեստը» մատենաշար):

Մարաստանի դեմ տեղի ունեցած հայկական «ըմբոստությունը» ճնշվեց շատ արագ և, այն տպավորությունն էր, որ ոչինչ էլ չի եղել, ապա Դարեն I-ի դեմ բարձրացված ապստամբությունը ճնշվեց միայն հինգերեք փորձից հետո ⁴⁴: Հավանաբար, այս անգամ հայերը արդեն հասկացել էին նախկինում իրենց կողմից թույլ տված կոպիտ սխալները: Այս մասին է հուշում նաև ապստամբության հետագա ողջ ընթացքը:

Հեղինակը գտնում է, որ հայերի պարտությունն այս ապստամբություն-պատերազմում պայմանավորված էր հետևյալ դրդապատճառներով. 1) պարսիկներին չորս անգամ հաղթելուց հետո հայերի մոտ կար այն մտայնությունն ու համոզվածությունը, որ պարսկական զորքը կրկին չափազանց թույլ է լինելու, որը և ունեցավ ճակատագրական նշանակություն, 2) հայերը իրենց գործողությունները ամենևին չէին համաձայնեցրել մյուս ապստամբ ժողովուրդների հետ, որոնք ևս այդ ժամանակ գտնվում էին արեմենյանների տիրապետության ներքո (այստեղ խոսքն առաջին հերթին վերաբերում էր հարևան Բարեղոնին և Ասորեստանին): Հայաստանի ծայր հարավում գտնված Կորդուք և Աղձնիք երկրամասերն չհասցրին կրած նախկին կորուստներից հետո կրկին իրենց բանակներն համալրել: Իսկ ամենամեծ կորուստներն, պարսկական ամբողջ տեղի ունեցած այդ հինգ արշավների ընթացքում հենց վերջիններս էին ունեցել:

Բայց այսուհետև հայերն հնարամտորեն սկսեցին օգտագործել տեղանքի դժվարություններն իրենց հակառակորդների դեմ, որպեսզի հասնեն իրենց նպատակներին:

⁴⁴ Фаррох К. Армия великих царей. М., 2009. С. 27-33; Викиер А. Цари Персии. Тираны и мудрецы древнего Востока. М., 2016. С. 53-76; Дандамаев М.А. Политическая история Ахеменидской державы. М., 1985. С. 93; Фрай Р. Наследие Ирана. М., 2002. Изд. второе. С. 135 и дал; Дьяконов М.М. Указ. соч. С. 91-94; Олмстед А.Т. История персидской империи. М., 2015. էջ 219 և հաջ:

Փաստորեն նախորդ փորձը «դաս» հանդիսացավ հետագայի համար ռազմական գործողություններ հակառակորդների դեմ ծավալելու ընթացքում: Թշնամիների դեմ կռիվներում մեծ դեր սկսեցին խաղալ վերջապահ զորքի (արիերգարդի) մղած կռիվները: Վերջինս թշնամիներին սկսեց պատճառել ոչ միայն կյուֆական ու մարդկային մեծ վնասներ, այլև նախապես սկսեց զգուշացնել հակառակորդի հիմնական ուժերի կողմից նախապատրաստվող հարձակումների մասին: Այսուհետև հայերը սկսեցին նաև կազմակերպել միտումնավոր նահանջներ, որպեսզի թշնամուն զրկեն թիկունքից եկող օգնությունից: Նրանք հակառակորդին «տանում» էին դեպի իրենց երկրի լեռնային շրջաններն, ձորերն ու կիրճերը, հասցնում ուժասպառության վիճակի, ապա կազմակերպում էին անակնկալ, հանկարծակի հարձակումներ ⁴⁵:

Երվանդականների բանակը ունեցավ կարևոր նշանակություն նաև այն շրջանում, երբ Հայաստանն ընդգրկված էր աշխարհակալ Արեմենյան տերության կազմում: Հետագայում այսպիսի կարևորություն ձեռք բերեց նաև Փոքր Հայքի պետության գործը, որը առաջնորդել են, համաձայն մեզ հասած վկայությունների, սատրապներ Երվանդը (մ.թ.ա. 331-300թթ.) և Միթրատուստը (կամ Միհրվախիշտի, իշխ. է հավանաբ. մ.թ.ա. IV դ. վերջին քառ.) ⁴⁶:

⁴⁵ Մարգարյան Ս.Վ., Նշվ. աշխ., էջ 46-47:

⁴⁶ Stru Just. X, 3; ՀճՊ, Հ. I. էջ 489 և հաջ: Սամանյան Հ., Նշվ. աշխ., էջ 95; Арутюнян А.Ж. Армения, государства Восточного Средиземноморья и Иран (189г. до н.э.-298г. н.э.). Ростов-на-Дону, 2015. С. 33-34; Он же. Вопрос трех Армений в историко-географической концепции Страбона. Проблемы истории, филологии, культуры. М.-Магнитогорск-Новосибирск, 2017. № 3. С. 186-187; Միթրատուստի վերաբերյալ տես Դьяконов И.М. История Мидии: От древнейших времен до конца IV в. до н.э. М.-Л., 1956. С. 355; Շահինյան Լ.Փ., Մովսես Խորենացու «Պատմության» մեջ հիշատակվող Վահեի մասին, ՊԲՀ,

Հենվելով արդյուրներում գոյություն ունեցած սակավ վկայությունների վրա Ս.Վ. Մարգայանը կարողացել է վերականգնել, թե ինչ ստորաբաժանումներից ու գորավիավորումներից կարող էր կազմված լինել այն ժամանակների հայոց զորքը: Ամենաներքևում կամ ամենանախնական միավոր է եղել լոխը (կամ լոխոսը - λόχος), որի կազմում եղել են 12 զինվորներ: Լոխերը միավորվել են տաքսիսների շուրջը (τάξις - սա բազմաձայն բառ է և հին հուն. թարգ. է զորաշարք, ենթակայության ներքո գտնվել, մարտական դիրք, մարտաշարք և այլն)⁴⁷: Մեկ տաքսիսի կազմում կարող էր լինել 12-16, իսկ երբեմն նաև, չի բացառվում, որ մինչև 24 լոխոսներ: Հիմնականում տաքսիսն ունեցել է 144 զինվորներ: 12 տաքսիսներն միասին վերցված կոչվել են խիլարխիաներ (հին հուն. - χιλιαρχία), որը բաղկացած է եղել 1.700 հոգուց: Վերջապես 12 խիլարխիաները միավորվել են մուրիադոսների մեջ (μυριάδος - որտեղ եղել է 20հազ. զինվորական, երբեմն նշվում է նաև մ/րիադոս ձևով): Ս.Վ. Մարգայանը նաև գտնում է, որ հին պարսկական, այն է արեմենյան և երվանդական Հայաստանի բանակներն ունեցել են ճիշտ նույն կառուցվածքը: Նրանք ունեցել են նաև ռեզերվային (պահեստային) ուժեր, որոնք կոչվի մեջ են մտել միայն կրիտիկական կամ ճակատագրական պահերին: Վերջիններս, որպես չգրված օրենք հիմնականում հարձակվել են

հակառակորդների թևերում գտնված ուժերի վրա և նրանց հասցրել են հուժկու հարվածներ⁴⁸:

Ս.Վ. Մարգայանը նաև գտնում է, որ հետագա դարաշրջաններում բանակներում տեղի են ունեցել նոր վերակազմավորումներ, որը եղել է համարյա բոլոր ժողովուրդների մոտ, բայց բաժանման սկզբունքներն համարյա թե չեն փոխվել: Այս պատճառով էլ իր հետագա, որը շարադրանքի ընթացքում, հեղինակն այլևս այս խնդրին չի վերադառնում: Այս առումով նրա շարադրանքում բացառություն է կազմում միայն առանձնահատուկ անդրադարձը մեր Տիգրան II Մեծի գործին, որը նա նկարագրում է բավականին մանրամասն⁴⁹: Արեմենյանների անկումից հետո որը Ա. Ասիան, այդ թվում և Հայաստանը անցում կատարեց որակապես մի նոր ժամանակաշրջանի՝ հելլենիզմի, որը առանձնահատուկ վերլուծություն է պահանջում, ինչպես կյանքի մյուս բոլոր մնացյալ բնագավառների, այնպես էլ հնագույն ժամանակների բանակների ուսումնասիրության տեսանկյունից:

⁴⁸ Հայոց բանակի կազմակերպման և կառուցվածքի մասին մ.թ.ա. 560-540-ական թթ., ըստ Քսենոփոնի «Կյուրոպղիա»-յում պահպանված վկայությունների տես Ս.Վ. Մարգայան, Նշվ. աշխ., էջ 34 Հեղինակը կազմել է նաև մեկ այլ սխեմա հայոց զորքի մարտակազմի վերաբերյալ: Տես՝ նույն տեղում, էջ 35:

⁴⁹ Մակեդոնացին այնուհետև Հայաստան է ուղարկել իր զորավարներից Մենոսին, որպեսզի նա գրավի այստեղի գավառներից Սպերը (գտնվել է Բարձր Հայք նահանգի կազմում՝ Ս. Հայքի թագավորության հյուսիս-արևմուտքում): Այս գավառն հայտնի էր իր ոսկու հանքերով, սակայն Մակեդոնացու զորավարը պարտվել է նեոսցել է հայկական տարածքներից: Տես՝ Strabo, XI, XIV, 9; Appian. Takticheskoe iskusstvo / Пер. Нефёдкина А.К. СПб.; 2010: Ե.Ա. Ռազվիկը հատուկ ուշադրություն է հարկացրել Մակեդոնացու հեձևվարի ուսումնասիրության խնդրին: Տես՝ Razin E.A. Указ. соч. С. 214 и дал. 244: ՀժՊ., Հ. I, էջ 510-516; Дьяконов М.М. Указ. соч. С. 137-156; Олмстед А.Т. Указ соч. С. 530-540.

1973, № 4, էջ 172-178: Այս հեղինակը գտնում է, որ Խորենացին Միթրատոստես-Միրիվախիշտին անվանել է Վահե:

⁴⁷ Տես՝ Մարգայան Ս.Վ., Նշվ. աշխ., էջ 34; Լան՝ Фаррох К. Персы. Армия великих царей. М., 2009. С. 41 и дал.; Голицын Н.С. Всеобщая военная история древних времен, СПб., 1872; Разин Е.А. История военного искусства. В 3-х т. Т. 1. История военного искусства XXXI в. до н.э. - VI в. н.э. СПб., 1999. էջ 78-80, 82, 84 և հաջ., նաև էջ 226-228; Дворецкий И.Х. Древнегерцезко-русский словарь. Т. II. М., 1958. С. 1602.

ԳԼՈՍԻ ԵՐՐՈՐԴ

ԱՐՏԱՇԻՍՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԱԿ

Ա./ ՀԱՅՈՑ ԶՈՐՔԸ ԱՐՏԱՇԵՍ 1-Ի ՕՐՈՔ

Աքեմենյանների անկմամբ ողջ Ա. Ասիայում սկսվեց որակապես մի նոր դարաշրջան, որը համաշխարհային պատմագրության մեջ ստացել է հելլենիզմ անվանումը: Սակայն իրավիճակը լիովին այլ կերպարանք ուներ Մ. Հայքում, ի տարբերություն հարևան առաջավորասիական պետությունների: Մեր երկրում իրենց իշխանությունը վերականգնած Երվանդունիները ոչինչ էլ չէին մտածում Հայաստանում գոյություն ունեցած նորամուծությունների «ներմուծման» կամ օգտագործման ուղղությամբ: Փաստորեն ստացվել էր յուրահատուկ անհամամասնություն Հայաստանի և երևա դրացի թագավորությունների միջև: Աստիճանաբար Հայաստանը գնալով թուլանում էր, զիջում էր իր տեղն ու դերը միջագային, միջպետական փոխհարաբերությունների բնագավառում:

Հայաստանում ստեղծված իրավիճակը չէր կարող վրիպել հարևանների, հատկապես հզոր Մելևկյան պետության թագավորների աչքից (մ.թ.ա. 312/311-63թթ.) և սկսվեց տարածքային կորուստների ժամանակաշրջանը, որը և շարունակվեց մինչև մ.թ.ա. 190-189թթ., երբ Մ. Հայքում տեղի ունեցավ իշխանափոխություն (հեղաշրջում) և գահն անցավ Արտաշիսյանների դինաստիային, որն հիմնեց Արտաշես I Բարեպաշտը (հին հուն. *Eὐεργέτης*, Էվերգետ, նա հելլենիզմի դարաշրջանի թագավորներից առաջինն էր, որ ստացավ այս մականունը և կտավարել է մ.թ.ա. 189-մոտ. 160թթ.): Արտաշես I-

ի՛ հայոց բանակի կապակցությամբ մասնավորապես, իսկ հելլենիստական պետությունների զորքերի ուսումնասիրության վերաբերյալ ընդհանուր առմամբ, վերջին երկու կամ երեք տասնամյակներին պատմաբանների կողմից կատարվել է առեղի սաշխատանք և հայտնագործություններ: Այս ժամանակներից սկսվեց անցումը պրոֆեսիոնալ բանակներին, որը որակապես նոր երևույթ էր ռազմարվեստների պատմության մեջ:

Բնականաբար, այս ամենի վերաբերյալ Մ. Կ. Սարգսյանը չէր կարող իմանալ: Խոսքը վերաբերում է կատոկլիզացիոն պրոցեսներին (*κατοικία* – հին հունարեն, որը լայն իմաստով թարգմանվում է բնակավայր, առավել նեղ իմաստով՝ նախատեսված միայն զինվորականների համար, անգլ. *թարգ. է military settlements*): Ճիշտ է, առաջին անգամ հայ պատմագրության մեջ այս մասին անուղղակի նշեց, առանց բնութագրման ակադ. Գ.Խ. Սարգսյանը, բայց այնուհետև այս նշանավոր մասնագետի ենթադրությունն անուշադրության մատնվեց⁵⁰:

Մ. Կ. Սարգսյանը չի օգտագործում այս տերմինը, սակայն նրա շարադրանքը շատ մոտ է այն տեսելու և զգալու առումներով: Նա հատկապես մեծ ուշադրություն է հատկացնում Երվանդաշատի 190թ. ճակատամարտի ուսումնասիրությանը, որի արդյունքում էլ Մ. Հայքում իշխանությունն անցավ Արտաշես I-ին: Վճռական ճակատամարտը տեղի է ունեցել Արաքս և Ախուրյան գետերի միացման տեղում, որին, համաձայն հետազոտողի, նախորդել են մի քանի տեղային բնույթ կրող ընդհարումները: Կռիվներ եղել են նախ Արագած, ապա Ալաջա լեռների մոտ: Այնուհետև հակառակորդ կողմերը հանդիպել են ներկայիս Տեկորի սարահարթի շրջանում, որից հետո միայն տեղի է ունեցել Երվանդաշատի վճռական ճակատամարտը:

Գահի հավակնորդ Արտաշեսին մեծապես օգնել է Սմբատ Բյուրատի ցուցաբերած աջակցությունը և վերջինիս տված

⁵⁰ ՇԺՊ, 2. I, էջ 688:

ռզգմական խորհուրդները ⁵¹: Միայն այդ պայթարի ամենավերջում է, որ կողող կողմերի միջև տեղի է ունենում գլխավոր բախումը՝ Երվանդաշատի մոտ, որտեղ էլ Արտաշեսը կարողանում վեջապես հաղթահարել հակառակորդի դիմադրությունը: Ա.Վ. Սարգսյանը հատկապես մեծ ուշադրություն է հատկացնում այս մարտի ընթացքում Արտաշեսի կողմից գործը դասավորելու խնդրին: Նա նշում է. «Արտաշեսի զորաբանակի կենտրոնում առջևից շարվել է Մմբատի հեծելագործը, այնուհետև, երկրորդ գծի վրա, հետևակի հիմնական ուժերը՝ Արտաշեսի գլխավորությամբ: Աջ և ձախ թներում շարվել են Արտաշեսի կողմն անցած նախարարների զորքերը: Աջ և ձախ թների պաշտպանության համար դասավորվել է արքայական թիկնապահ և նախարարների հեծելագործը...» ⁵²:

Ապագայում հենց այս բանակն էլ պիտի ապահովեր նրա կողմից հայկական տարածքների վերամիավորման իրականացման գործընթացը, որը պատմագրության մեջ առավել հայտնի է չորս ուղղություններով արշավանքներ անվամբ: Այս ամենին զուգահեռ, միաժամանակ տեղի էր ունենում նաև երկրի վերակազմավորման և ռեֆորմների իրականացման պրոցեսները: Հայաստանը հսկայի քայլերով ընթանում էր դեպի հելլենիզմ, որը լիովին անտեսվել էր մինչ այդ իշխած Երվանդունիների կողմից ⁵³,

⁵¹ Խորենացի, Բ, խգ-խը, Արտաշեսի հետագա կռիվների մասին տես՝ նույն տեղում ծբ-ծգ: Սարգսյան Ա.Վ. Նշվ. աշխ., էջ 54-56:

⁵² Սարգսյան Ա.Վ., Նշվ. աշխ., էջ 54-56: Տես նաև ՇժՊ, Հ. 1, էջ 534, 595, 674, 687: Երվանդաշատի ճակատամարտի քարտեզ սխեման տես՝ Սարգսյան Ա.Վ. Նշվ. աշխ., էջ 57; նաև Кашев В.И. Эллинистический мир и Рим. Война, мир и дипломатия в 220-146 гг. до н.э. М., 1993.

⁵³ Арутюнян А.Ж. Реформы Арташеса I и модернизация древнеармянского общества. Русский язык в Армении. Ереван, 2007, № 3. С. 46-52; Նույնի՝ Реформы Арташеса I и эллинизация древнеармянского государства. Научная мысль Кавказа. Ростов-на-Дону, 2007, № 4. С. 48-55.

սկսում էր աստիճանաբար նմանվել ժամանակի մյուս քաղաքակիրթ պետություններին: Արդյունքում՝ գնալով անընդհատ աճում էր նաև Հայաստանի միջազգային հեղինակությունը:

Ա.Վ. Սարգսյանը հատուկ ուշադրություն է հատկացնում Արտաշես I-ի կողմից չորս սահմանապահ իշխանությունների՝ րոլշխությունների կազմակերպման գործին, որը և հանդիսացավ, արդեն վերնում մեր կողմից հիշատակված, կատոլիկացիայի կիմբը: Հայաստանի խնդրում դա ուսումնասիրվում և հաստատվում է հայտնաբերված վիմագիր տեքստերի տվյալ դեպքում Արտաշեսի ժամանակաշրջանին վերաբերող հողաբաժան սահմանաքարերի տեքստերի ուսումնասիրությամբ (դրանք պատմագիտական գրականության մեջ ստացել են տերմինուս (Terminus) անվանումը): Այդ տեքստերն, աննշան ապրեքություններով հանդերձ, ունեն համարյա նույն բովանդակությունը: Ահա դրանից մեկը՝

rtssy	Արտաշես
mlk br zy	թագավոր, Ջարեհի որդի ⁵⁴
zrytr hlk	Երվանդական ⁵⁵ , բաժանեց
rq byn	հողը
qry[.]	մասերի.... ⁵⁶

⁵⁴ Անտիկ պատմիչները Ջարեհին անվանում են Ջարիայրես (*Ζαριαδρής*) ձևով: Տես՝ Strabo. XI, 14, 5, 15.

⁵⁵ Անտիկ պատմիչների մոտ Օրոնսյաններ: Տես՝ Xen. Anab. II, 4, 9; V, 40 և հաջ:

⁵⁶ Արձանագրության տեքստը տես՝ Тирация Г.А. Ещѣ одна арамейская надпись Арташеса I, царя Армении. ВДИ. 1980, № 4. С. 102; Նույնի՝ Новонайденная надпись Арташеса I, царя Армении. ВДИ. 1959, № 1. С. 88-90.

Հայտնաբերված այս տեքստերից, իր առավել մանրամասն բովանդակությամբ մյուսներից տարբերվում է 1971թ. Տավուշի մարզի Թեղուտ գյուղի մոտակայքում գտնված տեքստը: Այն ևս գրված է արամերենով և այստեղ նշված է.

bsnt rtsrkssy mlk rwndkn br zrytry tby qtrbr hšhrst wnqpr 10 [r]trksrk[s]s	Արտաշես արքա Երվանդականի Ջարեհի որդու, Բարու թագակրի, Խշատրիայի դաշնակցի, հաղթողի այն ամենը, ինչ բաշտվելում է չարը, 10-րդ տարում Արտաշեսը Ջարեհի որդին բաժանեց հողը գյուղերի միջև ⁵⁷ :
mlk rwndkn br zrytr[y?] hiq rq bny qry	

Այս արձանագրությունները՝ Արտաշիայան Հայաստանում կատոլիկիզացիայի աստաճանն պարզաբանելու տեսանկյունից հայագիտության մեջ, առայժմ ուսումնասիրվել է միայն տողերիս հեղինակի կողմից ⁵⁸: Ա.Վ. Սարգսյանը հենվելով Արտաշես I-ի

⁵⁷ Արձանագրության հայերեն տեքստը տես՝ Հայ ժողովրդի պատմության բրեստումատիա, Հ. 1, Հնագույն ժամանակներից մինչև Ք.հ. 298 թվականը, Երևան, 2007, Գազմ. Հովհաննիսյան Պ.Հ., Մովսիսյան Ա.Ե., էջ 298-299:

⁵⁸ Steu' Арутюнян А.Ж. Арташес I и основание древнеармянской профессиональной армии. В.ДИ. 2009. № 2. С. 129-137; Նույնի՝ К вопросу катойкизации в древнеармянском государстве. Мнемон. Исследования и публикации по истории античного мира Под ред. проф. Фролова Э.Д. Вып. 9. СПб., 2010. С. 133-146; Նույնի՝ О численности армии Тиграна II. Мнемон. Исследования и публикации по истории античного мира. Под ред. проф. Фролова Э.Д. Вып. 11. СПб., 2012. С. 127-136. Արտաշեսի ունեցած դերը, որպես զորահրամանատարի՝ մասամբ քննարկում է նաև պատմիչ Պոլիբիոսը: Steu' Polyb. XXV, 2; նաև՝ Разин Е.А. Указ. соч. С. 463: Այս հեղինակը Պոլիբիոսի «Ընդհանուր պատմությունը» (ապրել է 201-120թթ.) համարում է ռազմական պատմության շարադրանքի լավագույն օրինակներից մեկը: Steu նաև՝ Фараох К. Указ. соч. С. 131-132.

վերաբերյալ գոյություն ունեցած կցկտուր տեղեկությունների վրա, որպես զորավարի և հրամանատարի եզրակացնում է, որ հայոց արքան կարողանում էր կանխագուշակել, զգալ, թե տակտիկական ինչպիսի մտահաղացումներ ունի հակառակորդը: Պա Արտաշեսը զգում էր հետևելով, թե թշնամին ինչպես է դասավորել իր ուժերը մարտադաշտում՝ մինչև կռվի սկիզբը: Հենց սա էլ ունեցել է վճռորոշ նշանակություն կռվի պահին: Նա նաև գտնում է, որ այս հանգամանքով է պայմանավորված եղել այն, որ Արտաշես I-ի բոլոր ճակատամարտերն էլ տևել են շատ կարճ և ավարտվել են համարյա դեռ «չակված», նրա հաղթանակներով:

Բ./ՏԻԳՐԱՆ II ՄԵԾԻ ԲԱՆԱԿԸ.

Արտաշես I-ից հեղինակը անցում է կատարում Տիգրան II Մեծին (95-55թթ.), որի ռազմավարությանն ու տակտիկայի ուսումնասիրությանը նա իրավացիորեն հատկացնում է չափազանց մեծ ուշադրություն: Սա, հարկավ պայմանավորված էր նրանով, որ Տիգրանն իր գահակալման ամենակրթից մ.թ.ա. 95թ. մինչև 66թ., երբ ստորագրվեց Արտաշատի պայմանագիրը հռոմեացի զորավար Գնետս Պոմպեոսի հետ, անընդհատ գտնվում էր պատերազմների մեջ (այլ կերպ մեր պատմության այդ թվերը կարելի է անվանել պերմանենտ հարատև պատերազմների ժամանակահատված) ⁵⁹: Իր շարադրանքում հեղինակը նախ համառոտակի կանգ է առնում Տիգրան II-ի օրոք տեղի ունեցած պատմական իրադարձությունների նկարագրության խնդրին,

⁵⁹ Հակոբյան Հ., Հայոց պատերազմները և ռազմավարությունը Տիգրան Մեծի օրոք, Հ. Դ, Երևան, 2013 («Հայոց պատերազմները և ռազմավարությունը» մատենաշար), Գեորգյան Ա.Ս., Տիգրան Մեծի լսնակը (մ.թ.ա. 95-55թթ.), Պր. I, Երևան, 2009, Պր. II, Երևան, 2010, Պր. III, Երևան, 2011:

խոսում նրա կատարած նվաճումների վերաբերյալ, իսկ այնուհետև հատուկ ուշադրություն է հատկացնում հայոց նշանավոր թագավորի բանակի ուսումնասիրության խնդրին: Տիգրանի կողմից կատարված բոլոր նվաճումների հիմնական գրավական, նա իրավացիորեն համարում է նրա ենթակայության տակ գտնված, այդ ժամանակի պահանջներին համապատասխան կազմակերպված բանակի անկախությունը:

Նա գտնում է, որ սկսած այս ժամանակներից հայոց բանակում մեծ դեր սկսեց ունենալ սակրավորների գորատեսակը (*саперные войска*), որն ավելի հզորացրեց և կայունացրեց ինչպես հետևակի, այնպես էլ հեծելազորի «դերակատարություններն» հայոց զորքում: Այն ժամանակի սակրավորները ոչ միայն ապահովում էին հայկական բանակների անարգել և անվտանգ անցումները թշնամիների տարածքներով, այլև զբաղվում էին մեծ կարևորություն ներկայացնող մեկ այլ գործով՝ նա՝ հետախուզությամբ: Հեղինակը այստեղ նաև քննարկում է Տիգրան II Մեծի բանակի թվաքանակի խնդիրը, հանգելով այն մտքին, որ դա պետք է բաղկացած լիներ 100հազ. հոգուց: Սակայն առավել կարևոր է նրա կողմից կազմած Տիգրան II-ի բանակի կառուցվածի սխեման, որը լիովին նորություն է պատմագրության և ռազմարվեստի ուսումնասիրության բնագավառներում: Նա գտնում է, որ Տիգրան Մեծի բանակի սկզբնական (նախնական) մասեր են հանդիսացել 50 հոգուց բաղկացած ջոկատները, որը և համարվել է այս զորքի գլխավոր և հարվածային ուժը:

Ս.Վ. Սարգսյանը հետևելով Տիգրան Մեծի նվաճումների ընթացքին, առաջիններից մեկը պատմագրության մեջ, կատարում է մեկ ուշադրավ հետևություն՝ նա՝ նշելով, որ հայոց թագավորը միաժամանակ փոխել է նաև տրաստեղծ պետության վարչա-տարածքային համակարգը: Մեր պատմությունից քաջ հայտնի է, որ մշտապես Մեծ Հայքի թագավորությունը ունեցել է չորս սահմանապահ իշխանություններ կամ բղեշխություններ (պահլավ, bitaxs-տեղպահ, փոխարքա): Հետևելով Տիգրանի

նվաճումներին հեղինակը գտնում է, որ այժմ չի բացատրվում, որ դրանց թիվը ավելացվել է նա երկուսով՝ այսինքն՝ եղել են վեց⁶⁰: Հաճախ պատմագրության մեջ հետազոտողները Տիգրանին մեղադրում են, որ նա սխալ է գնահատել Միհրդատյան III պատերազմի տարիներին Հայաստանի շուրջը ձևավորված միջազգային բարդ իրադրությունը (մ.թ.ա. 74-64թթ.): Մասնավորապես ակադ. Հ. Մանանդյանը գտնում էր, որ Տիգրանը պետք է ի սկզբանե, առանց հապաղելու և մտածելու պատերազմեր Հռոմեական հանրապետության դեմ: Որպես ակադեմիկոս նշանավոր ակադեմիկոսը օգտագործում է. «*Tua res agitur paries cum proximus ardet*» («Երբ հարևան պատն այրվում է՝ վտանգը քեզ էլ է վերաբերվում»)» հռոմեական թևավոր արտահայտությունը⁶¹:

Ս.Վ. Սարգսյանը առաջիններից մեկն էր, որ վերանայեց այս սխալը տեսակետը և դա հիմնավորեց վերլուծելով այն ռազմա-ստրատեգիական իրադրությունը, որ ձևավորվել էր այս տարածաշրջանում: Հեղինակը լիովին արդարացնում է Տիգրան

⁶⁰ Սարգսյան Ս.Վ., Նշվ. աշխ., էջ 64-65: Տիգրան Մեծի գահակալման ժամանակաշրջանի հայոց բանակի ներքին կառուցվածքին վերաբերող սխեման տես՝ Նույն տեղում, էջ 64-65-ի միջև ներդիրում՝ «Հայոց բանակի կառուցվածքը Տիգրան II-ի ժամանակ» վերաստորությամբ հատվածում:

⁶¹ Տես՝ Մանանդյան Հ., Երկեր, Հ. Ա., Երևան, 1977, էջ 477: Այս աշխատության, որ կոչվում է «Տիգրան Բ-ը և Հռոմը. Նոր յուսարանությամբ ըստ սկզբնաղբյուրների» ուսերեն իրատարակությունում օգտագործված է հռոմեական «*Non tu scis, si quas aedes ignis cepit, acriter haud facile sunt defensu quin et comburantur proximaes*» («Դու չես պատկերացնում, որ, երբ կրակն այրոջ ուժով տարածվել է ինչ-որ շենքում, ապա այդ դեպքում համարյա անհնարին է դուրջացնել, որ հարևան շենքերը նույնպես չայրվեն»): Տես՝ Манандян И.А. Тигран Второй и Рим. В новом освещении по первоисточникам. Ереван, 1947. С. 80; Anderson J.G.S. Pompey's Campaign against Mithradates // JRS. Vol. 12. 1922. P. 99-105.

Մեծի կողմից Պոնտոսի պետության արքա և իր աներ Միհրդատ VI Եվպատորին (մ.թ.ա. 111-63թթ.) մերժելու խնդիրը՝ ելևելով ստեղծված միջազգային բարդ իրադրությունից: Այստեղ արդեն խնամփական հարաբերություններ մղվում էին հետին պլան, իսկ պետական շահերը՝ Տիգրանի համար դառնում էին առաջնահերթ գլխավոր գործոն:

Մ.Վ. Սարգսյանը իրավացիորեն գտնում է, որ էթե, ի սկզբանե Տիգրանը հարեր Պոնտացուն՝ ընդդեմ հռոմեացիների, ապա կատարագրեր իր իսկ դատավճիռը: Հենվելով անտիկ մատենագիրների վկայությունների վրա հեղինակը, քայլ առ քայլ, վերլուծում է մ.թ.ա. 69թ. հոկտեմբերի 6-ին տեղի ունեցած Տիգրանակերտի ճակատամարտը⁶²: Մեր հետազոտողը ցույց է տալիս բոլոր այն սխալները, որոնք գործել է Տիգրան Մեծը այս ճակատամարտում: Հանգամանալից վերլուծելով Տիգրան II-ի թույլ տված սխալները այս ճակատամարտի ընթացքում, Մ.Վ. Սարգսյանը հուսահատված եզրակացնում է. «Ինչ չի արել Տիգրանը, արել էր Լուկուլլոսը»⁶³: Տիգրանը ոչ միայն վատ էր

կազմակերպել հետախուզությունը թշնամու ճամբարում, այլև սխալ էր դասավորել նաև իր զորքերը ռազմադաշտում: Եւ չկարողացավ ճիշտ գուշակել, թե որ մասերից էր տեղի ունենալու թշնամու գլխավոր հարվածը: Տիգրանին մեծ հարված՝ իրենց դավաճանությամբ հասցրին նաև Տիգրանակերտում գտնված հույները (նրանց նախկինում հենց Տիգրանն էլ տեղավիճել էր Հայաստան), որոնք ոչ միայն անցան հակառակորդ հռոմեացիների կողմը, այլև քաղցեցին քաղաքի դարպասները գորավար Լուկուլլոսի (Lucius Licinius Lucullus) զորքերի առաջ⁶⁴: Նրանց նախապես չնեկուսացնելը երևի Տիգրանի կատարած ամենամեծ սխալն էր՝ այս վճռական և բախտորոշ ճակատամարտից առաջ:

Մ.թ.ա. 68թ. սեպտեմբերին հայ-հռոմեական զորքերի միջև Արածանի գետի մոտ տեղի ունեցած ճակատամարտը վերլուծելիս Մ.Վ. Սարգսյանը հատկապես մեծ ուշադրություն է հատկացնում հռոմեացի պատմիչ Դիոն Կասսիոսի (ծն. 155 կամ 164-մինչև 230թթ.) հայտնած վկայություններին, որը այն եզակի մտավորականներից էր, որ իրավացիորեն էր քննարկում Լուկուլլոսի և հռոմեացիների պարտության պատճառները:

Սարգսյանը իրավացիորեն քննադատում է գերմանացի հետազոտող Հ. Դեյբրյուկին, գտնելով որ նա կեղծում է պատմական իրադարձությունները (հատկապես պատմիչ Հուստինոսի վկայությունները), քացարձակապես անուշադրության է մատնում մ.թ. I դ. հռոմեացի մատենագիր Գայոս Սվետոնիոս Տրանքվիլլոսի կարևոր վկայությունները այս հարցերի կապակցությամբ: Տես Սարգսյան Մ.Վ., ԼՂՎ. աշխ., էջ 86; ՀժՊ, Հ. I, էջ 580-602; Дельбрюк Г. История военного искусства в рамках политической истории. Т. I. Античный мир. СПб., 1994. С. 319; Poirot P.P. Perceptions of Classical Armenia: Romano-Parthian Relations, 70 BC.-AD. 220. Lafayette, 2003. P. 52-54.

⁶⁴ Սարգսյան Մ.Վ., ԼՂՎ. աշխ., էջ 84; The Cambridge Ancient History, Vol. 9, Ed. Crook J.A., Lintott A., Rawson E., Camb., 1994, P. 242; Steel C. The End of the Roman Republic 146 to 44 BC: Conquest and Crisis, Edinburgh, 2013, P. 141.

⁶² Տես՝ Մանանդյան Հ., Երկեր, Հ. Ա., էջ 209 և հաջ: Фарах К. Указ. соч. С. 136-137; Տիգրանակերտի ճակատամարտում հակառակորդ զորքերի դասավորության պիտանտիկ քարտեզը կազմված Մ.Վ. Սարգսյանի կողմից տես՝ ԼՂՎ. աշխ., էջ 80-81-ի միջև տեղագրված ներդիր քարտեզում: Տես նաև Данилов Е.С. Указ. соч. С. 28 и дал. Այս հեղինակը քննարկում է հռոմեական հետախուզության, այն ժամանակ գոյություն ունեցած, համարյա բոլոր հնարավոր մեղքեր, բայց թե դրանցից որն է կիրառվել Տիգրանի դեմ, մնում է անհայտ (դրանք են ստրատեգիականը, դիվանագիտականը, որպես պատերազմի նախապատրաստման միջոց, հռոմեացիների դաշնակիցների մոտ թշնամու վերաբերյալ եղած տվյալները, անտրականներին օգտագործելը՝ ռազմական ինֆորմացիա ստանալու համար, տեղանքի աշխարհագրական ուսումնասիրությունը՝ զորքը հարմար տեղակայելու համար՝ հետախուզությունները):

⁶³ Սարգսյան Մ.Վ., ԼՂՎ. աշխ., էջ 83-85: Տես նաև՝ Reinach T. Mithradates Eupator. König Von Pontos. Leipzig, 1895. S. 335, Մ.Վ.

Հռոմեացիների մոտ նախ սկսվեց խուճափ, որին հաջորդեց նաև փախուստը՝ պատերազմի դաշտից՝⁶⁵։ Մեր տեսարանը նշում է այն հինգ գլխավոր նախադրյալները, որոնք ապահովեցին Տիգրանի հաղթանակն այս կողմում։ Դրանք բերելով ընդհանուր հայտարարի, պետք է կշե՛լ հայկական զորքերի փոխկապակցված համագործակցությունը, անսպասելի տեղում հակահարված հասցնելը, հակառակորդին ուժասպառ անելու տակտիկան, հակահարձակման ժամանակի ճիշտ ընտրությունը, գործողությունների վճռակախությունը...⁶⁶

Տիգրանին նվիրված բաժնի վերջնամասում հեղինակը քննարկում է նրա ունեցած դերը պատմության մեջ նաև, որպես զորավարի, որը կարևորագույն նորամուծություն է, քանզի երբեք նրա անձը չի ուսումնասիրվել այս տեսադաշտից։ Տիգրանը զորավար դարձավ ոչ միանգամից, այլ տարիների ընթացքում ձեռք բերված հարուստ պատերազմական փորձի արդյունքում։ Այսուհետև նրա բանակում գնալով ավելի մեծ նշանակություն ստացավ հեծելազորը։ Նրա օրոք էր, որ ավելացավ նաև բղեղխությունների բանակների քանակական կազմը, և ավելի սերտ փոխհարաբերություններ հաստատվեցին այս ու մյուս տեսակի զորամիավորումների միջև։

Միաժամանակ հայկական բանակում մեծացավ նորաստեղծ սակրավորների ու արդեն գոյություն ունեցած

մարտակառքերի դերակատարության նշանակությունը։ Տիգրանը նաև ստիպում էր հակառակորդին և, տանում իր հետևից դեպի երկրի անձանոթ շրջաններ, ապա միայն դիմում վճռական ռազմական գործողությունների։ Կարողանում էր զորքը մինչև կոփվել հմտորեն դասավորել հաշվի առնելով, թե տեղանքը գործողությունների ինչպիսի հնարավորություններ է ընձեռում այդ զորատեսակին։ Այսինքն՝ այնտեղ, որտեղ կարող էր անարգել գործել օրինակ՝ հեծելազորը, երբեք չէր օգտագործվում հետևակ, մարտակառքեր կամ այլ զինուժ։ Տիգրանը կարողանում էր ճիշտ գուշակել նաև հակառակորդի հնարավորությունները, իրականացել հետախուզություն, ունենալ տվյալներ նրա թույլ կողմերի մասին։ Մ.Վ. Սարգսյանը եզրակացնում է. «Տիգրանը և Միհրդատ Եվպատորը եղել են Փոքր Ասիայի այն ժամանակի առաջին զորավարները, որոնք այդ երկրների ժողովուրդների պատմության մեջ առաջին անգամ գործադրել են հակառակորդին խաբելով ծուղակի մեջ գցելու, իրենց երկրի խորքը քաշելու, ուժասպառ ու արյունաքամ անելու և մանր ու արագընթաց մարտերով և անսպասելի հարվածներով, իսկ այնուհետև հակահարձակման անցնելով նրան ջախջախելու տակտիկան»⁶⁷։

Հոտմը չհանդուրժեց Հայաստանի անկախությունը, որը կար Լուկոպլոսի, ապա և Պոմպեոսի (Gnaeus Pompeius Magnus, նրան երբեմն անվանում են Մեծ կամ Ավագ, մ.թ.ա. 106-48թթ.) մ.թ.ա. 66թ. արշավանքներից հետո Հայաստան՝⁶⁸։

⁶⁵ Dio, XXXVI, III, 3. Մ.Վ. Սարգսյանը առաջիններից մեկն էր, որ հատուկ ուշադրություն հատկացրեց նաև Գայոս Կրիսպոս Սալլուստիոսի (մ.թ.ա. 87/86-35 թթ.) վկայություններին այս հարցի կապակցությամբ։ Sest. Sallust, IV, 69. Նաև Սարգսյան Մ.Վ. ԼՂՎ. աշխ., էջ 95, 97-98; նաև Арутюнян А.Ж. К разгадке тайны имени Лукулла-Вайкуна. Вестник Удмуртского университета. Серия 5. История и филология. Ижевск, 2014. Вып. 3. С. 81-86. Արածանի գետի մոտ տեղի ունեցած ճակատամարտի սխեմատիկ թարտեզը կազմված Մ.Վ. Սարգսյանի կողմից տես՝ ԼՂՎ. աշխ., էջ 92։

⁶⁶ Սարգսյան Մ.Վ., ԼՂՎ. աշխ., էջ 97-98։

⁶⁷ Սարգսյան Մ.Վ., ԼՂՎ. աշխ., էջ 106։

⁶⁸ Սարգսյան Մ.Վ., ԼՂՎ. աշխ., էջ 101-105։ Հայ-հռոմեական պատերազմի մ.թ.ա. 67 թ. տեղի ունեցած ռազմական գործողությունների մ.թ.ա. Սարգսյանի կողմից կազմած թարտեզը տես՝ ԼՂՎ. աշխ., էջ 99; Sest. նաև ՀԺՊ, Հ. 1., 603-626; Разин Е.А. Указ. соч. С. 402 и дал; Anderson J.G.S. Pompey's Campaign against Mithradates. JRS. Vol. 12. 1922. P. 99-105.

Գ./ ՀԱՅՈՑ ԶՈՐՔԸ ՏԻԳՐԱՆ ԻՄ ԵՄԵՒ ՀԱԶՈՐՆԵՐԻ
ՕՐՈՔ (Մ.Թ.Ա. 55-Մ.Թ. 1 ԹԹ.).

Հռոմի պատերազմները Արտաշիսյան Հայաստանի դեմ շարունակվեցին նաև Տիգրան Մեծին հաջորդած նրա որդու՝ Արտավազդ II-ի օրոք (55-34թթ.): Նախ Արևելք, ապա և Հայաստան եկավ հանրապետության զորավարներից Կրասոսը (Marcus Licinius Crassus), որը ցանկանում էր գրավել մեր երկիրը, կործանել նաև պարթևական թագավորությունը և ամենուր հաստատել Հռոմեական հանրապետության գերիշխանությունը: Այստեղ հեղինակը ռազմավարության տեսակետից վերլուծում է մ.թ.ա. 53թ. մայիսի 6-ին Թատան (լատ. Karrai, հունարեն՝ Έλληνόπολις, ոուս. Карры կամ Харран) բնակավայրի մոտ հռոմեական զորքի խայտառակ պարտության պատճառը, գրելով «...հռոմեական զորքերը չունեին ռազմա-ստրատեգիական ոչ մի հենակետ»⁶⁹: Պարթևները նրանց դեմ, ինչպես հայտնի է պատմությունից, կիրառեցին՝ «հանդիպել պարթևական նետերին (լատ. mittere parthiam sagitta)» ռազմավարական տակտիկան: Ինչպես միշտ, այս անգամ ևս հռոմեացիները «մութ սենյակում սկսեցին որոնել սև կատվին», ինչպես ասում էր Կոնֆուցիոսը (551-479թթ.)⁷⁰: Հռոմեացիների և մասնավորապես Կրասոսի բոլոր անհաջողությունների մեղավոր համարվեց հայոց Արտավազդ II-ը, որը հրաժարվեց իր բանակը տանել Միջագետքի անապատատափաստանային շրջանները: Կրասոսին Ա. Ասիայում հաջորդեց Անտոնիոսը (Marcus Antonius), որի արշավանքը դեպի Ասորպատականի Գանձակ-Փրասապ գուտ ռազմավարության տեսակետից բավականին մանրամասն քննարկվում է Ս.Վ. Մարգսյանի կողմից: Այս անգամ ևս Հռոմին անհրաժեշտ էր մեղավորներ որոնել և կրկին մեղադրվեց Արտավազդը:

⁶⁹ Մարգսյան Ս.Վ., Նշվ. աշխ., էջ 112:

⁷⁰ Մարգսյան Ս.Վ., Նշվ. աշխ., էջ 112-113: Մանասերյան Ռ., Հայաստանը Արտավազդից մինչև Տրդատ Մեծ, Երևան, 1997, էջ 14-17:

Հետագոտելով Արտավազդ II-ի տակտիկան Ս.Վ. Մարգսյանը գտնում է, որ նա հին հայկական ռազմավարության մեջ կատարել է նորամուծություններ՝ հակառակորդներին կարողացել է տանել ոչ միայն դժվարանցանելի տարածքներ, այլև նրանց զրկել է ջրից, սննդամթերքից... Մա խոսում է, որ նա շատ լավ իմացել է Հայաստանում և հարևան երկրներում գոյություն ունեցած հաղորդակցության ուղիները: Այն, որ Արտավազդ II-ը եղել է իր ժամանակի ամենակիրթ մարդկանցից մեկը՝ հայտնի է բոլորին⁷¹: Հեղինակը նաև նշում է. «Արտավազդը հատուկ նշանակություն է տվել զորքերի կոմպակտ գործելակերպին, նետախուզության կազմակերպմանը և բոլոր տեսակի զորքերի փոխգործակցության ստեղծմանը: Նա մշտապես հետևել է, որ զորքերը ճակատամարտի չտարվեն իրարից մեկուսացված, կամ ռազմաերթի ժամանակ զորամասերը չանջատվեն միմյանցից»⁷²: Նրա մարտավարության մեջ շատ կարևոր է եղել զորաբանակի թևերին առանձնահատուկ ուշադրություն հատկացնելը: Ամուր թևերի առկայությունն ապահովել է, որ բանակը չընկնի շրջապատման օղակի մեջ:

⁷¹ Plut. Crass. XXXIII. Պլուտարքոսը նշում է, որ Արտավազդը զրկել է ողբերգություններ, ճառեր և երկասիրություններ:

⁷² Մարգսյան Ս.Վ., Նշվ. աշխ., էջ 118: Ռազմական նետախուզության կազմակերպումն Հռոմում մեծ նշանակություն ստացավ կայսրության հիմնավորումից անմիջապես հետո: Сту Данилов Е.С. Война и разведывательная деятельность в античном Риме. Ярославль, 2011; Он же. Военная разведка и политический шпионаж при Октавиане Августе. Кондаковские чтения II. Белгород, 2008. С. 83-89; Он же. Разведка республиканского Рима: донесения союзников и дипломатов. Государство. Общество. Религия: Проблемы всемирной истории. Ярославль, 2007. С. 16-24; Он же. Социально-психологический портрет римского разведчика. Ярославский психологический вестник. Вып. 20. М.-Ярославль, 2007. С. 128-131.

Արտավազդի մարտավարության մեջ կարևոր էր նաև հարցի դիվանագիտական ըմբռնումը: Սա նշանակում է, որ նա մշտապես, գոնե ինքն իրեն, հաշիվ է տվել և վերլուծել, թե ինչպիսին է իր և հակառակորդի ուժերի փոխհարաբերությունները՝ մինչև ընդհարումն սկսելը: Այսինքն, էթե հայոց արքան ունեցել է կասկածանք, ապա խուսափել է վճռական մարտերից: Սա տեղի ունեցավ, հատկապես, երբ վերոհիշյալ հռոմեացի երկու զորավարները հայտնվեցին արևելքում:

Արտավազդ II-ից հետո Արտաշիսյան Հայաստանի վիճակը գնալով դատնում է ավելի ու ավելի ծանր: Հայոց Արտաշես II (30-20թթ.), Տիգրան III (20-8թթ.) և Տիգրան IV թագավորն ու վերջինիս կառավարչակից էրատո թագուհին (8-5թթ.), ապա կրկին միանձնյա էրատո (մ.թ.ա. 2-մ.թ. 1, ապա մոտ. 6-12թթ.) կատարեցին իրենցից կախված ամեն ինչ, որպեսզի փրկեն Հայաստանը, բայց Հռոմում հաստատվել էր Օգոստոս կայսեր (Gaius Iulius Caesar Octavianus, Augustus, մ.թ.ա. 27-մ.թ. 14թթ.) իշխանությունը և երկիրը բռնել էր ներքին կայունության ուղի: Այն, ինչ ժամանակին բանակի հետ կապված խնդրում Հռոմում I դարի սկզբներին կատարել էին Գայոս Մարիուսը (Gaius Marius 158/157 - 13 հունվարի 86թթ.) և Լուցիոս Կոռնելիոս Մուլլա Ֆելիքսը (լատ. Lucius Cornelius Sulla Felix - 138 - հավանաբար մարտ 78թթ. մ.թ.ա.) արդեն մատնվել էր մոռացության: Իսկ նրանք անցում էին կատարել պրոֆեսիոնալ բանակին, որը բոլորի համար անխտիր՝ դարձել էր իսկական պատուհաս: Այդ գործը հաջողակ զորավարների համար դարձել էր միջոց՝ քաղաքական իշխանության նվաճման ճանապարհին:

Այսպես նախ Մարիուսը խախտելով Հռոմեական հանրապետությունում գործող բոլոր օրենքները կարողացավ յոթ անգամ (107, 104-100 և 86թթ.) ընտրվել կոնսուլ, չխոսելով արդեն նրա մյուս գրադեցրած պաշտոնների մասին, ապա քաղաքական օլիմպիոսում հայտնվեց Մուլլան: Վերջինս ավելի «առաջ» գնաց և

82-79թթ. իշխում էր որպես դիկտատոր (dictator, dicto բառից, նշանակ. է թելադրել ըստ Հռոմում գործող սահմանադրության այդ պաշտոնը տրվում էր միայն 6 ամսով, այն էլ, եթե երկիրը գտնվում էր օրհասական վիճակում): Ահա այս ամենին էր, որ վերջակետ դրվեց Օկտավիանոս-Օգոստոսի կողմից (մ.թ.ա. 27 - մ.թ. 14թթ.)⁷³:

⁷³ Телепін С.В. Полководец и его солдаты (период Принципата). Военное лидерство в Древнем Риме. Минск, 2021.

ԳԼՈՒՆ ԶՈՐՐՈՐԴ

ԱՐԵՄԿՈՆՆՅԱՅ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԱԿԸ

Ա./ ՀԱՅՈՑ ԶՈՐԲԸ ԱՐԵՄԿՈՆՆԻՆԵՐԻ ԳԱՀԱԿԱԼՄԱՆ
ԱՌԱՋԻՆ ԷՏԱՊՈՒՄ (52/66-226 ԹԹ.).

Հոռոմում կայսրության հաստատումից հետո, առաջիններից մեկը, որ Արևելքում սկսեց վարել ակտիվ ռազմա-դիվանագիտական քաղաքականություն հանդիսացավ կայսր Վալիգուլյան (Caligula, իսկական անունը Gaius Iulius Caesar Augustus Germanicus)⁷⁴: Իր մենագրության հաջորդ երեք գլուխներում (գլ. VI-VIII) Ս.Վ. Սարգսյանը հետազոտում է հայ Արշակունյաց դինաստիայի թագավորների քաղաքականությունը (52/66-428թթ.)՝ ռազմական արվեստի տեսանկյունից⁷⁵:

⁷⁴ Վալիգուլայի դիվանագիտության և արտաքին քաղաքականության վերաբերյալ ավելի մանրամասն տես Арутюнян А.Ж. Армяно-рамско-парфянские отношения в начале правления императора Калигулы (37 год). Российский Кавказ: Социокультурные, экономические и политические аспекты истории, материалы к историко-археологическому изучению региона. Доклады и сообщения 22 международного семинара Кавказоведческой школы В.Б. Виноградова // Известия научно-педагогической Кавказоведческой школы В.Б. Виноградова / Под ред. Дударева С.Л. Вып. 10. Армавир, Ставрополь, 2018. С. 113-117; ՀԺՊ, Հ. 1, էջ 721-722, 725; Մանանդյան Հ., Նշվ. աշխ., էջ 311-314; Фаррох К. Узак. соч. С. 159-160.

⁷⁵ Մանրամասն տես նաև Հարությունյան Բ., Մեծ Հայքի Արշակունյաց թագավորության սպարազինությունը և ռազմարվեստը, Հ. Ե, Երևան, 2013 («Հայոց պատերազմները և ռազմարվեստը» մատենաշար):

Արշակունիների՝ Հայաստանում գահակալելը տեղի չունեցավ հարթ և խաղաղ, այլ ընթացավ բուռն պատերազմական պայմաններում:

Պարթևստանի թագավոր Վաղարշ I-ը (լատ. Vologezus – 51-78թթ.) իրեն երկրի թագավոր հռչակելուց հետո, հայերի համաձայնությամբ իր եղբորը՝ Տրդատին (Tiridatus) հռչակեց Հայաստանի թագավոր, ինչպես և խոստացել էր նրան մինչ այդ: Սա չէր կարող հանդուրժել ողջ Արևելքի, այդ թվում և Հայաստանի հանդեպ տարածքային հավակնություններ ունեցող Հռոմը, որն էլ ի վերջո հանգեցրեց Հռոմեա-պարթևա-հայկական պատերազմին, և այն առավել ընդունված է անվանել Տասնամյա պատերազմ (54-64թթ.): Վերլուծելով այդ պատերազմի ամենակզբում արևելյան տարածաշրջանում ձևավորված ռազմա-քաղաքական իրավիճակը Ս.Վ. Սարգսյանը գտնում է իրավիցիորեն, որ Տրդատը ի սկզբանե ստացավ հայերի աջակցությունը, որն էլ ի վերջո դարձավ նրա հաղթանակի գլխավոր գրավականն այս պատերազմում: Նա նաև նկատում է, որ Տրդատը իր բանակի թվարանակով զիջում էր հակառակորդին, ուստի մարտական գործողությունները միտումնավոր «տեղափոխեց» Հայաստանի բարձրալեռնային շրջաններ:

Այսպես նա ոչ միայն կարողացավ մասնատել հակառակորդի բանակը, այլև փակեց նրա համար մատակարարումների բոլոր ճանապարհները: Այսպիսի եզրակացության նա գալիս է, երբ առաջիններից մեկը պատմագրության մեջ հռոմեացի մատենագիր Տակիտոսը (լատ. Publius Cornelius Tacitus, կամ Gaius Cornelius Tacitus; 50-ական թ. կեսերը – մոտ. 120թ.) վկայությունները քննարկում է ռազմա-ստրատեգիական տեսանկյունից: Այս առումով հատուկ ուշադրություն է հատկացված Կաստելյում Վոլանդումի մոտ տեղի ունեցած ճակատամարտին (Castellum Volandum)⁷⁶:

⁷⁶ Tacit. Ann., XIII, 41. Տես՝ Սարգսյան Ս.Վ., Նշվ. աշխ., էջ 123-124: Ավելացնենք, որ մեր կողմից պարզաբանվել է, որ Կաստելյում

Պատերազմի ընթացքում Վադարշը նաև հնտորեն օգտագործում էր Հայաստանում բնակվող մարդերի ցեղի (Amardi կամ Mardi, հին հուն. Ἄμαρδοι, Μάρδοι) զինուժը: Վերջիններս կազմակերպում էին հանկարծակի գրոհներ հռոմեացիների վրա, որոնց ընթացքում ընդհանուր թշնամուն պատճառում էին ոչ միայն մեծ նյութական, այլև մարդկային վնասներ: Ինչպես այս, այնպես էլ հետագայում Մ. Հայքի տարածք ներխուժած հակառակորդների դեմ պատերազմներում մարդերի ցեղը ունեցան կարևոր նշանակություն և, նրանք Արշակունյաց Հայաստանը պաշտպանում էին, որպես իրենց սեփական հայրենիքը⁷⁷:

Ս.Վ. Մարգսյանը նշում է, որ, թեթեմությունը Գնեսու Դոմիցիոս Կորբուլոնին (Gnaeus Domitius Corbulo, մ.թ. 7-67թթ.) պարզեց էր զինվորականի և զորահրամանատարի շնորհներով, ապա որպես դիվանագետ, նա բացարձակապես ապաշնորհ էր: Մրա «դասական» կամ «լավագույն» օրինակ է հանդիսանում նրա հիմար և անհեռատես հրամանը, որպեսզի հռոմեացիներն ավերեն Մ. Հայքի մայրաքաղաք Արտաշատը, այստեղ տեղի ունեցած ընդհարումից հետո⁷⁸: Սա, ինչպես ասում է ժողովուրդը, «լցրեց համբերության բաժակը» հայերի մոտ, որը նաև մեծապես

Վոլանդում՝ դա հայկական Գալլատու լիճն է, որն այժմ գտնվում է Թուրքիայի տարածքում: Steu՝ Арутюнян А.Ж. О местонахождении «Castellum Volandum» согласно Корнелию Тациту (историко-лингвистическое и географическое исследование). Вестник СПбУ. Серия 2. История. Вып. 2. июнь 2010. С. 154-159; Poirot P.P. Op. cit. P. 89-91.

⁷⁷ Steu՝ Арутюнян А.Ж. Марды в военно-политической истории Аршакидской Армении. Военно-исторический журнал Parabellum. СПб., 2014. № 2 (35). С. 74-81; Панов А.Р. Рим на северо-восточных рубежах: взаимоотношения с государствами Северного Причерноморья и Закавказья в Iв. до н.э. – первой трети Iв. н.э. Арзамас, 2008.

⁷⁸ Այս ճակատամարտի (Արտաշատի) սխեմատիկ քարտեզը նույնպես խնամրով կազմվել է Ս.Վ. Մարգսյանի կողմից: Steu՝ Նշվ. աշխ., էջ 127:

նազդեց պատերազմի եզրափակիչ փուլում տեղի ունեցած ռազմական գործողությունների ընթացքի վրա: Խոսքը վերաբերում է 62 թ. տեղի ունեցած Հռոմեացի ճակատամարտին, որտեղ հռոմեական զորքը գլխավորում էր Կորբուլոնին փոխարինած Լուցիոս Յուլիոս Վեսեննիոս Պետոսը (Lucius Iunius Caesennius Paetus, ծնվ. մ.թ. 28թ. – մահվ. թ. անհյտ.): Վերջինս այստեղ կրեց ջախջախիչ պարտություն, որից հետո այլևս հռոմեացիները չկարողացան ուշքի գալ:

Հռոմեացիների այս խայտառակությունը, որոշ վերապահումներով, հարկադրված էր ճանաչել նաև պատմիչ Տակիտոսը, որի մոտ հռոմեական մեծամտությունն ու պարծենկոտությունը սահմաններ չունեք⁷⁹: Ս.Վ. Մարգսյանը հատուկ ուշադրություն է դարձնում և, իրավացիորեն տեսնում է այն հանգամանքը, որ անտիկ մատենագիրները լրության են մատնում, շրջանցում են, թե ինչպիսի՜ ռազմական կորուստներ են ունեցել հռոմեացիները Հռոմեացի մոտ: Ավելին, հետազոտողը կատարում է ուշագրավ եզրահանգումներ տեղի ունեցածի մասին: Նա նշում է, որ հայ-պարթևական համատեղ ուժերը համաշխարհային ռազմարվեստը հարստացրին մեկ նորարարությամբ ևս. թե ինչպե՜ս բոլոր առումներով ու մոտեցումներով միմյանց չհամապատասխանող զորքերը կարող են իրականացնել համաձայնեցված մարտական գործողություններ: Ս.Վ. Մարգսյանը նշում է.

ա) նրանք ռազմական գործողություններ էին սկսում և իրականացնում միանգամից և միաժամանակ երկու ուղղություններում,

⁷⁹ Tacit. Ann. XV, 15; Dio Cass. LXII. 21-22; Suet. Nero. XXXIX, 1; Redgate A.E. The Armenians. Oxf., 2000. P. 91. Հռոմեացի բնակավայրի մոտ տեղի ունեցած այս վճռորոշ և եզրափակիչ ճակատամարտի սխեմատիկ քարտեզը կազմվել է Ս.Վ. Մարգսյանի կողմից տես՝ Նշվ. աշխ., էջ 134: Steu՝ նաև Մանեանյան Հ., Նշվ. աշխ., էջ 320-346:

բ) թշնամուն շրջանում էին իր համար անսպասելի հատվածներում և նրան զգում էին արջանի մեջ.

գ) իրականացրին հակառակորդի ուժերի պատակտում, որպեսզի հետագայում նրան ջախջախեն մաս-մաս,

դ) հակառակորդի դեմ պարտիզանական պատերազմ էին մղում ոչ թե մեկ ճակատով, ինչպես նախկինում էր, այլ միանգամից մի բանի և, որ առավել կարևոր է, հարձակվում էին այնտեղ, որտեղ նրանց բոլորովին չէին սպասում ⁸⁰:

Այս եզրահանգումները, որ կատարել է Ս.Վ. Սարգսյանը հիմնականում վերցված են Տակիտոսի «Աննալներ (լատ. Annales)» աշխատությունում հաղորդված վկայություններից, որոնք նախկինում այս տեսանկյունից, գտնե հայ պատմագրության մեջ. չի դիտարկվել և ոչ մեկի կողմից ⁸¹: Փաստորեն, Ներոն կայսեր կողմից կազմակերպված այս արևելյան արշավանքն ու պատերազմը, որն ընդմիջումներով տևեց 10 տարի՝ կատարյալ ձախողվեց: Հայաստանը ձեռք բերեց իր համար բաղձալի անկախությունը, բայց այսուհետև հայ Արշակունիները թագադրման համար պետք է մեկնեին Հռոմ և, կայսրերի կողմից թագադրվեին: Մեր արքաներից առաջինը իր թագը Ներոն կայսրից (ամբողջական անունը՝ Nerō Claudius Caesar Augustus

⁸⁰ Տես՝ Սարգսյան Ս.Վ., Նշվ. աշխ., էջ 136-137: Այս ժամանակից հոտմեական բանակում մեծ նշանակություն ձեռք բերեց Auxilia-ն օգնական ուժերը, որոնք վճռական պահին օգնում էին հիմնական զորքին: Տես՝ Cheesman G.L. The Auxilia of the Roman Imperial Army. Chicago, 1975; Haynes J.P. The Impact of Auxiliary Recruitment on Provincial Societies from Augustus to Caracalla. Administration, prosopography and appointment policies in the Roman Empire. Amsterdam, 2001. P. 62-83; Holder P.A. Studies in the Auxilia of the Roman army from Augustus to Trajan. Oxf., 1980.

⁸¹ Tacit. *Annal.* XIII, 35, 39, 41, XIV, 26, XV, 3, 6, XV, 6 և հաջ. (Տակիտոսի այս աշխատության լրիվ անվանումն է «Annales. Ab excessu divi Augusti»): Տես նաև՝ Սարգսյան Ս.Վ., Նշվ. աշխ., էջ 136-137; ՉժՊ, 2. I, էջ 734 և հաջ., նաև էջ 768-776; Фаррох К. Указ. соч. С. 161-164.

Germanicus) ստացավ կամ թագադրվեց հենց Տրդատ I-ը՝ 65թ: Երևի ամենակարևորն պետք է համարել այն, որ Արևելքում հատուտովեց երկարատև խաղաղություն: Այն տևեց 50 տարի՝ մինչև 114թ., որի ընթացքում Հռոմի, Պարթևստանի ու Արշակունյաց Հայաստանի միջև նոր ռազմական ընդհարումներ տեղի չունեցան ⁸²:

Միջազգային իրադրությունը մեր տարածաշրջանում շրջադարձային փոփոխություն ապրեց, երբ Հռոմեական կայսրությունում կայսր ճանաչվեց Անտոնինոսների դինաստիայի (կառավարել են՝ 96-192թթ.) երկրորդ կայսրը՝ Տրայանոսը (Marcus Ulpius Nerva Traianus; 98-117թթ.): Նրա օրոք էլ տարածքային ստումով Հռոմը հասավ իր ողջ պատմության մեջ առավելագույնին, որը կապված էր նաև այն հանգամանքի հետ, որ այս կայսրը նախկինում եղել էր զինվորական, իսկ որ ամենաեականն է բավականին հաջողակ ⁸³:

Կայսր Տրայանոսի մասին գրվել են բազմաթիվ ուսումնասիրություններ և հողվածներ ինչպես ռուս հետազոտողների, այնպես էլ արևմտյան մասնագետների (անգլիացի, ֆրանսիացի, գերմանացի և ամերիկյան դպրոցի՝ հին աշխարհի պատմության ուսումնասիրության ներկայացուցիչների կողմից), այս պատճառով էլ Ս.Վ. Սարգսյանը իրավացիորեն շրջանցում է ռազմական

⁸² Мишулин А.В. Объявление войны и заключение мира у древних римлян. Исторический журнал. 1944. № 10-11. С. 100-113.

⁸³ Նրա համար գոյություն չունեին սահման (լատ. *limes*) հակադրությունը, ուստի այս արշավանքը ռազմական արկածախնայողություն էր: Տես՝ Колобов А.В. Всегда ли лимес являлся границей Римской империи? *Antiquitas aeterna*. Поволжский антиковедческий журнал. Вып. 2: Война, армия и военное дело в античном мире. Саратов, 2007. С. 194-202; Isaac B. The Meaning of the Terms *Limes* and *Limitanei*. *JRS*. Vol. LXXVIII. 1988. P. 125-147; Լոյսիս՝ The limits of empire: the Roman army in the East. Oxf., 1990.

գործողությունների հետ կապված մանրամասների քննարկումները: Այս խնդիրը նման պայմաններում նրա համար արդեն ուներ երկրորդական նշանակություն: Այս պատճառով էլ հեղինակը հատուկ ուշադրություն է հատկացնում, թե ի՞նչ ճանապարհներով է նախընտրել ու կազմակերպել իր արշավանքները հռոմեական կայսրը՝ նախ դեպի Հայաստան, ապա և դեպի Պարսից ճոց ընկած տարածքները: Դա Տրայանոսի համար շատ կարևոր էր, որպեսզի չկրկնվեր այն բոլոր սխալները, որ թույլ էին տվել իր նախորդները իրենց կազմակերպած արևելյան արշավանքների ժամանակ ⁸⁴: Շնորհիվ այս նախագգուշական միջոցների ձեռնարկման հռոմեական գործերը, հատկապես նրանց ձախ թըը թշնամիների տարածքներով անցան՝ համարյա առանց մարդկային և նյութական կորուստների: Դա շատ «լավ» էր:

Բայց կայսեր այս արշավանքն էլ ի վերջո ունեցավ լիակատար ձախողում կամ, ավելի ստույգ, մատնվեց կրախի: Խնդիրն այն էր, որ նա մտածում էր միայն նվաճումների մասին և (որքանք հոշակելով պրովինցիաներ), լիովին ոչինչ չէր անում՝ այդ տարածքներում իր տիրապետությունն ու իշխանությունը ամրապնդելու համար: Այսպիսի տարածքային նվաճումներն պատմության մեջ ընդունված է անվանել «կավե ուրբերով հսկա»:

⁸⁴ Տրայանոսի մասին հիշատակում են պատմիչներ Դիոն Կասսիոսը, Ավրելիոս Վիկտորը, Պլինիոս Կրտսերը և այլք: Վերջին գրել է աշխատություն, որը նվիրված է այս կայսրին կոչվելով «Տրայանոս կայսեր գովքը (կամ ներբողը, լատ. պանեգիրիկոս «Panegyrique de Trajanus (Trajan)»): Այս հաջերի վերաբերյալ տես նաև՝ Арутюнян А.Ж. Восточный поход императора Траяна и Аршакидская Армения. Известия Смоленского гос. университета, Смоленск, 2014, № 3. С. 90-98; Նույնի՝ Исследование названий станций дороги Сатала-Арташат согласно «Певтинеровой карте». Известия Смоленского гос. университета, Смоленск, 2014, № 4. С. 114-122; Մանանդյան Հ., Երկեր, 2. Բ, Երևան, 1978, էջ 24-27, 29-38; Фаррох К. Узак. соч. С. 171-178.

Այս պատճառով էլ նվաճվածներից շատերն իրենց շուտով անկախ հռչակեցին: Բայց Տրայանոսը Հռոմի պատմության մեջ համարվում է երկրորդ սիրված կայսրը՝ Օգոստոսից հետո: Իգուր չէ, որ նրա մասին ասվում է. «Եղի՛ր Օգոստոսից երջանիկ, Տրայանոսից լավ («Felicior Augusti, melior Traiani»)».

Տրայանոսից հետո հայ-պարթևա-հռոմեական փախտարաբերություններում նոր ընդհարումներ տեղի չունեցան, բայց դրանք վերսկսվեցին, երբ կայսրությունում սկսեց իշխել Մարկոս Ավրելիոսը (Marcus Aurelius Antoninus; 161-180թթ.): Վերջինս համար նոր պատերազմի աթիթ հանդիսացավ պարթևների արքա Վաղարշ III-ի (կամ Արշակ XXXIII – իշխ. է. 147/148-192թթ.) կողմից Բակուրին հայոց թագավոր նշանակելը: Մկավեց նոր պատերազմ, որի ընթացքում էլ գլխավոր ճակատամարտը տեղի ունեցավ Էլեգիայի մոտ (կամ Եղեգիս, այժմ Իլիջա, Թուրքիայում՝ Էրզրումի մոտակայքում) ⁸⁵.

Այս ճակատամարտը ուսումնասիած հետազոտողներից Ս.Վ. Մարգայանը առաջինն է, որ այն քննարկում է ոչ միայն բանակների դիպուկացիայի (տեղաբաշխման) տեսանկյունից, այլև կազմա-ստրատեգիական, որտեղ էլ ակնհայտ երևում է նրա նպատարած նորամուծությունը պատմագրության մեջ: Հետազոտողը այդ ճակատամարտը բաժանում է երեք փուլերի: Նա գտնում է, որ հայ-պարթևական կողմի հաջողությունը այս մարտում պայմանավորված էր ոչ միայն տեղանքի ճիշտ ընտրությամբ, այլև իրենց ուժերի ճշտագույն տեղաբաշխմամբ:

⁸⁵ Էլեգիայի մոտ տեղի ունեցած ճակատամարտի սխեմատիկ քարտեզը նույնպես կազմված Ս.Վ. Մարգայան կողմից տես՝ Նշվ. աշխ., էջ 142; նաև՝ Շեֆլ. 2. I. էջ 782 և հաջ. (հեղ. Երեմյան Ս.Տ.): Մանանդյան Հ., Նշվ. աշխ., էջ 44; Isaac B. The limits of empire: the Roman army in the East. Oxf., 1990; Jacques F., Scheid J. Rome et l'integration de l'empire (44 AV. j.-c. -260 AP. j.-c.). T. I: Les structures de l'Empire romain. Paris, 1990; Goldsworthy A.K. The Roman Army at War, 100 BC-AD 200. Oxf., 1996. P. 311.

Քանի որ հայ-պարթևական կողմը ճիշտ ընտրություն էր կատարել, ուստի և ճակատամարտի ավարտը արդեն համարյա «կանխորոշված» էր, քանզի գործողությունների նախաձեռնությունը դաշնակիցների կողմն էր⁸⁶:

Սակայն հռոմեացիները էլեգիայի պարտությունից հետո, ինչպես ասում են չնահանջեցին, այլ իրենց հսկայածավա կայսրության տարբեր մասերից նորանոր թարմ ուժեր տեղափոխեցին դեպի հայ-պարթևական ռազմաճակատ: Այս պատճառով էլ 163 թ. նրանք ի վերջո կարողացան կոտրել հայ-պարթևական կողմի համառ դիմադրությունը: Հետագա իրադարձությունները տեղի ունեցան բավականին դրամատիկ պայմաններում, երբ Մ. Հայքում սկսեց կառավարել Մոհենոսը (իշխել է 144-161 և 164-186թթ.): Այս դրամատիզմը իր մեջ պարունակում է նաև մեծ հետաքրքրություն, ուստի և այդ դեպքերը իրենց արտացոլումն են գտել նաև պատմագեղարվեստական ֆիլմերից մեկում: Մեր խոսքը վերաբերում է «Հռոմեական կայսրության անկումը» ֆիլմին, որը նկարահանվել է 1964թ. (հայոց թագավորի դերում նկարահանվել է նշանավոր դերասան Օմար Շերիֆը)⁸⁷:

⁸⁶ Մարգարյան Ս.Վ., ԼՂՎ. աշխ., էջ 144-145: Տես նաև Մանանդյան Հ., ԼՂՎ. աշխ., էջ 45-50; Фаррох К. Указ. соч. С. 179-181; Арутюнян А.Ж. Восточная политика императора Марка Аврелия (160-181 гг.) и Аршакидская Армения. Вестник Томского государственного университета. История. Томск, 2014, № 4 (30). С. 53-55; ՀժՊ, Հ. 1, էջ 782-788. Ռազմական պատմության մասնագետներից Ե.Ա. Ռազինը բավականին հանգամանալից ուսումնասիրել է ինչպես հռոմեական, այնպես էլ պարթևների պատերազմական գործողություններ վարելու տակտիկան: Տես Ռազին Ե.Ա. Указ. соч. С. 406-445 (тактика римлян), С. 236 и дал., С. 397 и дал. (тактика парфия); Poirot P.P. Op. cit. P. 154 etc.

⁸⁷ Էլեգիայում տեղի ունեցած ճակատամարտի վերաբերյալ տես ՀժՊ, Հ. 1, էջ 784-790:

Այս հաղթանակը Հռոմին տրվեց բավականին թանկ գնով և, կայսրությանը անհրաժեշտ էին փոփոխություններ ոչ միայն կառավարման ներքին համակարգում, այլև արտաքին քաղաքականության մեջ: Դա հրաշալի հասկացավ և կենսագործեց կայսրերից Մեպտիմոս Մներոսը I-ը (Lucius Septimius Severus, իշխ. է 193-211թթ.), որի անունով էլ կոչվեց նաև նորաթուխ դինաստիան (193-235թթ.): Նախկինում նա եղել էր զինվորական, ինչպես և վերոհիշյալ Տրայանոս կայսրը, շատ լավ պատկերացնում ու հասկանում էր, թե՛ ինչպիսի միջազգային կացություն է տիրում արևելքում: Նա պետության արևելյան արտաքին քաղաքականության մեջ կատարեց կտրուկ շրջադարձ և իրենց դաշնակից հոչակեց հայոց թագավոր Վաղարշ II-ին (186-198թթ.): Ի՛նչ հանգամանքներով էր պայմանավորված կայսրության արտաքին քաղաքականության մեջ այս կտրուկ շրջադարձը:

Մեպտիմոս կայսրը շատ լավ տեսնում, զգում և հասկանում էր, որ դեռ Մարկոս Ավրելիոսի կողմից 166թ. մայրաքաղաք Տիգրինը (Κτισηφών, Ktésiphon, պարս. Tisfun) գրավելուց հետո, երբեմնի հզորագույն կայսրության Պարթևստանի օրերն արդեն «հաշված» էին⁸⁸: Մեպտիմոս I Մներոսը կատարեց ճշտագույն հաշվարկ. ավելի լավ է թիկունքում և հարևանությամբ ունենալ բարեկամ Հայաստանին, որի «օգնությամբ» էլ ինքը կվերացնի Պարթևստանը, քան միաժամանակ այստեղ կռվել երկու ռազմաճակատներով: Վերջինիս դեպքում անհայտ էր, թե կայսրությունը ինչ հաջողությունների կհասնի: Հայաստանի հետ կնքված պայմանագրով Վաղարշ II-ը պարտավորվեց նաև պաշտպանել հյուսիս-կովկասյան լեռնանցքները՝ հյուսիսային բարբարոս

⁸⁸ Дьяконов М.М. Указ. соч. С. 206 216; Бокщанин А.Г. Парфия и Рим (Исследование о развитии международных отношении позднего периода античного мира). Ч. II. Система политического дуализма в Передней Азии. М., 1966. С. 210 и дал; Poirot P.P. Op. cit. P. 190-191etc.

ցեղախմբերի ներթափանցումներից և հարձակումներից ⁸⁹; Հակառակ համաշխարհային մեծ ճանաչում և անուն վայելող գերմանացի պատմաբան Թ. Մունզեհեի, Մ.Վ. Մարգայանը այստեղ Մ. Հայքի թագավորության զբաղեցրած աշխարհագրական դիրքի վերաբերյալ հայտնում է լիովին հակառակ կարծիք: Թ. Մունզեհեը Հայաստանի բուֆերային աշխարհագրական դիրքը համարում է նրա «անհաջողությունների» գլխավոր պատճառներից մեկը (եթե ոչ գլխավորը): Որպես զինվորական-տեսաբան Մ.Վ. Մարգայանը իրավացիորեն նշում է, որ օրինակ վերոհիշյալ պարագայում Հայաստանին «օգնելու եկավ» հենց իր այս աշխարհագրական դիրքը: Այս դիրքը «օգնեց» որպեսզի կայսրը համաձայնության գա Վաղարշի հետ, ինչպես պարթևների հետ առնչություններում, այնպես էլ Հայաստանից հյուսիս գտնված տարածքների կապակցությամբ ⁹⁰: Այս պահից սկսած հայ ռազմավարական պատմության մեջ սկսվում է մի նոր ժամանակաշրջան: Դա կապված էր նաև Հայաստանին հարևան Իրանում, տեղի ունեցած փոփոխությամբ, որտեղ կործանված Արշակունիներին հաջորդելու եկան Սասանյանները (224 կամ 226թթ.):

⁸⁹ Панов А.Р. Указ. соч. С. 145 и дал; Перевалов С.М. Легионы кавказского лимеса. Вестник Владикавказского научного центра. 2007. № 4. С. 2-12.

⁹⁰ Տե՛ս Մարգայան Մ.Վ., Նշվ. աշխ., էջ 145; նաև՝ Արրիան. *Դիսպոզիցիա ընդդեմ ալանների*. Ս.Պ. Վաղարշի թարգմանությամբ. Երևան, 2001. № 1. Ս. 236-243; *Մոմյան Թ.* *История Рима*. Т. 5. Кн. 8. Провинция от Цезаря до Диоклетиана. М., 2002. С. 412 и дал.

Ինչպես արդեն մի քանի անգամ նշվեց վերևում՝ Սասանյանների գահակալմամբ և Պարթևական թագավորության կործանմամբ իրադրությունը ողջ Արևելքում (և՛ Մերձավոր, և՛ Միջին) ունեցավ կտրուկ ու շրջադարձային փոփոխություն (Սասանյանները Իրանում իշխեցին մինչև 651թ., պահպակներն իրչվում է՝ Eranshahr): Նորաթույն դինաստիայի արքաները իրենց ատաջ, ի սկզբանե, դրել էին լիովին այլ, հեռահար նպատակներ վերականգնել նախկին իրանական համաշխարհային կայսրությունը, առնվազն Աբեմնեյան տիրապետության սահմաններում: Արշակունյաց Հայաստանը և Հռոմեական կայսրությունը այսուհետև հարկադրված էին համատեղ ուժերով ընդդիմակայել այդ նվաճողական նկրտումներին: Փաստորեն, կամա թե ակամա, այս երկու երկրները դառնում էին ռազմաքաղաքական (կամ հակառակը) դաշնակիցներ: Նրանց խնդիրներն ու նպատակները այսուհետև լիովին համընկնելու էին. կասեցնել Սասանյանների ռազմական առաջընթացը, որը տեղի էր ունենում երկրաչափական պրոգրեսիսի համապատասխան ⁹¹:

⁹¹ Մերձավոր Արևելքում 240-260-ական թթ. իշխող միջազգային կացության վերաբերյալ ավելի մանրամասն տես *Книга деяний Ардашира сына Папака / Транскрипция текста. Пер. со среднеперс., введ., коммент. и глоссарии Чунаковой О.М. М., 1987; Հայ ժողովրդի պատմություն*, Հ. II, Հայաստանը վաղ ֆեոդալիզմի ժամանակաշրջանում, Խմբ. Երեմյան Ս.Տ., Երևան, 1984, էջ 36 և հաջ. (այսուհետև կրճտ. ՀԺՊ, Հ. II); *Дашков С.Б. Цари царей Сасаниды. Иран III—VII вв. в легендах, исторических хрониках и современных исследованиях*. М., 2008. С. 53 и дал; *Фаррох К. Указ. соч. С. 196 и дал; Арутюнян А.Ж. Римско-сасанидский «Самый позорный» договор 244 г. и Аршакидская Армения. Ирсисиона. Античный мир и его наследие. Вып.*

Հայ-հռոմեական զինակցությունը ամենալավագույնս դրսևորվեց 296-297թթ.՝ Մասսանյան Պարսկաստանի դեմ տեղի ունեցած պատերազմի օրերին: Այս պատերազմում վճռական նշանակություն ունեցավ 297թ. Բասենի մոտ տեղի ունեցած ճակատամարտը: Ս.Վ. Սարգսյանը ռազմա-ստրատեգիական տեսանկյունից է մեկնաբանում, թե ինչու՝ դաշնակիցները իրենց գորքը կենտրոնացրին հենց Բասեն գավառի տարածքում (գտնվում էր պատմական Փոքր Հայքում)՝ Մասադ քաղաքից մի փոքր հեռու: Մասադի բարձրալեռնային դիրքը հակառակորդին զրկում էր իր հեծելազորի շարժունակությունից (մանյովրների հնարավորությունից): Դա կատարվում էր այն պատճառով, քանզի 296թ. տեղի ունեցած պատերազմական գործողությունների ժամանակ հակառակորդի հենց այս գորատեսակն էլ ունեցել էր ամենակարևոր նշանակությունը: Հեղինակը գրում է, որ նրանք այդպես. «... օգտագործելով լեռնազանգվածները՝ զրկում էին պարսից հեծելազորին օպերատիվ տարածությունից»⁹²: Երկրորդ նա գտնում է, որ պարսիկները լիովին զրկված էին նաև թիկունքից որևէ օգնություն ստանալու հնարավորությունից, քանզի հարևան թյուրք բնակավայրերն ամբողջովին հայաբնակ էին: Մա նշանակում էր, որ տեղի հայերը ամեն կերպ արգելակելու և խանգարելու էին, եթե որևէ տեղից ցանկանային պարսիկներից օգնություն ցուցաբերել⁹³:

IV. С6. Научных трудов к 50-летию проф. Болгова Н.Н. Белгород, 2015. С. 139-145; Он же. События 260г. в комментариях Требеллия Поллиона (Иран, Рим, Армения). III Сиротенковские чтения. Матер. междунар. конф. Армавир. 2015. С. 47-51.

⁹² Սարգսյան Ս.Վ., Նշվ. աշխ., էջ 151:

⁹³ Սարգսյան Ս.Վ., Նշվ. աշխ., էջ 151; Նաև՝ Մանանդյան Հ., Հ. Բ, էջ 111-112: Թարտորն В.В. Конница на войне. Минск, 1999; Марков М.И. История конницы. Кн. 1. От Древней Греции до изобретения огнестрельного оружия. М., 2007.

Կարևոր նշանակություն ունեցավ նաև այն հանգամանքը, որ հռոմեական կայսր Դիոկղետիանոսը (Gaius Aurelius Valerius Diocletianus, իշխել է՝ 284-305թթ.) հայ նշանավոր իշխաններ Արշավիր Կամսարականի և Անդրովկ Մյունեցու հետ հազնելով կաղամբավաճառի հագուստ մուտք գործեցին պարսիկների ճամբարը՝ բնականաբար, հետախուզական նպատակներով: Այս մասին պատկերավոր նկարագրում է Փավստոս Բուզանդը: Վերոհիշյալ հանգամանքին մեծ ուշադրություն են հատկացրել ինչպես նախորդ ուսումնասիրողները, այնպես էլ Ս.Վ. Սարգսյանը⁹⁴: Դաշնակիցները տարան փայլուն հաղթանակ և, ինչպես նկատում է Ս.Վ. Սարգսյանը, դա տեղի ունեցավ առաջին հերթին այն պատճառով, որ դաշնակիցները ստրատեգիական առումով ճիշտ զուշակեցին գլխավոր հարվածի ուղղությունը: Մա պարսիկների համար ուղղակի անսպասելի էր, որի պատճառով էլ նրանք ոչ թե պարտվեցին, այլ գլխովին ջախջախվեցին: Այս ընթացքում մեծագույն դեր ունեցավ հայոց հեծելազորը: Նրանք, ինչպես պարզաբանում է ուսումնասիրողը, գերազանց պատկերացում ունեին տեղանքի վերաբերյալ, ուստի նախապես գիտեին, թե որ հատվածում որքան ուժեր է անհրաժեշտ

⁹⁴ Տես՝ Փավստոս, III, 21; նաև՝ Մանանդյան Հ., Հ. Բ, էջ 112-113; ՀՀԳ, Հ. II, էջ 65-67; Фаррох К. Узказ. соч. С. 216-217. Բասենի 297թ. ճակատամարտից առաջ կրվող կռույների ուժերի դասավորվածության վերաբերյալ մանրամասն տես Սարգսյան Ս.Վ., Նշվ. աշխ., էջ 150; Nicasie M.J. Twilight of Empire: the Roman army from the Reign of Diocletian the Battll of Adrianopl. Amsterdam, 1998; Nischer E.C. The Army Reforms of Diocletian and Constantine and Their Modifications up to the Time of the Notitia Dignitatum // JRS, Vol. 13, 1923. P. 1-55; Банников А.В. Военные реформы Диоклетиана. Античное государство. Политические отношения и государственные формы в античном мире. Под ред. проф. Фролова Э.Д. СПб., 2002. С. 169-182; Ван Берхем Д. Римская армия в эпоху Диоклетиана и Константина. СПб., 2005.

ընդգրկել ռազմական գործողությունների մեջ ⁹⁵: Բասենի հաղթանակից հետո պարսիկները (նրանց թագավոր Ներսեհը, իշխել է՝ 293-302թթ.) խնդրեցին հաշտություն և շուտով ստորագրվեց Մծբինի 40-ամյա խաղաղության պայմանագիրը (298թ., (հին հուն. Νίσσος): Անդրտիգրիսյան հինգ երկրամասերը Սասանյանները զիջեցին Հռոմին, որն էլ իր հերթին հանձնեց Հայաստանի թագավոր Տրդատ III Մեծին (293-330թթ.): Այսուհետև, մինչև 338թ. Առաջավոր Ասիայում, այդ թվում և Հայաստանում և ոչ մի պատերազմ տեղի չունեցավ ⁹⁶:

337-338թթ. պարսից նոր թագավոր Շապուհ II-ը (իշխել է՝ 309-379թթ., հին հուն. Σαπώρης, լատ. Sapore, Sapor) վերսկսեց պատերազմական գործողություններ Հռոմեական կայսրության և Արշակունյաց Հայաստանի դեմ: Իրականում, սակայն նրանք պատերազմը սկսել էին մի փոքր ավելի շուտ, քանզի Շապուհ II-ի հրահրմամբ, մինչ այդ, հյուսիսից Հայաստանի վրա էին հարձակվել մագթուքների (մասսագետների) ցեղախմբերը, որոնց թագավոր Սանեսանը ևս Արշակունի էր: Ս.Վ. Սարգսյանը հատուկ ուշադրություն է հատկացնում 337թ. Օշականի մոտ տեղի ունեցած ճակատամարտին, որը ևս ժամանակագրորեն բաժանում է երեք էտապի: Սա ոչ թե ինքնակատասկ էր, կամ էլ

⁹⁵ Տես՝ Սարգսյան Ս.Վ., ԼՂՎ. աշխ., էջ 152, ևսն՝ Князький И. Император Диоклетиан и закат античного мира. М., 2010; Уильямс С. Диоклетиан. Реставратор Римской империи М., 2010; Дашков С.Б. Указ. соч. С. 89-93; Belser Z. Diocletianischen Christenverfolgung. Tübingen, 1891; Seston W. Dioclétien et la tétrarchie. Paris, 1946. Տես նաև Սարգսյան Ս.Վ., ԼՂՎ. աշխ., էջ 150: Այս էջանավոր ճակատամարտին անդրադարձել են նաև շատ այլ ուսումնասիրողներ: Տես՝ Մանանդյան Հ., Հ. Բ, էջ 148-150; ՀժՊ, Հ. II, էջ 83-84 և այլոց մոտ:

⁹⁶ Ավելի մանրամասն տես՝ ՀժՊ, Հ. II, էջ 62 և հար: Арутюнян А.Ж. Нисибин (Мцбин)-Мурук в античных и армянских источниках. Проблемы истории, филологии, культуры. М.-Магнитогорск-Новосибирск, 2015, № 4. С. 85-91.

կամայականություն, այլ հեղինակը առաջին հերթին հենվելով Փավստոս Բուզանդի կողմից հայտնած վկայությունների վրա հարցը քննարկում է միայն ռազմա-ստրատեգիական տեսանկյունից: Նրա խնդիրն է բացահայտել, թե այդ պահին ի՞նչ է մտածել հայոց բանակի սպարապետ Վաչե Մամիկոնյանը: Այս ճակատամարտը, ինչպես վկայում են պատմիչներ Փավստոսը և Խորենացին ավարտվել է մեր գորքի փայլուն հաղթանակով ⁹⁷:

Փավստոսը գտնում է, որ կարևոր դեր ունեցավ այն, որ հայերը հարձակվեցին կրոնական ծեսը կատարելու պահին: Օշականի տեղանքի մանրագնեին ուսումնասիրությունից հետո Ս.Վ. Սարգսյանը եկել է այն եզրահանգման, որ առանց որոշակի ստրատեգիայի կիրառման այդ ճակատամարտում հաղթելն ուղղակի անհնարին կլիներ: Վաչե սպարապետը նախապես փակել է տվել այն ճանապարհը, որտեղով թշնամին կկարողանար նահանջել և դուրս կգար Քասախ գետի ձորը: Սպարապետը դեկավարել է այն ջոկատը, որը դուրս է եկել թշնամու թիկունք, իսկ հիմնական հարվածը հասցվել է կենտրոնում ⁹⁸: Ահա հենց այս ստրատեգիական պլանն էլ սպառնովել է հայերի լիակատար հաղթանակը Սանեսանի զորքի նկատմամբ: Այս պատերազմը, ինչպես արդեն նշվեց, կազմակերպվել, հրահրվել էր Շապուհ II-ի կողմից: Սա 337թ. էր, իսկ 338-ին, առանց պատերազմ հայտարարելու՝ արդեն Շապուհն հարձակվեց Հայաստանի վրա: Դա պատերազմ էր նաև Հռոմի դեմ, քանզի Շապուհի պահանջն էր հետ վերադարձնել 298թ. Հռոմին հանձնած տարածքները, որը պատմագիտության մեջ ստացել է Անդրտիգրիսյան երկրամասեր անունը: Այս պատերազմը ստացել է Հայ-հռոմեա-պարսկական 30-ամյա պատերազմ անվանումը (338-368թթ.), բայց նրա եզրափակիչ

⁹⁷ Տես՝ Փավստոս, III, 7; Խորենացի, III, 9; նաև՝ Սարգսյան Ս.Վ., ԼՂՎ. աշխ., էջ 152:

⁹⁸ Տես՝ Սարգսյան Ս.Վ., ԼՂՎ. աշխ., էջ 156:

էտապը երբեմն նաև անվանում են Հայ-պարսկական Քառամյա պատերազմ (364-368թթ.):

Ս.Վ. Սարգսյանը իրավացիորեն, սկսված պատերազմը կապում է նաև Հայաստանի ներսում տեղի ունեցող քաղաքական գործընթացների հետ: Խոսքը վերաբերում է դասակարգային պայքարին, որ տեղի էր ունենում այդ օրերին Ս. Հայրի թագավորությունում: Դա պայքար էր իշխող ստրկատիրական վերնախավի և ծնունդ առնող ավատատիրական խավի միջև: Այս պայքարն իր բոլորքման զագաթնակետին հասավ IV դ. կեսերին, որն էլ ապագայում հանդիսացավ Արշակունիների հայոց թագավորության կործանման, ապա և անկման հիմնական պատճառներից մեկը⁹⁹: Սկսված պատերազմի ընթացքում տեղի ունեցած կարևոր ճակատամարտերից էր նաև 345թ. Մինգարայի (հին հուն. Σίγγαρον) մարտը, որին առաջիններից մեկը, որ հատկացրել է հատուկ վերաբերմունք՝ ուսումնասիրության և քննարկման առումներով, հանդիսացել է Ս.Վ. Սարգսյանը¹⁰⁰: Վերջինս եկել է այն մտքին, որ այս ճակատամարտը պետք է քննարկել բաժանելով երկու էտապների, որի արդյունքում էլ Շապուհ II-ը ի վերջո կրեց ջախջախիչ պարտություն:

30-ամյա պատերազմը, ինչպես Հռոմի, այնպես էլ Պարսկաստանի համար ուներ մեկ գլխավոր նպատակ. երկու կողմերից յուրաքանչյուրն ցանկանում էր իր տիրապետությունն

⁹⁹ Арутюнян А.Ж. Феодализация древнеармянского государства в аспекте границ полномочий царей династии Аршакидов и феодал-нахараров. Вестник СПбУ. Серия 2. История. Вып. 1. Март 2008. С. 134-138.

¹⁰⁰ Այս սահմանային ամրոցի վերաբերյալ տես՝ Dio. XVIII, 22, LXVIII,6; Ptol. V,XVIII,2,9; Amm. Marc. XX,VI,1 և հաջ. Մինգարայի 345թ. ճակատամարտից առաջ հակառակորդ կողմերի ուժերի դասավորության վերաբերյալ մանրամասն տես՝ Սարգսյան Ս.Վ., Նշվ. աշխ., էջ 160-161; նաև ՇժՊ, Հ. II, էջ 93-96; Մանանյան Հ., Հ. Բ, էջ 178-183:

հաստատել Հայաստանում: Մեր հայրենիքի բուֆերային դիրքը, որի մագին մենք նշեցինք վերևում, ահա այժմ՝ հենց IVդ. էր, որ իրեն իսկապես զգացնել տվեց: Պատերազմը ուներ նաև կրոնա-պաշտամունքային դրդապատճառներ, քանզի Հռոմը ցանկանում էր, որ Հայաստանը շարունակի մնալ քրիստոնեական, իսկ Իրանը նպատակ ուներ մեր երկրում ամեն գնով տարածել զրադաշտություն: Հակասությունները և թշնամանքը երկու պետությունների՝ Հռոմի և Պարսկաստանի միջև իրենց զագաթնակետին հասան Հուլիանոս կայսեր արևելյան արշավանքի ժամանակ (Flavius Claudius Iulianus կամ Iulianus Apostata - 361-363թթ., կրան անվանում են Ուրացող, քանզի արգելեց կայսրությունում քրիստոնեությունը): Հայաստանի հարավային տարածքների շրջափակումից հետո, որտեղ ավերվեցին նաև քաղաքների մեծ մասն՝ համարյա ամբողջությամբ, այդ թվում նաև նախկին մայրաքաղաք Տիգրանակերտը, պարսիկները 363-364թթ. անցան իրենց վերջնական ծրագրի իրագործմանը: Նրանց խնդիրն էր ավերումների ճանապարհով Հայաստանում հաստատել իրենց տիրապետությունը¹⁰¹:

Արշակունյաց Հայաստանում այդ ժամանակ իշխում էր Տիրան թագավորին (338-350թթ.) հաջորդած Արշակ II-ը (350-368թթ.), որի ամենակարևոր, եթե ոչ ամենաառաջին օգնականն էր սպարապետ Վասակ Մամիկոնյանը: Ս.Վ. Սարգսյանը այստեղ հատուկ ուշադրություն է հատկացնում 364թ. Արարատյան դաշտավայրում տեղի ունեցած ճակատամարտին, քանզի հայերի պարտության դեպքում, Արշակունյաց Հայաստան անվանումը կարող էր անհետանալ այն ժամանակի աշխարհի քաղաքական քարտեզից (IVդ.): Ստեղծված իրավիճակում սպարապետ Վասակ

¹⁰¹ ՇժՊ, Հ. II, էջ 96-97; Մանանյան Հ., Հ. Բ, էջ 183; Фавроу К. Указ. соч. С. 226-229; Chastagnol A. Evolution politique, sociale et économique du monde romain de Diocletien a Julien: Lamise en place du régime du Bas-Empire (284-363). Paris, 1982.

Մամիկոնյանը ուներ միայն մեկ էջ՝ թշնամու ճամբարի վառ անսպասելի և անակնկալ հարձակում կազմակերպել գիշերը: Վասակը այդ պահին կարծես թե առաջնորդվում էր «Aut Caesar, aut nihil» թևավոր արտահայտության տրամաբանությամբ, քանզի իր գորբերի թիկունքում էր երկրի մայրաքաղաք Արտաշատը: Վասակի հանդգնությունն իրեն արդարացրեց և նա տարավ փայլուն հաղթանակ, բայց Շապուհ II-ը կրկին չհասանջեց Հայաստանի դեմ ուղղելով համարյա իր ողջ զինուժը: Հայերի վերջին ապաստան, Արշակի II թագավորից հետո, դարձավ Արտազերս ամրոցը, որտեղ պատերազմական գործողությունները հակառակորդի դեմ ղեկավարում էր Փառանձնե թագուհին¹⁰²:

Այս դեպքերից հետո՝ թշնամու դեմ պայքարելու համար ոտքի կանգնեց ողջ Հայաստանը և սկսված պայքարը ղեկավարեց գերեվարված, ապա սպանված Վասակ սպարապետի որդին՝ Մուշեղ Մամիկոնյանը: Ս.Վ. Մարգսյանը հանգամանալից վերլուծում է ինչպես 370թ. աշնանը տեղի ունեցած Ատրպատականի ճակատամարտը, այնպես էլ, ամենայն մանրամասնությամբ՝ 371թ. զարնանը տեղի ունեցած Ձիրավի նշանավոր ճակատամարտը (կամ Բագավանի, պատմիչ Ամմիանոսը այս մարտը անվանում է Վագարնետա – Vagabanta: Փավստոսը նույնպես անվանում է Բագավան և նշում, որ տեղակայված է եղել հայոց Բագրեստեղ գավառում)¹⁰³: Հռոմում միայն այժմ հասկացան, թե որքան լուրջ է իրավիճակը արևելքում և կայսր Վալենը (Flavius Julius Valens – 364-378թթ.) անմիջապես գորբ ուղարկեց Հայաստան, որը ղեկավարում էր Տերենցիոս

գործաբանանառարը: Մանրագնկին վերլուծելով մատենագիրների երկերում պահպանված վկայությունները առաջիններից մեկը պատմագրության մեջ հենց Ս.Վ. Մարգսյանն էր, որ հանգեց իրավացի եզրահանգման. այն է հռոմեական բանակը գտնվելով Ձիրավի դաշտում, այնուհանդերձ ռազմական գործողություններին չի մասնակցել: Այլ կերպ, հռոմեացիները ունեցել են «դիտորոյի», «հանդիաստեսի» կարգավիճակ: Նրանք սպասել են, թե ինչպիսի՜ էջ է ունենալու կռիվը¹⁰⁴, որ, երևի միայն հայերի պարտության դեպքում միջամտեն: Ս.Վ. Մարգսյանը գտնում է նաև, որ հռոմեացիները կռվի մեջ մտան այն պահին միայն, երբ պարսիկները սկսեցին անկանոն նահանջել¹⁰⁵:

Ս.Վ. Մարգսյանը առաջիններից մեկն էր հայ պատմագրության մեջ, որ մանրամասնորեն քննարկեց և վերլուծեց «Ձորանամակ» (ռուս. Войсковое письмо, Войсковая бумага; անգլ. Register list) սկզբնաղբյուրը՝ Ն.Գ. Ադոնցից հետո: Հարկավ, Ն.Գ. Ադոնցը պետք է լիներ առաջինը, քանզի սկզբնաղբյուրը հայտնաբերվել էր նրա կողմից: Այն, որ Ն.Գ. Ադոնցը այն ուսումնասիրել և վերլուծել է հրաշալիորեն՝ կասկածանք չի հարուցում և ոչ մեկի մոտ: Մակայն Ս.Վ. Մարգսյանը այն դիտարկում է զինվորականի «աչքերով»: Վերջինս գտնում է, որ IV դ. վերջերին հայկական նախաքարական գործի թվաքանակը հասել է 86հազ. (նրանցից 49-50 հազ. ծառայել են հեծելազորում), իսկ երկրում կառավարող Արշակունիները ունեցել են 36հազ. բանակ: Նա նաև քննարկում է, թե որքա՜ն բանակ կարող էին ունենալ չորս բոլշխներից

¹⁰² Արտազերսի հերոսական պաշտպանությունը մանրամասն նկարագրված է ոչ միայն հայ մանեագիրների, այլև հռոմեացի պատմիչ Ամմիանոս Մարկելլինոսի կողմից: Տես Խորենացի, III, 35; Փավստոս, IV, 55; Amm. Marc. XXVII, XII, 1-18; Մանանդյան Շ., Շ. Բ, էջ 195-197 և հայց; Дашков С.Б. Указ. соч. С. 101-103.

¹⁰³ Տես՝ Amm. Marc. XXIX, I, 1-3; ԺԳ, շ. II, էջ 102-103.

¹⁰⁴ Տես՝ Խորենացի, III, 37; Փավստոս, V, 4; Amm. Marc. XXIX, I, 1-3. Այս կապակցությամբ տես նաև՝ Մարգսյան Ս.Վ., Նշվ. աշխ., էջ 170: Այս քարտեզում հեղինակը պարզաբանում է ուժերի դասավորվածությունը արդեն տեղի ունեցող ճակատամարտի պահին: Տես նաև Մանանդյան Շ., Շ. Բ, էջ 228-230 և հայց:

¹⁰⁵ Տես՝ Մարգսյան Ս.Վ., Նշվ. աշխ., էջ 171:

